# ՑՈՒՑԱԿ

# ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐՆԵՐԻ

## ԹԻՖԼԻԶԻ ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ

ԿԱԶՄԵՑ

**ՍՏԵՓԱՆ ԿԱՆԱՅԵԱՆՑ**

ԹԻՖԼԻԶ 1893
ՇԱՐԱՁԷԻ ՏՊԱՐԱՆ

CATALOG

DER

# ARMENISCHEN HANDSCHRIFTEN

DES

ARMENISCHEN NERSISIAN SEMINARS ZU TIFLIS

VON

**STEPHAN KANAJEANZ**

TIFLIS 1893
BUCHDRUKEREI SCHARADZE.

Дозволено цензурою. Тифлисъ, 4 сентября 1893 года.

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

## Ա.

Հայերէն ձեռագրները Հայոց ազգի պէս ցրուած են աշխարհիս զանազան կողմերը, սկսեալ Կալկաթայից մինչև Լոնդոն, Պետերբուրգից Բաղդատ։ Եւրոպայի քաղաքներում փոքր ի շատէ մի յայտնի մատենադարան չէք գտնի, ուր գէթ մի քանի ձեռագրներ չլինէին։

Որքան քաղաքակիրթ պետութեանց մէջ ընդմիշտ ցանցառ բնակութիւն հաստատած Հայերը մատնուած են, վաղ թէ ուշ, կորստեան վիճակի, այնքան աւելի ապահով է ձեռագրների ապագան, ուր դասաւորուած և ցուցակագրուած մնում են և դեռ երկար և շատ երկար անկորուստ կը պահպանուին։

Սակայն ինչպէս որ Հայ ազգի մեծամասնութիւնը տակաւին իւր հայրենի երկրում է մնում, այնպէս էլ ձեռագրներն են. որոնք իւրեանց տէրերի նման դժբախտաբար կը վիճակուին անդարձ կորստեան, եթէ վաղօրօք շուտափոյթ ճար չտեսնուի։

Արդէն կարողենք տխուր վստահութեամբ համարձակ ասել, որ մեր նախնի մատենագրների երկերից շատերն անդառնալի կորած են և հազիւ թէ մի օր ի յայտ գան. և զարմանալի չէ, երբ մի կողմից կարող իշխանութիւնն և անձեր հոգ և խնամք չեն տանում, միւս կողմից ժողովրդի տգիտութեան շնորհիւ դեռ այսօր էլ մեր նախնեաց ոսկեծղի մատեանները հետզհետէ փչանում են։ Որքան նահապետական տներ կան Ռուսաց-հայաստանի գիւղերում, ուր ձեռագրներ բարձի թողի տան մի անկիւնում, «ակնատի» մէջ, երեսի վրայ քցուած, վերջի վերջոյ եղի «պուլիկի», պանրամանի, աղամանի և «կճուճների» «բերնըկալ» են դառնում։

Վատթար ևս է Թուրքիայում առհասարակ և Տաճկահայաստանում ի մասնաւորի, ուր երկար տարիներ ճամբորդած և կեանքը մաշած Վարագայ ուխտի միաբան արժանապատիւ Արիստակէս վ. Տէվկանցը հետևեալ տխուր և սրտաճմլիկ նկարագրութիւն է անում իւր Հայերգի Նախերգի մէջ։

«Իրաւէ որ մենք շատ, ու շատէն շատ ոսկեծղի անուններով պճնուած խումբեր ունեցեր և ունինք դեռ ևս, այլ սակայն ո՞ւր է իրենց գործն ու փորձ, ո՞ւր է իրենց արիքն ու բարիք, արդիւնքն ու արդասիք. ո՞ւր են մեր արդի գրական հերոսներու ձեռնարկն ու բաստ. և ո՞ւր են մեր ազգասէրներ, որ եղբայրական ձեռք առն, ուժ տան, սիրտ տան մեզուաջան մշակներուն, որ մեր նախնեաց ընտիր ընտիր ձեռագիր մատեանները հաւաքեն, կենտրոնացնեն, տեղ տեղ գրադարաններ հաստատեն, որ օտարն չտանէ զանոնք և իրեն անձնական շահուն չգործածէ. և նոցա պարունակութեան էական կէտերն ըստ քմաց չխեղաթիւրէ։ Քանի սարի յառաջ Կ. Պոլիս գտնուած միջոցիս Միհրդատեանցի հարիւրաւոր ձեռագիրներն տեսած եմ. այժմ նա մեռած է. ո՞ւր է իւր գրքերն...։ Ժամ մ'առաջ Գլակայ վանք նոյնպէս շատ հատորներով հին ձեռագիրք կա-

յին, վերջերս ես հոն դիպեցայ, հատ մի չկար։

«Ուր թողունք հին Հայաստանի բազմաթիւ գաւառներ, և անթիւ նորա ամէն մի գիւղերն, ուր սպասած էն աւելի գրեանք կան, որ երթալով իսպառ պիտի փչանան։

«Մեր ուխտի եղբայրներէն տէր Ղևոնդ վ. Փիրղալէմեան, որ քանիմ տարի առաջ Վանայ սահմանին մէջ Բէլու անուն գեղ գնալով ձեռագիր գրեանք տեսեր եկեղեցին դրուած մեծ վանդակով, և նոյներու յիշատակարաններ գրած էր, ուր կային և իմ մասնաճուղիս վերաբերեալ շատ հատուածներ, այս համար գնացի որպէսզի հաւաքեմ, բայց աւա՜ղ երկու կտոր ձեռագրէն աւելի բան չկային, (Նարեկ և Սմաւուրք) սպառուած էին, ի շարս որոց կպատմէ յիշեալ Կ. Ղևոնդ որ մագաղաթեայ երկաթագիր Ագաթանգեղոս մի կար, որոյ մէջ դաշանց թղթի գիծմ' անգամ չկար և այլ'...։

«Ես որ Տաճկաստանի մէկ մաս, և Հայաստանի գրեթէ մեծ մասն ճանապարհորդութիւն ըրած եմ կրկնակի կերպով և կըրկին պաշտօնով, ի մօտոյ շատ լաւ նկատած եմ որ ազգային ձեռագիրներ ետ ընդ ետ մաշելու, կորսուելու վերայ են, և եթէ տակաւին իրենց նախնի դրութեամբ մնան, թերևս քառորդ դարէն ետք մէկ հարիւրեկորդն չի մնար։ Զի հուր ի սիրտ ստիպուած եմ ասել որ, յականէ յանուանէ մէկ-երկու յիմարներ կճանաչեմ, որք հարիւրաւոր ձեռագիրք մեռեալներու հետ ի շիրիմ թաղած, և որպէս բարեպաշտական գործ մի համարելով, կազմեր քակուած գրքեր տարեր, թաղեր են ի լեռ և ի կղզիս որ այս կողմ այն կողմ չցրուեն, ու իրենց բարեպաշտ զգացման կամ հաւատքին չդիպչեն։ Քանի քանի տեղ, քանի քանի գտնուած նկարք, պատկերք և թռչնագիրներ, տղայոց ձեռք կտրտուած խաղալիք էին եղեր։ Ա՜հ չեմ կրնար սրտիս ծալքերն բանալ, մորմոք զիս կը մեռցունէ, զի մեր անդարմանելի և անդառնալի վնասներ նկատելով կեանքս կը շղքիանայ եռալով ի տապ սիրոյ գեղեցկութեան նախնի հարց հատընտիր հնութեանց, որոնք տեսնողի ուշք կքաղեն, խելքն կխլեն իրենց կիրթ ու փափուկ ճաշակովն, որոնց նկարն ու պատկերք, գիրն ու փափուկ գրիչ գիտեն վստահ կերպով մրցել դարուս ամենաընտիր վրձիններու հետ, իրենց հազարամեայ հնութեամբ, և անխնամ դրութեամբն իսկ, միանգամ և միշտ յաղթութեան դափնին իրենց կողմ շահելով, ի վարձ իրենց անմահ արհեստին։ (Հայերգի նախերգ. էջ Գ—Ե։ Թիֆլիս 1883)։

Այս չարեաց ինչպէս և մեր այլ շատ ազգային պակասութեանց դարմանը կարող էր անել գլխաւորապէս մեր հոգևոր իշխանութիւնը։ Ս. Էջմիածնայ այժմեան կառավարիչները, երանի՜ թէ առհասարակ հետևելով երջանկայիշատակ Գէորգ դ. ուսումնասէր և հայրենասէր հայրապետի շաւղին, ժողովէին մեր վանքերից կարևոր ձեռագրները Ս. Էջմիածին՝ փոխանակ 1892-ին մայիսին դէսից դէնից հարկաւոր վարդապետներ, այժմ էլ վարդապետացուներ հաւաքելու։ Իսկ Թուրքիայում Կ. Պոլսի պատրիարքարանը մէկ-երկու կենտրոններ ընտրելով Տաճկա-Հայաստանում զորօրինակ Վարագ և Ս. Կարապետ, փոքր Ասիոյ նահանգներում գտնուածները Կ. Պօլսի պատրիարքարանը հաւաքէին. և Թուրքիոյ այլ գաւառներինը Երուսաղէմի Ս. Յակովբեանց վանքը։

Այլև ցանկալի կլինէր որ Հայոց լուսաւորութեան և բազմամարդութեամբ կենտրոն դարձած քաղաքներում Կ. Պօլսում և Տփխիսում, առաջնում անմահ Ներսէս պատրիարքի անունով հիմնուած Ներսիսեան վարժարանը, երկրորդում Ներսէս Ե. աշտարակցու ձեռակերտ Ներսիսեան դպրանոցը գուն գործէին իւրեանց կողմից աւարտած և հետզհետէ աւարտող սաների ձեռքով և ջանքով մեր գիւղերում աստանդ ցրուած ձեռագրները հաւաքել։ Նոյնը կարող էր անել Կարնում Սանասարեան վարժարանը։

Մասնաւոր անհատներ շատ կան զանազան տեղերում, որոնք այսպէս թէ այնպէս տէր են դարձել բաւական հայերէն ձեռագրների. դիւրին կլինէր վերոյիշեալ հաստատութեանց մասնաւոր վարձատրութեամբ ձեռք բերել։ Մենք համոզուած ենք որ սոցանից շատերը և նոյն իսկ նուէր կըտան այդ հաստատութիւններից

մէկին կամ միւսին, եթէ համոզուին որ՝ չեն կորչելու։ Քանի՜ քանի՜ մարդիկ կան, որոնց մօտ մէկ երկու ձեռագրներ եմ տեսել. և երբ առաջարկում էի վերոյիշեալ հաստատութեանց մէկին ուղարկել, ինձ պատասխանում էին «ինչո՞վ կարող էք նրաշխաւորել, որ այնտեղ չի կորչի և աւելի ապահով է»։

Երաշխաւորութիւն և ապահովութիւն են ուզում ահա նոքա, որոնք սիրով իւրեանց ձեռագրները վերոյիշեալ հաստատութեանց նուիրել կը ցանկային. և ամենայն իրաւամբ պէտք է պահանջեն այն հաստատութիւններից, որոնց կոչումն ու պարտքն է ձեռագրները ժողովել և պահպանել. որովհետև բաւական չէ միայն գիւղերից և մասնաւոր անհատներից ձեռագրներ հաւաքել, դիզել, անխնամ թողնելով, ուր կորուստից և կողոպտումից ազատ չեն։

Ահա որպէս զի ձեռագրները մի կողմից աւելի ապահով վիճակի մէջ լինեն, միւս կողմից դիւրութիւններ դրուին մեր նախնի մատենագրութիւն ուսումնասիրելու, անհրաժեշտ էր անշուշտ ունենալ բոլոր հայերէն ձեռագրների գիտական, մի ընդհանուր, մայր ցուցակ։

Ուստի գեղեցիկ է այն միտքը, որ Վիեննայի Մխիթարեանները յղացան, և մէկ երկու տարի է որ՝ ամենայն ճիգ թափում են և ջանք չեն խնայում իրագործելու նոյն գովելի գաղափարը։

Բայց ի հարկէ ցուցակն ևս շատ չօգնի ձեռագրների պահպանութեան և գրականութեան բարգաւաճման, եթէ կանոնաւոր վարչութիւն և եւրոպական բարեկարգ մատենադարանների կարգ ու կանոնը չմտցուի և մեր մատենադարաններում։ Այնպէս չըպատահի այլ ևս այս ինչ կամ այն ձեռագիրը չկամենալով խնդրողին տալ, պատրուակեն թէ՝ պահարանի բանալիքը կորել է, ինչպէս անում են Վենետկի Մխիթարեանները. և կամ անհեթեթ գումարներ պահանջեն, իբրև գրաւական և այն էլ դեսպանատան միջոցով, չգիտեմ թէ երաշխաւորութեամբ, թէ երկուսով էլ հանդերձ, մի աննշան ձեռագրի համար, հակառակ Եւրոպայի մատենադարաններում կարգ դարձած գեղեցիկ սովորութեան, երբ միմեանցից ձեռագրներ են խնդրում, ինչպէս որ վարուեցան Վիեննայի ուսումնական Մխիթարեանները Բեռլինի կայսերական մատենադարանի հետ. և կամ օտարներին մատենադարանի բանալիքն անգամ յանձնեն իսկ հային օտար (° ˘ °) անուանելով հակառակ ամենայն իրաւանց և արդարութեան մատենադարանի դռներն առաջը փակեն, ինչպէս արին Ս. Էջմիածնում։ Տէ՛ր, դու փրկիր մեզ այսպիսի կարգապահներից։

## Բ.

Այն ինչ որ մենք իբրև ուսանող Վիեննայի Մխիթարեանների առաջորկութեամբ չէինք կարող յանձն առնել կատարել, այն է աշխատակցել իւրեանց օգտակար ձեռնարկութեան՝ կազմելով Գերմանիայում եղած հայերէն ձեռագրների ցուցակը, ուրախ ենք որ այսօր Ներսիսեան հոգևոր դպրանոցի գրատան հայերէն ձեռագրների ցուցակը կազմելով՝ կարող ենք մերովսանն մասնակցել այս օգտաւէտ գործին։

Եթէ մեզ յաջողուի, մտադիր ենք ապագայում հետզհետէ Տփխիսի բոլոր հայերէն ձեռագրների ցուցակը կազմել, որոնց թիւը մօտ 600-ի, իսկ ըստ ոմանց մինչև հազարի է հասնում։

Ներսիսեան հոգևոր դպրանոցի գրատան հայերէն ձեռագրների ցուցակը կազմեցինք մեր ուսուցիչ և բարեկամ նոյն դպրանոցի այժմեան տեսուչ մեծապատիւ պ. Կ. Կոստանեանցի առաջարկութեամբ *), որն այժմ լոյս է տեսնում միևնոյն դպրանոցի յարգելի հոգաբարձուների որոշմամբ։

Ներսիսեան Դպրանոցի մատենադարանը շատ աղքատ է ձեռագրներով, որովհետև դպրանոցն ինքն առանձնապէս նպատակ չունենալով ձեռագրներ ժողովել, ուշք չէ դարձրել ցարդ այս մասին. ուստի եղած-

---

*) Թէ Կ. Կոստանեանցին և թէ նորա օգնական և գրադարանապետ պ. Ա. Մանդինեանցին յայտնում ենք մեր խորին շնորհակալիքը մեր աշխատութեան ժամանակ մեզ ընձեռած դիւրութեանց համար:

ներն էլ կամ նուէր են և կամ պատահաբար գրատուն մտած։

Բացի այդ որ մատենադարանից երբեմն երբեմն անյայտացել են գրքեր, որոնք յաճախ Տփխիսի կիրակնօրեայ տօնավաճառին շուկայում և հնագրախանութներում (antiquariat) ի վաճառ են հանւում, հաւանօրէն նոյն վիճակի են ենթարկուել և ձեռագրները։

Հաւաստողներ կան որ գրատունը քառասուն և հինգ, իսկ ոմանք թէ մինչև երեք հարիւր ձեռագիր է ունեցել, բայց մենք գտանք միայն 30 հատ. և մի տաղարանի մնացորդ էլ վերջը պ. Ա. Մանդինեանից ստացանք, որը սակայն պէտք է այստեղ շեշտել, գրատանը չէր պատկանում։ *)

Երեսուն և մէկ ձեռագրների, որոնցից շատերն իսկապէս ասած ձեռագիր չեն, հնութիւնը հասնում է ԺԹ—ԺԵ դարը։ Սոցանից ամենահինը կրում է 1405 (Թ. 18) և նորագոյնը 1854 (Թ. 29) թուականը։ Տասն և ութ ձեռագրի ժամանակը ճիշտ որոշ է յիշատակարաններին կամ յիշատակագրութեանց նայելով, որ են.

| Դար | Տարի | Թիւ |
|---|---|---|
| ԺԵ | 1405 | 18 |
| ԺԶ | 1505 | 2 |
| ԺԷ | 1624 | 30 |
| » | 1626 | 12 |
| » | 1649 | 14 |
| » | 1676 | 3 |
| ԺԸ | 1712 | 26 |
| » | 1758 | 6 |
| » | 1769 | 1 |
| » | 1772 | 20 |
| » | 1798 | 27 |
| ԺԹ | 1812 | 7 |
| » | 1820 | 5 |
| » | 1828 | 8 |
| » | 1831 | 17 |
| » | 1837 | 23 |
| » | 1843 | 25 |
| » | 1854 | 29 |

Իսկ մնացեալ 13 ձեռագրի ժամանակն որոշեցինք ի հարկէ միայն մերձաւորապէս, գլխաւորաբար ըստ հնագրութեան (paleographie), որով կստանանք հետևեալ տախտակը.

| Դար | Թիւ |
|---|---|
| ԺԶ դարից առա՞ջ | 13 |
| ԺԷ դարից ոչ առաջ | 11 |
| ԺԷ | 15 |
| » | 16 |
| ԺԷ—ԺԸ | 31 |
| ԺԸ | 10 |
| » | 9 |
| » | 22 և 22ա |
| ԺԹ | 4 |
| » | 19 |
| » | 21 |
| » | 24 |
| » | 28 |

Ներսիսեան հոգևոր դպրանոցը շուրջ 70 տարի գոյութիւն ունի, իսկ թէ գրատունը երբ է հաստատուել, չենք կարող հաւաստի որոշել։ Աւելի դժուար և անհընարին եղաւ իմանալ թէ որ ձեռագիրն երբ է մտել մատենադարան, որովհետև այժմեան գրադարանապետը չկարողացաւ այս մասին տեղեկութիւն տալ մեզ։ Միայն թէ հաստատ կարելի է ասել որ՝ 4 ձեռագիր Թ. 4, 7, 17 և 26 որոնց ներսի կողմերին կպցրած տոմսերի վրայ տպագրուած է «Աղէքսանդր Ղազարեան Թահիրեանց», ինչպէս համեստաշուք կոյս Թահիրեանից իմացանք, իւր հօր, Աղէքսանդր Ղազարեան Թահիրեանի, մահուանից 1890-ից յետոյ է մտել դպրանոցի մատենադարանը, հանգուցեալի բոլոր գրքերի հետ ի միասին։ Թ 19 մատենադարանին նուիրել է Ներս. դպրանոցի 5-րդ դասատան աշակերտ Աւ. Ապրէսեանց, 1892 ամ. 29 փետր.։ Թ 31 տաղարանի մնացորդն ստացանք ցուցակն աւարտելուց յետոյ 1893 ամ. յունիսին պ. Ա. Մանդինեանից. իսկ մնացեալների համար ոչ մի տեղեկութիւն չկայ. բայց հաւանական է կարծել որ սոքա վերոյիշեալներից էլ առաջ են մատենադարան մտել։

*) Յուսանք որ ցուցակի կազմուելուց և ապագրուելուց յետոյ կանոնաւոր վարչութեան ներքոյ այսուհետև այս տեսակ ամբարշտութեանց առաջ կառնուի:

Արդէն ասացինք որ դպրանոցն առանձին նպատակ չունեցել ձեռագրներ ժողովելու, այլ պատահական կերպով են ձեռք բերուել և ոչ ընտրովի. ուստի և առանձին նշանակութիւն չունին, ըստ մեծի մասին կրօնական բովանդակութիւն ունեցող, մանաւանդ մեկնաբանութեան և առհասարակ եկեղեցական գրականութեան են վերաբերում։ Սակայն ուշադրութեան արժանի են թ 1, 12, 26, 30։ Մեր միջնադարեան եկեղեցական և աշխարհիկ գրականութեան համար առանձին նշանակութիւն կարող եղ ունենալ թ. 1-ի բ. մասը. թ. 2 և 31։

Գեղարուեստական առանձին արժէք ունեցող ձեռագրներ չկան. եղածներից էլ ցաւում ենք որ հնար չունեցանք հատ ու կտոր զարդերից մի խորանազարդի և մէկ-երկու լուսանցազարդի լուսատիպ նկարները ցուցակիս մէջ դուրս բերել։

Մեր այս ցուցակը կազմելիս. դիտելենք ա). 1 Մեծութիւն. 2 կազմ. 3 վիճակ. 4 նիւթ. 5 թերթ. 6 դատարկ. 7 տող. 8 գիր խորագիր, վերնագիրև սկզբնագիր. 9 զարդ խորանազարդ և լուսանցազարդ. 10 պատկեր. 11 թուական. 12 գրիչ. 13 տեղ. 14 յիշատակագրութիւն (յիշատակարան և յիշագրութիւն). 15 տեղեկութիւն ընդհանրապէս ձեռագրի մասին։ Այս մասն համառօտ ենք անցել. թէպէտև այժմ եւրոպայում բանն աւելի ևս կարճ են կապում։ Որ ձեռագիրը այս կամ այն մասը չունեցել, աւելորդ ենք համարել առանձնակի յիշել, և ամենևին յառաջ չենք բերել, ինքն ըստ ինքեան հասկանալի համարելով։ Միակ բացառութիւն կարելի էր անել յիշատակարանի համար, որի և չլինելը յիշելն կարևոր էր. բայց այս պակասը լրանում է ձեռագրերի ընդհանուր տախտակով, ուր մենք յիշատակարանին առաձին սիւնակ ենք նուիրել։ *)

բ) Գրքի բովանդակութիւնը, որն իբրև կարևորագոյն մաս ընդարձակօրէն յիշելենք, այնպէս որ թերևս ոմանց տեղ տեղ չափազանց թուի։

գ) Առանձին ուշք ենք դարձրել յիշատակագրութեանց (յիշատակարան, լուսանցագրութիւն, յիշագրութիւն) և համարեա բոլորն էլ ամբողջովին յառաջ ենք բերել, զգալով սոցա կարևորութիւնը։

Այս ցանկի մէջ հարկաւոր համարած տեղերում մէկ-երկու մանր-մունր ծանոթութիւններ ենք յաւելացրել։

Ի վերջոյ կարևոր ենք համարում ձեռագրների վրայ մի համառօտ ակնարկ ձգելու համար, իւրաքանչիւրի մասին առանձին առանձին ընդարձակ խօսելուց յետոյ, յառաջաբանին կցել ձեռագրների ընդհանուր տախտակը։

*) Վեննայի արժանապատիւ Մխիթարեան երկու միաբան հ. Յ. Տաշեան եւ հ. Գ. Գալեմքարեան. ինչպէս եւ Տրդատ վ. Պալեան իւրեանց կազմած ցուցակների մէջ յիշում են եւ իւրաքանչիւր ձեռագրի տիրը. բայց մենք աւելորդ համարեցինք: Սակայն եւ այնպէս ով որ մեր ձեռագրների վերաբերութեամբ այս մասին հետաքրքրուի, տեղեկութեանց եւ յիշատակագրութեանց մէջ կարող է որոնել:

# ՁԵՌԱԳՐՆԵՐԻ
## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԱՆԿ

| Թ. | Մատեան | Թերթ և մեծութիւն | Նիւթ | Գիր | Թուական | Գրիչ | Տեղ | Ցիշատակարան |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Պատմութիւն Աղէքսանդրի և Աձնմանի. | 180 (22×16,3 սմ.) | Թուղթ | Նոտրագիր | 1218 | Ցարութիւն Դաւթեան | Անյայտ | Ունի |
| 2 | Գանձարան | 368 (19,5×13 սմ.) | » | Բոլորագիր | 1505 | Մխիթար | Անյայտ | Ունի |
| 3 | Մաշտոց | 98 (18×15,5 սմ.) | » | Բոլորագիր | 1676 | Ճուլոյենց Յակոբ | Տըլպխիղ | Ունի |
| 4 | Աղօթագիրք | 78 (18×10,7 սմ.) | » | Նոտրագիր | ԺԹ դար | Մինաս Սաղաթելեան Կամսարական | Արշարունիք | Չունի |
| 5 | Մեկնութիւն կաթուղիկէ եկեղեցւոյ | 52 (21,5×15 սմ.) | » | Նոտրագիր | 1820 | Նոտար Սարգիս Պօղոսեան | Կարին | Ունի |
| 6 | Մեկնութիւն Ոսկեբերանի, Եփրեմ | 579 (21×15 սմ.) | » | Նոտրագիր | 1758 | Անյայտ | Հիլպէ քաղաք | Ունի |
| 7 | Մեկնութիւն առակաց աւետարանի | 111 (23×16 սմ.) | » | Նոտրագիր | 1812 | Անտոն աբեղայ | Երուսաղէմ | Ունի |
| 8 | Կերակուր քաջանայից | 41 (20,5×16,7 սմ. | » | Նոտրագիր | 1828 | Մովսէս դպիր Կիրակոսեան | Կարմիր վանք Բարձր Հայք. | Ունի |
| 9 | Աստղաբաշխութիւն | 119 (15×10,5 սմ.) | » | Նոտրագիր | ԺԸ դար | Անյայտ | Անյայտ | Չունի |
| 10 | Նշանակութիւն կաթուղիկէութեան | 108 (17,2×10,5 սմ.) | » | Նոտրագիր | ԺԸ դար | Անյայտ | Անյայտ | Չունի |
| 11 | Գիրք վկայութեանց | 297 (16,5×10 սմ.) | » | Նոտրագիր | ԺԷ դարից առաջ | Աղէքսանդր | Անյայտ | Չունի |
| 12 | Ժողովածոյ | 303 (13×11 սմ.) | » | Նոտրագիր | 1626 | Ցիսայեայ եպիսկոպոս | Անյայտ | Ունի |
| 13 | Ժողովածոյ | 253 (17×12,4 սմ.) | » | Բոլորագիր | ԺԶ դարից առաջ | Անյայտ | Անյայտ | Չունի |
| 14 | Պարզատումար | 153 (11,5×8 սմ.) | » | Նոտրագիր | 1649 | Անյայտ | Անյայտ | Ունի |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 15 | [illegible] թին | [illegible] սմ.) | [illegible] | [illegible] գիր | [illegible] դար | [illegible] | [illegible] | [illegible] |
| 16 | Քարոզագիրք | 169 (23,5×16 սմ.) | » | Նոտրագիր | ԺԷ դար | Անյայտ | Անյայտ | Ջունի |
| 17 | Վարք ս. Գ. Լուսաւորչի | 128 (23×18,5 սմ.) | » | Շղագիր | 1831 | Աղէքսանդր Թայիրեանց | Տփխիս | Ջունի |
| 18 | Սաղմոսի մեկնութեան քաղուածոյք | 352(27×18սմ.) | » | Բոլորագիր | 1405 | Գրիգոր | Անյայտ | Ունի |
| 19 | Ն. Ասորւոյ Մեկնութիւն Յովհաննու | 115 (26,3×21 սմ.) | » | Շղագիր | ԺԹ դար | Անյայտ | Անյայտ | Ջունի |
| 20 | Մեկնութիւն առակաց աւետարանի | 43 (23×18,5 սմ.) | » | Նոտրագիր | 1772 | Մահտեսի Ստեփան | Պասրա | Ունի |
| 21 | Տեղեմաք | 268 (32×19,5 սմ.) | » | Շղագիր | ԺԹ դար | Անյայտ | Անյայտ | Ջունի |
| 22<br>22ա | Բառարան Անգլերէն-Հայերէն | 186+104(41×16,5 սմ.) | » | Նոտրագիր | ԺԸ դար | Անյայտ | Հնդկաստան° | Ջունի |
| 23 | Բանք ոսկիականք | 126 (34,5×22 սմ.) | » | Նոտրագիր | 1837 | Գրիգոր քահանայ Լօռու-Մելիքեան | Տփխիս | Ջունի |
| 24 | Ճեմարան մտաց | 144(34×21սմ.) | » | Նոտրագիր | ԺԹ դար | Գրիգոր քահանայ Լօռու-Մելիքեան | Տփխիս | Ջունի |
| 25 | Մեկնութիւն զանազան նիւթոց | 92(34+22սմ.) | » | Նոտրագիր | 1843 | Գրիգոր քահանայ Լօռու-Մելիքեան | Տփխիս | Ջունի |
| 26 | Գաւազանագիրք | 230 (33,5+22,5 սմ.) | » | Նոտրագիր | 1712 | Ա. Եւդոկիացին(°) Պունկիանոս | Ս. Էջմիածին | Ունի |
| 27 | Գիրք խոստովանական | 132(34+21սմ.) | » | Նոտրագիր | 1798 | Անյայտ | Աստրախան | Ջունի |
| 28 | Բառարան | 151)33+21սմ.) | » | | ԺԹ դար | Անյայտ | Անյայտ | Ջունի |
| 29 | Ա. Նարեկ. և Մեկնութ. Յովհան. աւետարանի | 103(35+22սմ.) | » | Շղագիր | 1854 | Ներսէս դպիր Տ.-Բարսեղեան Արզվեանց | Անյայտ | Ունի |
| 30 | Բիւզանդ. և Միքայէլ Ասորի | 61+2 (26,8+20,5 սմ.) | » | Նոտրագիր (հին) | 1624 | Անյայտ | Նախավկայի վանք | Ունի |
| 31 | Տաղարան | 16 (13,7+8,4 սմ.) | » | Նոտրագիր | ԺԷ—ԺԸ դար | Անյայտ | Անյայտ | Ջունի |

1.

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂԷՔՍԱՆԴՐԻ ՄԱԿԵԴՈՆԱՑԻՈՅ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՆՄԱՆՈՒԹԻՒՆ։

ՄԵԾՈՒԹԻՒՆ 22×16,3 սմ.։ —ԿԱԶՄ, խաւարաքարտ կաշեկազմ. մէջքի վերայ ոսկեզօծ նըրկարներ։ — ՎԻՃԱԿ լաւ։—ՆԻՒԹ թուղթ, կապտակոյն, անհարթ։ — ԹԵՐԹ 180. ա. էջ 118, բ. 238։—ԴԱՏԱՐԿ մի մի թերթ սկզբից եւ վերջից եւ էջ 1, 2. 117, 118. 234—238. 1—219 համարներ իւրաքանչիւր երես դատարկ թողած տեղեր՝ ապա պատկերներ նկարելու համար։—ԳԻՐ Նոտրագիր միասին 17,5×13,սմ.։—ԹՈՒԱԿԱՆ 1218 =1769։—ԳՐԻՉ Յարութիւն Դաւթեան։ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. էջ 115—116. 233։—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. կազմի մէջքի թերթերի վերայ գրուած է «գրչագիր Աստուածանմանութեան № 106» էջ 3 երկու տեղ եւ 234 մի տեղ «Ներսիսեան հոգեւոր դպրանոցի» մատենադարանի կնիքը։

### Մատեանս է

Ա.

Էջ 3—118. Գիրք որ կոչեցաւ Աստուածանմանութիւն շարադրեալ 'ի Պետրոսէ արգիւնաւոր յեպիսկոպոսէ Նախիջեւանցւոյ Աղամալեան ի սր. Էջմիածին։ 'Ի փառս մեծին Աստուծոյ և 'ի պատիւ Ամենօրհնեալ Սրբոյ կուսին Մարիամու Աստուածածնին և 'ի պարծանս մանկանցն սրբոյն Սիոնի մօրս սրբոյ։ Յորդորմամբ եղբարց ոմանց աշակերտաց գրոց սրբոց հետեւողաց ճշմարտասիրաց անձանց։ 'Ի յաւուրս գերիշխանութեան Հայրապետին մերոյ Սիմէոնի սրբազնագոյն կաթուղիկոսին, 'ի թուականի ՌՄԺԸ=1769.

Բ.

1. Էջ. 1—233. էջ 1. «Պատմութիւն մեծի աշխարհակալի, Աղէքսանդրի Մակեդոնացւոյ, կեանքվարուց քաջութիւն մինչ'ի վախճան նշանօք։ Իմաստունք եգիպտացւոց, երկրի և ծովու չափոյ հասեալ և զերկնից աստեղս թուեալ, աւանդեցին ամենայն աշխարհի.... և ինքն դիւթելով կոչէր զերկնային դեւս, և զաստուածս և մկրտէր 'ի լականն, և որ ի թշնամեացն գոյին 'ի վերայ՝ կործանէին. և բազում ամ թագաւորեաց խաղաղութեամբ։ Եւ ասացեալ եղև կաֆայս զայս.

Ով փուտ չըւեր Նեգդանեբոս
Որ թագաւորէիր յԵգիպտոս
Ոչ թէ հզօր ձեռամբ հարոս
Այլ լականաւըն Պոսիպոս
Գիտակ եղեր աըկար ակոս,
Ջհերդ և զմօրուսս ածեր ափսոս,
Փախստական լինես յաքսորս
Դիմեալ յամբշխան Ոլոմպիոս.

Սոյն ձեւով մինչեւ էջ 221 նախ կեղծ-Կալլիսթենեսի „Պատմութիւն Աղէքսանդրի" գրքից մի հատուած, ապա բովանդակութիւնը համառօտով, շատ էջեր բաց թողած, անշուշտ յետոյ պատկերներ նկարելու համար, ինչպէս որ վերջագրերից էլ երեւում է։

Վերջ էջ 220—221. «Այս է կատարումն ժամանակաց Աղէքսանդրի, ծննդեան և քաջութեան և թագաւորութեան, հանճարոյն և իմաստութեան, իրաւանց և դատաստանին, ողջախոհութեան և արիութեան, զոր վերին Նախախնամութեամբն վարեալ զկենցաղս վճարեաց զվախճանն . մահու հասարակաց» սորան հետևում է «Եւ թէ որպիսի փառնգից և աղէտս առաւելականս առացեալ է բարառնաբար Աղէքսանդրի ի հիւանդութեան իւրում» (Կափոյ յողբով): Ընտիր գոված երես բաղտ |Մեծ հանճարեղդ ամենամարդ| Հրմոագունից պարծանք և զարդ| Առատասիրտ ու միշտ զուարթ| Քո սէրն ի սիրտս եղև մակարդ| Զինչ զձուկն որ ընկնի կարթ |Արիւդ պայծառ լինի զէտ վարդ| Քո մանկութիւնդ մշտադարդ:

Պայծառ արեգակն ես դու 'ի գարնան աւուրքն 'ի նման |Որ շողն 'ի ծաղկունքն իջնու ու ծագէ լոյս զարմանական|. Նըման առիւծու ես դու որ իշխան է անվաւերական. |Աստուած պահապան լինի քեզ աջովն իւր տէրունական:

2. Էջ 151. Խոշորագիր «Ի Գրիգորիոս կաթողիկոսէ Աղթամարցոյ առ Ճըշմարիտ Աստուածն մեր».

Նախախնամութեան վերին դու շարժող երկնից կամարին,
Մի և անկարօտ անմահ անորակ անձն անմարմին.
Եւ հրամանաց քոց ահեղ ամենայն եղեալք հնազանդին,
Անշուշտ անհոգի ծառերս բանական ձայնիւ կուխօսին:

Ինձ թւում է որ այս՝ ոտանաւորի վերջի տունն է, որի սկիզբն է էջ 150
„Ասուն ու խոստն ծառքդ ի բագինս զարմանակերտ,
Այսօր օթեւանս կալաւ աքքայից մեծին հրաշակերտ են.“:

3. Էջ 221—232. Բարառնութիւններ ա) «Որպս Աղէքսանդր ինքն ասաց հիւանդութեան իւրում ըռնեալ դեղով: Աւաղ վըշտապահոս (հաս) տուգանաց տագնապիս տառապանաց տուայտեալ մարմնոյս.... էջ 223ի վերջը կայ «Դրիգորիսի»: Էջ 224 «Ազդեցէք ի տուն Պարսից ու ասէք հօրն իմ Դարեհի դուստրն քո եղուկ դարձաւ և լալոյ եղև արժանի...» բ) «Եթէ որպէս ողբըս ասաց տառապեալ մայրն Աղէքսանդրու Ողոմպիայ: Լացէք զիս մայրք մակեդոնացիք միամօր զաւակաց զմիամօրս առաւել քան զԹամուզ, և զգեղաշէն դուստրն Ցեփթայի...» գ) «Թէ որպիսի ողբս յօրինէր որ դուստրն էր Դարեհի Հռոքսիանէ կինն աշխարհակալին Աղէքսանդրի: Զնջեցաւ կտակ հիքոյս և թշուառահոյս անմահից ջոկք մարդ եղեալ լքին...:» դ) «Եւ թէ Նախարարքն և զօրքն որպիսի կական բարձեալ լան զթագաւորն իւրեանց: Եկայք ի միասին թագաւորք և իշխանք...» ե) «Եթէ ամենայն կեանք փառաց յաղթութեան և արիութեան նաև զվախճանըն Աղէքսանդրու նշանօք առ տէրն մեր զոր վերաբերեմք մարգարէութեամբ: Ապէնիաղ Աստուած բանն հայրական...» զ) «Եթէ որպիսի բանս խրատու խօսեցեալ հանճարեղն Աղէքսանդրէ: Բարեաց գործոց և քաջապէս....:

1. ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ էջ 233. Եւ արդ զայս այսպէս համեմատեալ միտս գտանեմք յոմանց զե զպատճառն գերագոյն պատմեցուք: Այլ յընթեռնելով զսա յիշման արժանի լիցի ի ձէնջ Խաչատուր Կեզառացին, զի ի յարմարումն սակաւ բանիցս յուռով աշխատեցայ. Նաև զհեթանոսական գրեալքն անմիաբան են և անվայելուչ ի վերոյ շաղկապաբայիւք որակացեալ և ի ներքոյ լուսնոտի կարծեօք և խաբէութեամբ որպէս և առ գրասիրաւն Պողոմէոսիւ անպատվեցաւ: Իսկ զայս պատմութիւնս աշխարհակալին Աղէքսանդրու զոր գրեցի իմով անարժան Յարութիւն Դաւթեանի ձեռամբս օրբագրեալ առընթեր սահելով երկու օրինակս. բայց ի տեղիս տեղիս բառ և բան անհամեմատք էին որ և որչափ իմ կարն էր նուաստագոյն ուղղելով գրեցի ուսմունք, բառք և բանք զորս վասն այլայլութեան գրողացն չըհասկացայ այնպէս գրեցի ստուգապէս ընդ համեմատ օրինակացն և ոչ աւելի կամ պակաս. սակս օգտի ինձ նուաստիս և այլ համբակաց, որք կամին օգտիլ 'ի Աղէքսանդրէ: Զի թէպէտ էր 'ի հին օրինակէ, այլ անյարմար և շաղփաղփ. վասնորոյ որչափ յայտնի է 'ի սմայ ընտրելի ընտրաղօրէն զի 'ի յընթեռնուլն իմասցին հռետիկոսք ու քարտուղարք

և ապա գիտասցեն զիմ աշխատանս 'ի սմա զոր լիապէս վաստակեցի։ Տէր մի յիշեր զմեղս... Եւն։

2. էջ 218 Զկենդանակերպս երկոտասան
Ճէին պատկեաց գիր և քսան
Ի քսանէ զերկուսն հան
Գտցես զԹիւ գրքոյս լման
Մաղթեմ զեղբայրդ գերապանծ
Ոյց մեծագին ծօնեմ զայս գանձ
Անախտ սիրով գաղափարեալ
Անթերիէ և յաւելուած։

## 2.

## ԳԱՆՁԱՐԱՆ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 19,5×13 *սմ.*—ԿԱԶՄ *տախտակեայ, հին կաշեկազմ:*—ՎԻՃԱԿ *ընդհանրապէս լաւ. վերջի թերթի վարի ծայրը մաշուած:*—ՆԻՒԹ *Թուղթ հաստ եւ հարթ:*—ԹԵՐԹ 368։—ՏՈՂ 17—19:—ԳԻՐ *բոլորագիր:*—ՎԵՐՆԱԳԻՐՆԵՐԸ *եւ* ՍԿԶԲՆԱԳԻՐՆԵՐԸ *կարմիր:* — ԽՈՐԱՆԱԶԱՐԴ *էջ* 1:—ԹՈՒԱԿԱՆ ՋԾԴ=1505: ԳՐԻՉ *Մխիթար:* — ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ *էջ* 732 — 736, 661: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ *էջ* 1 *ներքեւ կայ* «№ 194». *եւ էջ* 736 *մեզ ծանօթ «Ներ. հոգ. դպրանոցի» կնքադրոշմը:—Էջերի ներքեւ նշանակուած են այն անունները, որոնց նուիրուած են գանձերը: էջ* 38-*ից յետոյ թերթ է պակաս:*

### Մատեանս է

Գանձ եմ չափով և գովելի,
Ռոտեալ ձայն և ախորժելի.
Ի Գրիգորէ յառաջ եկի
Գծեալ մատամբ իքարտիղի
Զոր վերծանիմ յեկեղեցի
Բամից դասուց պաշ(տ)աւնէի
Ի տաւնս սուրբ յիշատակի
Իւին ծնօղի մաւր Աննայի

1. էջ 1—9. Գանձ Յովակ(իմայ) և և Աննայի։ Գոյին անեղիս գոյքն...»

ա. էջ 9—10. «Այսօր լոյս....» (ձայնանիշներով։)

2. Էջ 10—17. Նիկողայոս (Նիկողոսի Հայրապետին)։ Գաւազան ծաղկեալ...»

ա. էջ 17—18. «Տաղ։ Որ ի յեւթեանց...» ձայնանիշներով. որպէս են բոլոր գանձերից վերջն եկող տաղերը։

3. էջ 19—23. «Թադէոսի Բարդուղիմէոսի։ Գերարփի պայծառ...»

ա. էջ 23—24. Բարդօղիմէոսին։ Բանըն որ ի հաւրէ...»

բ. էջ 24—25. և Ստատիոսի։ Սուրբ և սրբարար...»

4. էջ 26—31. Սուրբ Յակոբայ. (մեծագաւռ գիմագրով)։ «Մեծահամբաւ անուն գովելի...»

ա. էջ 31—34. «Տաղ ի Մաթէոս վրդապտ(է)։ Մեծի հանդիսիսի...»

5. էջ. 34—38 «Գ. Իգնատիոսի հպ.։ Գոհաբանական ձայն...» վերջը պակասում է։

6. էջ 39—45. «Դաւթի և Յակոբայ» Սկիզբը պակաս է։

ա. էջ 45—47. «Տաղ Յովհաննէս վրդպտ(ի)։ Յիսուս լոյս ծագեաց...»

7. էջ 47—54. «Սրյն. Ստ. Նախ.(մեծատառ գիմագիր)։ Մեծ և հզօր անմահ...»

ա. էջ 54—56. «Տաղ ի տր. Ներսէսէ կլթղկ.։ Ի Խաչին տնկեալ որթոյն...»

բ. էջ 56—58. «Յորդորակ է։ Ի գաւազանէն Յեսեայ...»

8. էջ 59—71. «Գանձ սբ. առաքելոց Պետրոս և Պօղոսի։ Մխթր վրդպ.։ (Մեծատառ գիմագրով)։ Սբ. երրորդութիւնն, տեղծող զօրութիւն...»

ա. էջ 71—73 «Տաղն է։ Այսօր ցընծասցէ...»

9. էջ 73—79. «Գանձ Առաքելոցն բժից։ Խորհրդազգաց քո մարդեղութեանդ...»

ա. էջ 79—82. «Տաղ ի տր. Ներսէսէ։ Առաքեալք Աստուածորդոյն...»

10. էջ 82—88 «Գանձ. Պաղատման Գերանձառ...

11. էջ 88—99. Գանձիս գրեցայ ես
պիտանի
Բամեալ բանիւ ուրախալի
Ի Գրիգորէ գարշաղտեղի

Գըրեալ որդւոցն Զեբեդի
Որդւոց քուէրն Քրիստոսի
Բամից փրկչին Տեառն Յիսուսի.

Գրքի մէջ եւ այլ տեղեր գանձերի սկըզբում կան, տառնաւորներ որոնց սկզբնատառերը յօրում են „Գրիգոր“ անունը:

«Որդոցն Որոտման: Գեղապանծ լուսով...»

ա. էջ 99—101. «Տաղ ի տէր Ներսէսէ կաթողիկոսէ: Որդիքն որոտման, որք ի վերուստ...»

բ. էջ 101—109. «Յորդորակն է: Նոր լոյս յարփենոյն...»

12. էջ 102—112 «Գանձ: Բարսեղի Կեսարացոյ ի Մշ. վարդապետէ: Խաչաբարձ, արհի պանձալի...»

ա. էջ 109—110. «Տաղ. Մաշտոց վարդապետէ: Խոնարհիմք հոգով..»

բ. էջ 110—112. «Յորդորակն է, Մաշտոց վարդապետէ: Վանիչ ներհագին...»

13. էջ 112—119. «Գանձ. Ճրագալուցի Ծն.: Խընդութեան ձայն...»

ա. էջ 119—122. «Տէր Ներսէսի. Յորդորակ: Այսօր երկի...»

14. էջ 122—129. «Գանձ Ճրագալուցին. Յայտնութեան, ասացեալ Տէր Մխիթարա: Տարփումն ըղձալկան, տուչոր անձկական...»

ա. էջ 129—132. «Մեղեդի. անոյշ ասա: Նոր ծաղիկ բըխէ այսօր...»

15. էջ 132—137. «Գանձ Ծննդեան. առաջին: Թագըդ պանձալի...»

ա. էջ 137—140. «Տաղ ի Սըրկայ: Հըրճուիմք այսօր մեք...»

16. էջ 140—145. «Գանձ երկրորդ աւուր: Մաքուր և անբիծ, սբ. Աստուածածին...»

ա. էջ 145—147. «Տաղ ի տէր Ներսէսէ: Տէր փառաց անճառ ծնեալ...»

բ. էջ 147—149. «Տաղ անոյշ: Աստուածածին մայր լուսոյ...»

17. էջ 149—153. «Քարոզ. երրորդ աւուրն. Յովհաննու ծործորեցւոյ: Յամենայն ժամ աւրհնեմք զաւրհնեալ փրկիչդ...»

18. էջ 153—155. «Տաղ ի Սրիկ Կոստանդէ: Քրիստոս բանդ Հօր...»

ա. էջ 155—156. «Յորդորակ: է Ով զարմանալի խորհուրդ, այս մեծ յայտնեալ..»

19. էջ 156—161. «Հինգ աւուր. Գանձ ի Մաշտոցէ: Խնդա խորան Աստուծոյ բանին...»

ա. էջ 161—164. «Ի Սրիկ Կոստանդեայ: Կայր կոյսն ի յայրին...:» Ամէն չորս տուն հետ միասին(ին՞): Կրկնեալ առ Նոտա կրթական մտօք...»

20. էջ 164—168. «Գանձ վեց աւուր ծննդեան: Ցանեղական, լուսոյն խոնարհեալ, յերկնից իջեալ...»

ա. 168—169. «Մեղեդի Նարեկացոյն: Պարագրի անպարագրելի...»

բ. էջ 169—173. «Տաղ ի նոյն Նարեկացոյ: Աւետիս մեծ խորհրդոյ...»

21. էջ 173—179. «Գանձ ութն (աւուրն): Խորան փառաց, Աստուածային բանին ..»

ա. էջ 179—183. «Տաղ ի Նարեկացոյ: Աչքն ծով ի ծով ծիծաղ...»

Խօթը տող տառնաւոր ի «Գրիգորէ յայժ անպիտան:»

22. էջ 183—189 «Գանձ ութ աւուրն է: Գոչումն ըղձագին, գովեստ քաղցրրագին...»:

ա. էջ 189—190 «Յորդորակ. Տէր Ներսէսէ: Ստեղծօղ մանկանց...»

23. էջ 190 194 «Գանձ. Յովանու: Մեծապայծառ փառօք պանծալի, այսօր ցընծայ սբ. եկեղեցիս...»

ա. էջ 194—198 «Մեղեդի Սրիկ Կոստանդէ: Ի գասըս հրեղինաց...»

24. էջ 198—206 «Գանձ. (մի) Պետրոս հայրապետն և Աբիւսողոմի: Վերաւրհնեալ, գովեալ, վերնոցն սարսեալ...»

25. էջ 206—220 «Գանձ Սբ. Ճգնաւորացն: Բարձրեալ աչաւոր բան հօր գիմաւոր, բազմեալ հրաշաւոր...»

ա. էջ 218—220 «Տաղ Ճգնաւորացն: Անտոն, Անտոն, սոս անապատի, հովտանց, լերանց, աղբերականց...»

26. էջ 220—233 «Գանձ. Սբ Թագաւորաց: Համագոյական. հօր սահման և բան հոգւոյդ խնկական...»

27. էջ 233—246 «Գանձ. հայրապետացն սրբոց: Վսեմէ քո(յ)են, փայլըչականին...»

28. էջ 246—253 «Գանձ. Վահանայ.

ասա։ Գթացեալ քոյին, արքայդ երկնային...»

29. էջ 253—259. «Գա՛նձ. Սբ. Կիրակոս և մօրն։ Գերապայծառ արփիդ երկնային..»

30. էջ 259—263. «Գանձ Տեառընդառաջին։ Միասնական սբ. երրորդութիւն, բարերանեալ...»

ա. էջ 263—267. «Տաղ Տեառընդառաջի։ Մտեալ տաճարն...»

բ. էջ 267—270. «Տաղ երէկուն ասա։ Քրիստոս փառաց թագաւորն...»

31. էջ 270—277. «Գանձ. նին. (Ստանաւոր «Ի Գրիգորէ նուաստ ոգւով գծեալ բարտէզ թուխ գեղովս...»)։ Գոյիդ կատարեալ..»

32 էջ 277—282 «Գանձ, սրբոյն Սարգսի և Մարտիրոսի։ Մեծապայծառ փառօք զարդարեալ...»

ա. էջ 282—283 «Մեղեդի անոյշ։ Ի քէն աղէրսիւ հայցեմք...»

բ. էջ 283—284. «Յորդորակ. Զօրական զօրեղ փառօք...» (ստանաւոր).

33. էջ 284—289. «Ի Գրիգորէ յառաջ եկի
Գանձս գրեցայ սբ. Ագոմի...»

«Գանձ, սբ. Ագոմի. Գեղապանծ լուսով, գեղասքանչ գունով...»

34. էջ 289—296. «Գանձ Ոսկեանց և Սուքիասեանց։ Գանձ սիրոյ քոյին...»

ա. էջ 296—298. «Տաղ է։ Երջանիկ հոգիահրաշ երանելին սբ. Սուքիաս...»

35. էջ 298—312 «Գանձ. Թարգմանչաց։ Բարձրեալդ անքննելն. բնաւից լռութեամբ...»

36. էջ 312—321 «Գանձ. Ղեւոնդեանց և Վարդանանց։ Խրամատեալ, կանոնօրինի, հօր համայնից...»

(էջ 320 պկ. ձեռով մի գրութիւն)։

37. էջ 321—335 «Գանձ, սբ. Հոգ. Գ(ճ)ժբ։ Աստուած կենդանի, անիմանալի, անհասանելի...»

ա. էջ 333—335 «Տաղ. Ի Ներսէսէ։ Խոստովանիմք Աստուած զհայր, անծին անեղ և անսկիզբն...։»

38. էջ 335—348 «Նորին տեառն Մխիթարայ Այրիվանեցւոյ ասացեալ գանձ աղուհացիցն, կիրակէիցն (բուն բարեկենդանուն)։ «Երգս յաւերժական, երգեմք բանական երիցդ միաբան. ի նմանս աննման...»։—

39. էջ 348—352 Գանձ չափաւորեմ
սակաւիկ
Ի Գրիգորէ ոգէնուաստիկ
Գրեալ եղէ բանս աղքատիկ...»։

«Գանձ Թէոդոսի։ Գոհաբանեաց տէր սբ. հոգի. նոր գրախտացուցիր զեկեղեցի...»

ա. էջ 352—353 «Մեղեդի. ասա։ Խաղաղարարն որ թագաւոր, քո զինուորացն հոգեւոր...»

40. էջ 354—358 «Գանձ յանառակորդ. Մկրտիչ (°)։ Մեծ և ահեղ, խորհուրդ տիրական...»

ա. էջ 358—359 «Տաղ ի տէր Ներսէսէ։ Արդ քեզ մեղայ, տէրդ երկնային, հայրդ գթով, սբ. մեծին...»

41. էջ 359—367. «Յոհաննու։ Գանձ. զոսկիբերին. Չորրորդ կիրակէի, մեծ և Ղզ։ Մեծապայծառ խորհուրդ սոսկական...»

42. էջ 367—373 «Գանձ քառասնից։ Մեծ և հզօր, անմահից արքայ Յիսուս Քրիստոս աւրհնեալ յարակայ...»

ա. էջ 373—374 «Տաղ Քառասնից։ Քրիստոս փառաց թագաւոր. փառաւորեալդ ի զուարթնոց...»

43. էջ 374—379 «Գանձ երրորդ կիրակէի։ Մեծ և ահեղ խորհուրդ անքննին, որ գթացար յանդուգն առաջին...»

44. էջ 379—387 «Գանձ Լուսաւորչին Գրիգորի։ Մեծ և հզօր, անմահից արքայ. Յիսուս Քրիստոս աւրհնեալ յարակայ...»

ա. էջ 387—389 «Մեղեդի։ Գրիգորիս առաքինի հսկող...»

45. էջ 389—397 «Վեցերորդ կիրակի (աղուհացիցն)։ Այսօր զխորհ քո անձառելին, զոր մարգարէքն գուշակեցին...»

46 էջ 397—404 «Գանձ եմ աշորժ
և պիտանի
Բամեալ բանին անսխական
Ի Գրիգորէ մըտառական
Գըրեալ զըրկայ յաւետարան...»

«Գանձն Ղազարու։ Գոչումն ըղձական. գովասանական, գոհաբանական...»

ա. էջ 404—406 «Մեղեդի Ստեփաննոս վարդապետ։ Սըրբոց հրեշտակաց զարմանս հրաշից...»

47. էջ 406 412 «Գանձ, Արմաւե-

նեաց (ծաղկազարդին)։ Համադրյական հօր սահման և բան...»

ա. էջ 412—414 «Մեղեդի ի տէր Ներսէսէ։ Տիրական տաւնիս այսօր եկայք ցընծացուք...»

բ. էջ 413—414 «Տաղ անդյշ։ Ներսէսէ։ Ասա երրայեցւոց մանկունք զերգս քրոբէիցն առեալ...»

48. էջ 414—419 «Գանձ, երեկուն ասա։ Ի տաւնս տօնից. ի փառս հրաշից...»

49. էջ 419—430 «Գանձ. Աւագ երկու շաբաթ։ Գերագոյն էից, գերահրաշ գոյից, գերիմաստ վեհից...»

50. էջ 430—438 «Գանձ. Աւագ երեքշաբթի։ Գործ արարչական, գերահրաշական գըթով գոյացան...»

ա. էջ 437—438 «Տաղ է անդյշ։ Քեզ ով տէր Յիսուս ձայնեմ...»

51. էջ 438—447 Գանձ, Աւագ Չորեքշաբթի։ Մեծ և անճառ, խորհուրդն ահագին, որ հայր ծածկեալ...»

ա. էջ 444—447 «Տաղ ի Ներսէսէ։ Որ կոչեցիր ազգմամբ ձայնին ըզ Նախապետս բարւոյ ազգին...»

52. էջ 447—453 «Աւագ Հինգշաբթի։ Ոտնալուային։ Գանձըս ոտնալուին առա։ Զահեզ զանքննին, զխորհուրդս խորին...»

53. էջ 453—458 «Աւագ Հինգշաբթի, առաւօտին։ Որք որ փափաքին. ուտել զայն մարմինն...»

ա. էջ 458—459 «Տաղ ասա։ Փառաց թագաւորն այն որ նստի ընդ հօր...»

54. էջ 459—465 «Գանձ, ի Մատթէոսէ, աւագ Ուրբաթի։ Ի յանմարմնական յանձանց բանական...»

ա. էջ 465—471 «Տաղ աւագ Ուրբաթին։ Զարհուրեցան զօրայն, երկնաւորաց խըմբից...»

բ. էջ 466—471 «Առաւօտու հատորն է, ցերեկի ասայ։ Որ կատարեալ. մարգարէացեալ. զԴաւիթն որ ասեալ...»

55. էջ 471—474 «Տաղ ի տէր Ներսէսէ։ Աստուածածին սրբուհին, ամենօրհնեալ տիրուհին...»

56. էջ 474—481 «Գանձ, թաղման, շաբաթ աւուր։ Խորհուրդ հանգստեան. եօթներորդին ըստ գրեցելոյ...»

ա. էջ 481—483 «Տաղ գեղեցկայարմար։ Այսաւր է շաբաթ և լուսթիւն հանգիստ...»

57. էջ 483—488 «Գանձ, Աւագ զատկին. կիրակի։ Մարգասիրութեամբ, որդիդ միածին...»

ա. 488—489 «Մեղեդի ի տէր Ներսէսէ։ Նոր իմն աւետեաց բարբառ նորազուարճ ձայնիւ...»

59. էջ 489—497 «Երկուշաբթի. Ի տէր Մխիթար վարդապետ(է՞)։ Տէր տէրունական, տըւող տիրական...»

ա. էջ 497—498 «Մեղեդի, անդյշ Նարկ։ Ես ձայն զաւիւծոյն ասեմ, որ գոչէր ի քառաթևին...»

բ. էջ 499—500 «Յորդորակ է։ Այսօր աւետիս, ձեզ ննջեցելոցդ...»

60. էջ 500—506 «Գանձ. յարութեան, Երրորդ աւագն։ Արդ լուսաւորեա, արդ փառաւորեա...»

ա. 506—507 «Մեղեդի անդյշ, յարութեան։ Հաւուն, հաւուււն արդընացեալ, գիտելով զհեթանոսս...»

բ. 507—509 «Տաղ անդյշ։ Յարուցեալ յերրորդ աւուր. առաւօտուն ձայնեաց հրեշտակն...»

61. էջ 509—517 «Գանձ, յարութեան ԾՄչտր. (դ. յարութեան)։ Խորհուրդ հրաւիրման, կամաց արարչի, հօրդ երկնաւորի...»

62. էջ 517—522 «Գանձ. յարութեան (հինգերորդ աւուր)։ Մեծապայծառ ձայնիւ ցնծալի...»

63. էջ 522—527 «Գանձ. յարութեան, Մկըրտիչ ասաց։ ...՞ ու ահեղ, խորհուրդ սոսկալի, այսօր ցուցաւ...»

ա. էջ 527—529 «Տաղ անդյշ ասա։ Եկեալ Մարիամ. Մակդաղենին, յայն յառաւօտին, միաշաբաթին...»

64. էջ 529—536 «Գթութեամբ Աստուծոյ որդոյն

Րամեց գոյից ստեղծօղ լուսոյն
Ի Գրիգորէ մեղացելոյն
Գանձս գրեցայ նոր կիրակոյն...»

«Գանձ նոր կիրակոյն։ Գաղտնի խորհըրդին. գուշակեալ ի հին գունդ մարգարէին...»

ա. էջ 536—541 «Տաղ է, անդյշ ասա։ Այսօր նոր արև հարեալ...»

65. էջ 541—548 «Գանձ եմ անուժ և պիտանի
Բամեալ գըրչաւ ի շարտողի
Ի յաղտեղի կարսէ ելի
Գինիս համեղ և գովելի... են
Նոյն Գրիգորի տողերն են:
«Գանձ, կիրակէի յարութեան ասա: Գերակայ, գոյին գոյից համայնին, գոլ պատճառ էին...»

66. էջ 548—572 «Գանձըս գրեցի, կիրակ մտիս
Բամաւետեաց սբ. գիշերի
Ի Գրիգորէ մեղապարտէ...»
«Գանձ հասարակ: Գերամբարձ Աստուած, գովեալդ ի զօրաց, գնդից հրեշտակաց...»

67. էջ 572—578. «Գանձ, համբարձման Յիսուսի: Մեծապայծառ տօնիս, ահագին եկեղեցիք սուրբ պայծառացին...»

68. էջ 578—583. «Գանձ. Մեծահրաշին ասա: Միակդ ահաւոր, տէր և զաւրաւոր, հաւր քոյ մեղաւոր...»

69. էջ 583—591. «Գանձ, հոգոյ գալստեան: Վեր աւրհնեալ, գովեալ և փառաւորեալ, Աստուած զաւանեալ...»

70. էջ 591—595. «Կանոն երկրորդ աւուրն: Մեծ և հըզօր հոգի Աստուծոյ. անտես մըտաց, անհաս խորհրդոց...»

71. էջ 595—599 «Կանոն երրորդ աւուր: Մեծապայծառ լոյսն արտափայլեալ, հոգին Աստուած առ մեզ խոնարհեալ...»

72. էջ 599—610 «Սրբոց Հռիփսիմեանց: Վայելչականաց, վայելման փառաց. վերնապար կառաց...»

73. էջ 610—616 «Գանձ, Շողակաթին եկեղեցոյ: Տաճար երկնային, տուն Քրիստոսային, տեղի անմահին...»

ա. Էջ 616 «Տաղ Էջմիածնին: Սուրբ է տաճար...»

74. էջ 616—621 «Գանձ, սուրբ մանկանց ի Բեթղեհէմի: Խանդաղակաթ, սըրտիւ տենչալի, ձեզ տաւնեսցուք...»

ա. էջ 621—623 «Տաղ: Արթունք, զուարթունք, բանին բանաւոր ծիծառունք...»

75. էջ 623—630 «Թոռանց և որդւոց Լուսաւորչին: Նոր թագ պետական, նոր գահան նըման, նոր քեզ հարսնարան...»

76. էջ 630—641 «Գանձ, մարգարէից: Խորհուրդ անքննին...»

77. էջ 641—645 «Գանձ Կաթողիկոսին: ...՞ և առեր մարմին. զմարդիկս երկրային...»

ա. Էջ 645—647 «Տաղ ի Գրիգորէ: Եկայք ողբասցուք, եղբարք, զչարութիւն ազգի նետողացն...»

78. էջ 647—651 «Գանձ Տապանակին: Մաքուր տաճար, սուրբ տէրունական, աստուածընկալ լուսեղէն խորան...»

ա. էջ 651—652 «Տաղ եկեղեցւոյ: Մայր հաւատոյ սուրբ հարսնարան...»

79. էջ 652—657 «Գանձ Վարդավառի: Մեծ և ահեղ խորհուրդ յայտնեալ բարձրեալ Աստուած...

ա. էջ 657—659 «Տաղ ի Ներս: Տէր փառաց, այսօր յայտնեաց ի Թաբօր զփառս, ուրախացան տեսլեամբ..

80. էջ 659—670 «Վարդավառին, ի Ներսէս վարդապետէ: Նախախնամող Աստուած յայտնեցար...

81. էջ 670—678 «Գանձ փոխմանն Աստուածածնին: Մեծապայծառ հրաշակերպ վեհ տեսլեամբն ահագին սաւառնացեալ...

82. էջ 678—683 «Նաւակատեաց եկեղեցւոյ: Մեծապայծառ փայլմամբ, իբր ըղբոց գեղազարդեալ...

ա. Էջ 683—684 «Մեղեդի եկեղեցւոյ: Քրիստոս եկեալ քահանայապետն սուրբ, ի քեզ մտանէ...»

83. էջ 684—690 «Գանձ Սուրբ Խաչին: Թըկուր. ասէ: Ցեղեմական դրախտին փափկութեան..

84. էջ 690—703 «Գանձ Վարագայ Սուրբ Խաչին, ի Ներսէս վարդապետէ: Նշան, աւրհնեալ և փառաւորեալ..

ա. 703—705 «Տաղ Վարագայ Սուրբ Խաչին, ասա անդր: Ամփոփեալ զնշան խաչին, ի Վասպուրական երկրին...

85. էջ 705—711 «Գանձ, Գէորգեայ զօրավարին: Խաչատուր վարդապետէ: Խընդա հրաւէր, մանկունք սիոնի...»

86. էջ 711—717 «Խաչ Գիւտին: Խաչի քո Քրիստոս երկրպագանեմք..

87. էջ 717—722 Գանձ Կուսանացն: Իսկզբան էիդ, բանիդ ի լուսիդ...

88. էջ 722—727 «Գանձ Մարտիրոսաց: Մեծապայծառ փառօք զարդարեալ,

եկեղեցիք պայծառազգեցեալ...»

89. էջ 727—734 «Գանձ Հրեշտակապետացն, Գաբրիէլի և Միքայէլի։ Մեծ և ահեղ խորհուրդ հրաշական...»

ա. էջ 734—735 Տաղ ի Ներսեսէ։ Զօրք երկնային զուարթնոց, դասք հրեշտակաց անմարմնոյ...»

90. էջ 735—744 «Գանձ Ձեռնադրութեան։ Գըթայ 'ի մեզ, տէր ամենակալ, և լոյս բնութեանս...»

91. էջ 744—749 «Գանձ Մարտիրոսաց։ Մեծապայծառ փառօք զարդարեալ, եկեղեցի պայծառազգեցեալ...

92. էջ 749—752 «Գանձ ապաշխարութեան։ Մեղայ տէր մեղայ, պարտաւորեցայ, մեղաւոր գըտայ...

1. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ էջ 752—736. Փառք ամենասուրբ երրորդութեան հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։ Որ ետ կարողութիւն մեղսամած և տկար ոգւոյ մխիթար գրչի. հասանիլ յաւարտ սորայ։ Յամին ՋԾԴ թուականիս մերում, որ գրեցաւ ի խնդրոյ պատուական տանուտիրոջն Մկրտչի, որ ստացաւ զլուսազարդ տառս ի յիշատակ բարի իւր և ծնօղաց իւրոց, հօրն՝ Մարտիրոս բրուտին և մօրն՝ Թուխթակին. և եղբօր Կիրակոսին և քըւերցն՝ Գուհար ապաշխարողին և Մարգրտին և իւր տղայոցն. Սարգսին և Բէկուն և Շամամին։ Քրիստոս Աստուած յորժամ գաս ի դատաստան, քաղցր ձայնիւ կոչեա զՄկրտիչն, և զծնողսն իւր և զաւակս իւր, զՄարտիրոս և զԹուրվանդայ. և տէր Աստուած ողորմի Մխիթարէն և հօր Խնկայ և Թակուխոյ, և կենակցին իւրոյ Շնոհորին և զաւակին իւրոյ Սադաղին, և Թումային, և եղբօր Խաչկայ տէր Աստուած Յիսուս Քրիստոս տայ զիւր արքայութիւն նոցա. լսել տայ զերանաւէտ ձայն նոցա, ամէն։ Դարձեալ կողկողագին պաղատանօք աղաչեմ զամենեսեանդ, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զիս զբազմամեղս դատարկս ի բարեաց գործոց, Մխիթար Գրիչ, և զհայրն իմ զՅոհաննէս քահանայ, և զմայրն իմ զՄարթայ։ Նւ զեղբայրն իմ զԳրիգոր քահանայ. և զաւակս իւր զԿարապետ սարկաւագն և զՀալիփայ սարկաւագն և զՀաթուշէկն և լի բերանով Աստուած ողորմի ասացէք. սոցա, ամէն եղիցի։ Նա դարձեալ կրկին մաղթանօք, աղաչեմք, ձեռս համբառնալով աստսջիք. Քրիստոս Աստուած, յորժամ գաս հայրենի փառօք քո, քաղցր բարբառով կոչեա ի յարքայութեան քում զՄխիթար Գրիչն, և զաւակս իւր զՅովանէս սարկաւագն և զՍտեփանոս սարկաւագն, որ փոխեցաւ առ Աստուած, և զՄկրտիչն և և զԿարապետն, և զՍարգիս և զՅոհաննէս և զԱսանէթն. և զկողակից իւր զՇայրըրման, և զհօրեղբայրն իմ զՍտեփանոս քահանայ և զաւակս իւր, զԳրիգոր քահանայ, և զՄկրտիչ քահանայ և զմիւս հօրեղբայրն իմ զԱռաքել քահանայ և զԹումայ քահանայ, զՅովհաննէս և զԿարապետն զամենայն արեան մերձաւորքս մեր, և զմեծ պապն զԱստուածատուր քահանայ և զԹումայ քահանայ, և զԱտոմ քահանայ. զվարպետն մեր և զամենայն արեան մերձաւորքս մեր ամէն, եղիցի։

Ես Մկրտիչս. եսու զԱստուածային պայծառ գանձարանս Մխիթար քահանայիս և իւր որդոցն ի Բոնաշինայ, ժամանեալ կենաց յիշատակ ինձ և ծնօղաց իմոց. հօրն Մարտիրոսին և մօրն Թուխթանկին, և եղբօր Կիրակոսին և քւերց Գուհարին, և Մարգրտին և քեռուն Մխիթարին, և ամենայն արեան մերձաւորացն, կենդանեաց. հանգուցելոցն, ամէն, եղիցի։ Արդ՝ զամենեսեանդ աղաչեմ ես Մկրտիչ՝ զմեծն, զփոքր, զայր և զկին, և որ յանդգնի գողանալով կամ ծախելով կամ գրաւ դնելով կամ յանօրինաց մատնելով, նա զանէծքս Կայենին և զմատն զՅուդային և զխաչահանողացն առցէ ամէն, եղիցի, եղիցի։

2. էջ 736. (Նօտրագիր յետին գրչի ձեռքով) Յեսայեայ անարժանս յիշեցէք ի Քրիստոս, ով մանկունք սուրբ եկեղեցւոյ։ Նայեաս Տաթեւացի մեղօք մեռեալ զաղբալի, գործով թափուր և եղկելի. գրեցաւ այս նաւտրս թվին ՌՀ (1070+551)=1621.

եկեղեցիք պայծառազգեցեալ...»

89. էջ 727—734 «Գանձ Հրեշտակապետացն, Գաբրիէլի և Միքայէլի։ Մեծ և ահեղ խորհուրդ հրաշական...»

ա. էջ 734—735 Տաղ ի Ներսէսէ։ Զօրք երկնային զուարթնոց, դասք հրեշտակաց անմարմնոյ...»

90. էջ 735—744 «Գանձ Ձեռնադրութեան։ Գըթայ 'ի մեզ, տէր ամենակալ, և լուր ընութեանս...»

91. էջ 744—749 «Գանձ Մարտիրոսաց։ Մեծապայծառ փառօք զարդարեալ, եկեղեցի պայծառազգեցեալ...

92. էջ 749—752 «Գանձ ապաշխարութեան։ Մեղայ տէր մեղայ, պարտաւորեցայ, մեղաւոր գըտայ...

1. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ էջ 752—736. Փառք ամենասուրբ երրորդութեան հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։ Որ ետ կարողութիւն մեղսամած և տկար ոգւոյ մխիթար գրչի. հասանիլ յաւարտ սորայ։ Ցամին ՋԾԴ թուականիս մերում, որ գրեցաւ ի խնդրոյ պատուական տանուտիրոջն Մկրտչի, որ ստացաւ զլուսազարդ տառս ի յիշատակ բարի իւր և ծնողաց իւրոց, հօրն՝ Մարտիրոս բրուտին և մօրն՝ Թուխթակին. և եղբօր Կիրակոսին և քըւերցն՝ Գուհար ապաշխարողին և Մարգրտին և իւր տղայոցն. Սարգսին և Բէկուն և Շամամին։ Քրիստոս Աստուած յորժամ գաս ի դատաստան, քաղցր ձայնիւ կոչեա զՄկրտիչն, և զծնողսն իւր և զաւակս իւր, զՄարտիրոս և զԹուրվանդայ. և տէր Աստուած ողորմի Մխիթարէն և հօր Խնկայ և Թակուխոյ, և կենակցին իւրոյ Շնոհօրին և զաւակին իւրոյ Սագաղին, և Թումային, և եղբօր Խաչկայ տէր Աստուած Յիսուս Քրիստոս տայ զիւր արքայութիւն նոցա. լսել տայ զերանաւէտ ձայն նոցա, ամէն։ Դարձեալ կողկողագին պաղատանօք աղաչեմ զամենեսեանդ, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զիս զբազմամեղս գատարկս ի բարեաց գործոց, Մխիթար Գրիչ, և զհայրն իմ զՅոհաննէս քահանայ, և զմայրն իմ զՄարթայ։ Նա զեղբայրն իմ զԳրիգոր քահանայ. և զաւակս իւր զԿարապետ սարկաւագն և զՀալիփայ սարկաւագն և զՀաթուշէկն և լի բերանով Աստուած ողորմի ասացէք. սոցա, ամէն եղիցի։ Նա դարձեալ կրկին մաղթանօք, աղաչեմք, ձեռս համբառնալով ասասջիք. Քրիստոս Աստուած, յորժամ գաս հայրենի փառօք քո, քաղցր բարբառով կոչեա ի յարքայութեան քում զՄխիթար Գրիչն, և զաւակս իւր զՅովանէս սարկաւագն և զՍտեփանոս սարկաւագն, որ փոխեցաւ առ Աստուած, և զՄկրտիչն և և զԿարապետն, և զՍարգիս և զՅոհանէս և զԱսանէթն. և զկողակից իւր զՇայբըրման, և զհօրեղբայրն իմ զՍտեփանոս քահանայ և զաւակս իւր, զԳրիգոր քահանայ, և զՄկրտիչ քահանայ և զմիւս հօրեղբայրն իմ զԱռաքել քահանայ և զԹումայ քահանայ, զՅովհաննէս և զԿարապետն զամենայն արեան մերձաւորքս մեր, և զմեծ պապն զԱստուածատուր քահանայ և զԹումայ քահանայ, և զԱտոմ քահանայ. զվարպետն մեր և զամենայն արեան մերձաւորքս մեր ամէն, եղիցի։

Ես Մկրտիչս. եսու զԱստուածային պայծառ գանձարանս Մխիթար քահանայիս և իւր որդոցն ի Բռնաշինայ, ժամատեղս կենաց յիշատակ ինձ և ծնողաց իմոց, հօրն Մարտիրոսին և մօրն Թուխթանկին, և եղբօր Կիրակոսին և քուերց Գուհարին, և Մարգրտին և քեռուն Մխիթարին, և ամենայն արեան մերձաւորացն, կենդանեաց. հանգուցելոցն, ամէն, եղիցի։ Արդ՝ զամենեսեանդ աղաչեմ ես Մկրտիչ զմեծն, զփոքր, զայր և զկին, և որ յանդգնի գողանալով կամ ծախելով կամ գրաւ դնելով կամ յանօրինաց մատնելով, նա զանէծքս Կայենին և զմատն զՅուդային և զխաչահանողացն առցէ ամէն, եղիցի, եղիցի։

2. էջ 736. (Նոտրագիր յետին գրչի ձեռքով) Ցեսայեայ անարժանս յիշեցէք ի Քրիստոս, ով մանկունք սուրբ եկեղեցւոյ։ Նայեաս Տաթեւացի մեղօք մեռեալ զաղբալի, գործով թափուր և եղկելի. գրեցաւ այս նաւտրս թվին ՌՀ (1070+551)=1621.

Մինաս Սաղաթըէլեան Կամսարական։ —ՑՈՒՑԱԿԱՐԱՆԻ տեղ է ծառայում էջ 1—12 «Աղերսանքը», ուր բացատրւում է գրքիս յօրինելու պատճառը։— ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ Առաջին կողքի ներսի կողմի տպագրուած տոմսի վրայ կայ «Աղէքսանդր Թայիրեան Ղազարեան»։

**Մատեանս է Աղօթագիրք**

«Գիրք աղօթից՝ ժողովեալ ի սրբոց մատենից Աստուածայնոց և սահմանեալ յաղագս քրիստոնեայ եղբարց։ Ի յամենամեղ վշտակիր՝ ապերջանիկ և նուաստագունեղ Մինասայ Սաղաթըէլեան Կամսարականի․ որ և մէլէք կոչեցեալ Արշարունեաց (Նախնեացն մերոց ժառանգութիւն և սեպհական) գաւառի արարատեան երկրին Երևանու ի Հայաստան աշխարհի։

1. էջ 1—12. «Աղերսանք։ Գիրք աղօթից՝ ժողովեալ...։ Քանզի յայտնի իսկ է...», ուր հեղինակը բացատրում է իւրև գրքիս յառաջաբանի մէջ մատենիս յօրինելու պատճառը։

2. էջ 12—158. «Անուն հօր...։ Օրհնեալ տէր մեր և փրկիչ... Հայր մեր... Տէր նեթէ զշուրթունս... Են աղօթքներ Նարեկից, Սաղմոսից, հին կտակարանից առհասարակ։

5.

# ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԵԿԵՂԵՑՒՈՅ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 21,5×15 սմ։—ԿԱԶՄ, թղթեայ կաշեպատ. կազմի երկու կողքի դրսի երեսները դժգոյն երփներանգ թղթով ծածկուած։—ՎԻՃԱԿ լաւ եւ մաքուր։—ՆԻՒԹ թուղթ, բարակ, պինդ եւ հարթ։—ԹԵՐԹ 52։—ԴԱՏԱՐԿ էջ I. II. 2. 5 մի մասը, 6—8. 105—106։—ՏՈՂ 36։—ԳԻՐ մանր նոտրագիր. բացի էջ 3—5 եւ 9 երկսիւն, իւրաքանչիւրը 17×4,7 սմ.։—ԽՈՐԱԳԻՐ, ՎԵՐՆԱԳԻՐՆԵՐ, ՍԿԶԲՆԱԳԻՐՆԵՐ կարմիր։—ԹՈՒԱԿԱՆ ՌՄԿԹ=1820։—ԳՐԻՉ նօտար Սարգիս լօշկակար Փօղոսեան։—ՏԵՂ Կարին։—ՑՈՒՑԱԿԱՐԱՆ էջ 1 գրչի. եւ 104 բ. սինակ։—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ էջ 1 եւ 106 «Ներսեսեան հոգեւոր դպրանոցի» մատենադարանի կնքադրոշմը. էջ I. «Մեկնութիւն եկեղեցւոյ։ № 96». էջ 1 մի քանի տողի վրայ վարից թուղթ է կպցրած։

**Մատեանս է**

Կարճառօտ մեկնութիւն կաթուղիկէ եկեղեցւոյն արտահանեալ յաստուածաշունչ գրոց...։ Աշխատութեամբ և ջանիւք Կոստանդնուպօլսոյ դպրի միոյ ի դիտապետութեան իմաստնափառ և սրբազան Աղէքսանդր կաթուղիկոսին, ծնընդաւ և տիեզերական եպիսկոպոսապետին ամենայն Հայոց ի թուին Փրկչին 1707 և ի հայոց ՌՄԾԶ ի Փարէզ քաղաքն Փրանկաց և հայոց։

1. էջ. 3—5 Հեղինակի յառաջաբանը «Երանի խաղաղարաց զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին։ Ասէ կենսատու Փրկիչն մեր Քրիստոս։—«Անհնարին աղէտք և անհընարին...»

2. էջ 9—39. «Այժմ եկեսցուք ի մեկնութիւն կաթուղիկէ եկեղեցւոյն։ Եկեղեցի է Հռոմոց բարբառ և թարգմանի ժողովուրդ. տաճկերէն ճեմայէյթ և ի մէջ աւետարանի ոչ նշանակութիւնս ունի։ Նախ և առաջին նշանակէ...»

3. էջ 39—40 «Հաւատամք Նիկիոյ ժողովոյն այս է։ Հաւատամք իմ Աստուած...։»

4. էջ 40—46 «Հաւատամք Կ. Պօլսոյ ժողովոյն այս է։ Հաւատամք իմ Աստուած...։» Սորան կից շարունակում է հեղինակը իւր գիտողութիւնները հանգանակների մասին։

Հեղինակը բացադրում է եկեղեցու խաղաղութիւնը վրդովուած տեսնելով՝ չուզում քարանիրո լինել և ուզում է որգեղ ինչ փրկութեան հնարել... անտանելի գայթագղութեանց։ Աշխարհս այնպէս թուի ինձ թէ ցայգ եւ զցերեկ՝ թէ ննջեմ և թէ յառնեմ, թէ նստեմ եւ թէ շրջեմ, հանապազ ականջին եւ ասկոյլի ձայն մի հնչէ յականջս իմ անդադար թէ բարձէք

գքարկիս գայթագղութեան ի ճանապարհէ ուղխարաց իմոց:... Եւ այն քարն է ագիտոնթիան ճշմարիտ նշանակութեան կաթուղիկէ եկեղեցւոյ":

Այս ընթերցողներին յայտնում է „նախ եւ առաջ վկայ կոչեմ զԱստուած, եւ զայս մեկնութիւնս արարի, ոչ վասն հաճելոյ երկարբանից, այլ վասն... եւ վասն յայտնելոյ զճշմարտութիւն ի պէտս խաղաղութեան հայկական սուրբ եկեղեցւոյ" եւ վերջն աւելացնում է „խոստովան լինեմ անկեղծ սրտիւ առաջի Աստուծոյ եւ մարդկան, որ ես զայն մեկնութիւն դնեմ իներքոյ դատողութեան Հայրապետին իմոյ Կաթուղիկոսին Էջմիածնայ, եւ պատրիարգին իմոյ Կ. Պոլսոյ..."

5. էջ 46 «Պատասխանի առ քանի մի հարցմունս Կոստանդնուպօլսեցի եղբարց, ի վերայ առաջագրի մեկնութեան կաթուղիկէ եկեղեցւոյն: Ընդհանրական: Ցուցարկելի է օրինակ մի այս վերոյիշեալ մեկնութեանս ի Կոստանդնուպօլիս. և քանի մի եղբարք ի համշիրակաց իմոց արարեալ են ի վերայ նորա զքանի մի հարցմունս: Որոց արժան է այժմ պատասխանել:

ա. 46—47 Հարցմունք ա. «Եթէ չկայ մեամ՝ որ երկարնակաց եկեղեցիքն բ. բնութիւն ասեն ի Քրիստոս, որպէս ուսուցանէ մեկնութիւն քո, ապա վասն է՞ր հայրապետք նզովեցին զերկարնակսն»: Այս ետեւում է պատասխանն ինչպէս և հետեւեալ հարցմունքներին:

բ. 47—51. Հարցմունք երկրորդ: (Լուսանցքում) Մեք տեսաք զբազում վարդապետս Լաթինացւոց, որ ունէին զաղանդ հերձուածող երկարնակաց: Ապա վասն է՞ր ուղղահաւատ ասեն զեկեղեցին Լաթինացւոց:

գ. 61—64 Հարցմունք երրորդ «Լաթինացւոց եկեղեցին ոչ հարկաւոր համարէ ժողովրդականաց իւրոց հաղորդութեան արեան Քրիստոսի, ուրեմն ո՞րպէս ասես եկեղեցին նոցա ուղղահաւատ, և ոչ հերձուածող:

դ. 54 Հարցում չորրորդ «Տէրն մեր Յիսուս Քրիստոս, և ճշմարտութեան հոգին սուրբ հրամայեցին հաղորդել զամենայն հաւատացեալս ի խորհրդական մարմնոյ և յարենէն Քրիստոսի, ապա Լաթինացւոց եկեղեցին ո՞րպէս կարէ լինել ժողովուրդ Քրիստոսի, մինչ ոչ հնազանդի աստուածային հրամանիս:»

ե. 55—70 Հարցմունք հինգերորդ. «Լաթինացւոց եկեղեցին իբրև զսուրբս պատուէ զԼևոն, և զՓլարիանոսն, և զԹովմաս Ագուգնացին, որոնց գրեանքն լիք են մոլորութեամբ ի վերայ հաւատոյն Քրիստոսի. ուրեմն ո՞րպէս կարէ եկեղեցին նոցա ուղղահաւատ լինել:

զ. 70—80 Հարցմունք վեցերորդ «Իսկ թէ այդպէս է, ուրեմն վասն է՞ր եկեղեցին մեր ուրացօղ և անօրէն անուանէ զքաղկեդոնի ժողովն ի մէջ Ով հրաշալեացն»:

Այս հարցման պատասխանի շարունակութիւնն է կազմում իսկապէս էջ 81—87

«Իբրա վերատեսչին թուղթ գրեալ առ Մարաս պարսիկն, յետ առաջաբանութեան»: Սկիզբն է: «Իսկ զամենայն որ ինչ յառաջման է...»

6. էջ 88—100 «Նոր ապացոյց անյաղթելի վասն միոյ բնութեան Քրիստոսի գրեալ ի Գէորգէ, Աստուծոյ անյաղթելի վարդապետէ Կոստանդնուպօլսեցւոյ, ի փառս Աստուծոյ, ի հաստատութիւն ճշմարտութեան» սկսւում է «Անօթն ընտրութեան ու վարդապետն հեթանոսաց...»

7. էջ 101—104. «Վասն մեկնչաց աստուածային գրոց ի մերոց վարդապետաց, թէ ով ոք զինչ է արարեալ: Որք են սոքա» (հետաքրքիր է):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ էջ. 104 «Ընծայեցաւ մեկնութեան գրքոյկս առ վայելման ճգնազգեաց առն հոգեսիրի նորընծայ Յակոբայ վարդապետի և ձեռնասուն աշակերտի Տեառն Յովհաննու արքայազն արքեպիսկոպոսի և սրբոյ մենաստանին Աստուածածնի Կարմիր կոչեցելոյ՝ ծայրագոյն վերատեսչին ի Մովսէսէ մանկավարժէ և յաշակերտէ նորին ձեռնասնոյ Սարգիս նոտարէ, սակս վայելողի սորին նարդենիս յիշեալ Յակոբ վարդապետին, մաղթեսցուք առ բարձրեալն Աստուած զի բարեխօսութեամբ մօր իւրոյ անարատի և միշտ կուսի ծաղկեցուսցէ զգաւազան վարդապետական իշխանութեան ի միաբանութիւն մեզ՝ և համայն մերազնէից: Եւ իւրոյ ճգնողական երջանիկ վարուքն հետեւելով առ այս ցանկալի բանիս և մտանելով 'ի պարտէզ սորին՝ հաւաքելով զփունջս ծաղկանց հոտաւէտաց՝ սրփ-

ռեսցէ ի քիմս և ի միտս ժողովրդականացս արամազնէից. որովք բերկրեալ լսողին առնողքն և պաշօղքն փառաւորեսցեն անդադար զամենասուրբ զերրորդութիւն յաւիտեանս յաւիտենից ամէն։ ՌՄՀԵ յուլիս իը.=1826։

Նուաստ ծառայ Մովսէս Կիրակոսեան գործավար Կարմիր վանից։ Նուաստ ծառայ Սարգիս կոշկակար Պօղոսեան.

(Անշուշտ նոյն Սարգիսն է, որը վերև նոտար է կոչուած։)

## 6.

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 21×15 սմ։ — ԿԱԶՄ տախտակեայ, հին կաշեկազմ, մի կաշեայ կապերով։—ՎԻՃԱԿ լաւ։ — ՆԻՒԹ թուղթ բարակ եւ հարթ։ — ԹԵՐԹ 579։—ԴԱՏԱՐԿ էջ 1—4. 1161—1162։ Էջ 475-ի վրայ սխալմամբ գրուած է 479։ — ՏՈՂ 25։ — ԳԻՐ նոտրագիր երկսիւն, իւրաքանչիւրը 15×4,5 սմ.—ԽՈՐԱԳԻՐՆԵՐ, ՎԵՐՆԱԳԻՐՆԵՐ եւ ՍԿԶԲՆԱԳԻՐՆԵՐ կարմիր. այլ եւ զարդագիրներ, թռչնագիրներ, կենդանագիրներ, դիմագիրներ եւն։ — Կան բազմաթիւ մեծ ու փոքր կարմիր ԽՈՐԱՆԱԶԱՐԴՆԵՐ եւ ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՆԵՐ։ — ԹՈՒԱԿԱՆ 1207=1758։ — ՏԵՂ Հիլալէ քաղաք։—ՑԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ էջ 3. 4։ — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ էջ 3 եւ 1162 «Ներս. հոգ. դպրանոցի» մատենադարանի կնքադրոշմը. վերջում աւետարանի մագաղաթեայ մի թերթ միջին երկաթագրով։ Կազմի մէջքին կպցրած թերթիկի վրայ գրուած է «Մեկնութիւն Փերթումեան Պետրոս վրդպտի № 193։»

### Մատեանս է Մեկնութիւն

1. էջ 5—20 «Առաջաբան Պօղոսի առաքելոյ, նախակարգեալ ի գլուխ գրոց։ Ընդ ուսումնասէր և փոյթ ընդ քոյոյ սիրոյդ զարմացեալ...»

2. էջ 20—49 «Վկայութիւնք Պօղոսի առաքելոյն։ Առ Ներոնիւ կայսերբ Հռոմայեցւոց վկայեաց...»

3. էջ 53—70 «Երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսի և սուրբ հօրն Եփրեմի Խուրին Ասորւոյ. Համառօտ մեկնութիւն թղթոց առաքելոյն Պաւղոսի Դ.երբ.Ներբորդի հաւաքեալ ի մի աստուածաբան վարդապետացն մերոց։ Արդ այսպէս իմանալի է մեզ վասն զի աշակերտք փրկչին մերոյ...»

### Ա. ՈՍԿԵԲԵՐԱՆ

4. էջ 71—114 «Պաւղոս ծառայ Քրիստոսի, կոչեցեալ առաքեալ որոշեալ...»

5. էջ 114—147 «Ընթերցուած ԵՆ. գլ. Ե. (այսուհետև նշանակուած է նոր գրչով)։ Այսուհետև արդարացեալ ի հաւատոց անտի...»

* Ծնթ. Էջ 121—127 գլ. Զ։ Էջ 127—134 գլ. Է։ Էջ 134—147 գլ. Ը։

6. էջ 147—168 «Ընթերցուածն Գ. գլ. Թ.։ Ըստուգութեամբ ասեմք ի Քրիստոս և ոչ ստեմ, վկայէ ինձ...»

* Էջ 156—160 գլ. Ժ։ Էջ 160—168 գլ. ԺԱ։

7. էջ 168—189 «Ընթերցուածն չորս։ Գլ. ԺԲ։ Աղաչեմ զձեզ եղբարքն, գթութեամբն Աստուծոյ...»

* գլ. ԺԳ. էջ 176—182։ Գլ. ԺԴ. էջ 182—189։

8. էջ 189—205 «Ընթերցուած Ե. գլ. ԺԵ. Պարտ է մեզ, որ կարողքս եմք զտկարութիւն տկարացն բառնալ...»

9 էջ 205—213 «Առ Կորընթացիս իբրև եհաս աւետարանն ի ձեռն Պօղոսի և ընկալան զհոգին...»

---

*) Ծանօթութեան տակ նշանակեցինք այն գլուխները, որոնք կարմիր թանաքով են միւս գլուխների նման, բայց խորանազարդով չեն որոշուած։

10. էջ 213—254 Կորընթաց. գլ. ա: Պաւղոս կոչեցեալ առաքեալ Յիսուսի Քրիստոսի...»

* Գլ. բ. էջ 226—231: Գլ. գ. 231—236: Գլ. դ. էջ 236—243: Գլ. ե. էջ 243—247: Գլ. զ. էջ 247—254:

11. էջ 255—264 «Ընթերցուած Բ. գլ. է: Այլ վասն որոյ գրեցէք առ իս,...»

12. էջ 264—305 «Ընթերցուածն երրորդ. Գլ. ը: Այլ վասն զոհի կռոց գիտեմք...»

* Գլ. թ. էջ 269—280: Գլ. ժ. էջ 280—292: Գլ. ժա. էջ. 293—305:

13. էջ 305—326 «Ընթերցուած Դ. գլ. ժբ. Այլ վասն հոգևորացն, եղբարք, ոչ կամիմ եթէ տգէտք իցէք...»

* գլ. ժգ. էջ 315—316. գլ. ժդ. էջ 316—326:

14. էջ 326—358 «Ընթերցուած Ե. գլ. ժե: Ցուցանեմ ձեզ եղբարք զաւետարան իմ, զոր աւետարանեցի ձեզ...»

* գլ. ժզ. էջ 352—358:

15. էջ 1130—1136 «Յովհաննու Ոսկեբերանի պատճառք թղթոյն Փիլմոնի: Նախ կարևոր համարիմ...»

16. էջ 1136—1159 «Պաւղոս կապեալ Յիսուսի Քրիստոսի և Տիմոթէոս եղբայր...»

## Բ. ԵՓՐԵՄ

17 Պատճառք երկրորդ թղթոյն Կորընթացւոց սուրբ հօրն Եփրեմի: Էջ 359—365:

ա. էջ 365—403 «Առ Կորընթացիս երկրորդ ընթերցուածս: Պաւղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամաւքն Աստուծոյ բանզի յառաջում թղթի...

բ. էջ 403—427 «Ընթերցուածս Բ: Այսուհետև ունիմք զգանձս զայս յամանս խեցեղէնս...»

գ. էջ 427—439 «Ընթերցուած Գ: Ցուցանեմք ձեզ եղբարք զշնորհսն Աստուծոյ, են...»

դ. էջ 439—474 «Ընթերցուած Դ: Այլ ես ինքն Պօղոս աղաչեմ զձեզ...»

Էջ 474-էն յետոյ գրուած է էջ 479, փոխանակ 475:

18. էջ 479—491 «Սբ հաւրն Եփրեմի պատճառ երրորդ թղթոյն: Կորընթացիքն յետ միաբանելոյն...»

19. էջ 491—496 Սբ հաւրն Եփրեմի պատճառ թղթոյն Գաղատացւոց: Գաղատ(աց)իքն աշակերտեցան ի Պօղոսէ...»

20. էջ 496—526 «Տունք ժթ. Ընթերցուած Ա: Առ Գաղատացիս: Պաւղոս առաքեալ ոչ ի մարդկանէ...»

21. էջ 526—558 «Ընթերցուած Բ: Ըստ մարդկութեանս ասեմ եղբարք...»

22. էջ 558—562 «Սբ հաւրն Եփրեմի պատճառք թղթոյն Եփեսացոց: (Ա)շակերտեալ էին աւետարանչէ անտի...»

23. էջ 562—624 «Պաւղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամաւքն Աստուծոյ սրբոց...»

24. էջ 625—630 «Եփրեմի պատճառք թղթոյն Փիլիպեցւոց: Հալածումն մծ...»

25. էջ 631—665 «Տունք թ: Պաւղոս և Տիմոթէոս ծառայք Յիսուսի Քրիստոսի...»

26. էջ 665—685 «Այլ խորհուրդ ընթերցուածս, երկու է: Այսուհետև եղբարք իմ ուրախ լերուք...»

27. էջ 685—690 «Սրբոյն Եփրեմի պատճառք թղթոյն Կողոսացւոց: Կողոսացիքն աշակերտեալ էին...»

28. էջ 690—734 «Տունք ժթ: Պաւղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամաւքն Աստուծոյ: Պարտ է նախ զպատճառ թղթիս ասել...»

29. էջ 735—739 «Սբ հաւրն Եփրեմի պատճառք Թեսաղոնիկեցւոց առաջին թղթին: Պօղոս իբրև հալածեցաւ...»

30. էջ 739—789 «Առ Թեսաղոնիկեցիս ա.: Պաւղոս և Սեղւիանոս և Տիմոթէոս, հայեաց դու և տես...»

31. էջ 789—795 «Սրբոյն Եփրեմի պատճառ թղթոյն Թեսաղենիկեցւոյ: Իբրև ընկալան Թեսաղոնիկեցիքն, զկնի արար զթուղթն առաջին,...»

32. էջ 795—823 «ա. Պաւղոս և Սեղւիանոս...»

33. էջ 823—851 «Գլուխք թղթոյն Եբր..յեցւոց: Եբրայեցւոց թուղթս թուի թէ չիցէ Պաւղոսի...»

34. էջ 852—1006 «Բազում մա-

նամբք և բաղում աւրինակաւք, կանխաւ խաւսեցաւ Աստուած ընդ հարսն մեր...»

35. էջ 1006—1012 «Սբ հօրն Եփփրեմի պատճառք ա. թղթոյն Տեմոթէեայ։ Առաքեալ զՏիմոթէոս...»

36. էջ 1012—1062 «Տուեք իբ։ Պաւղոս ծառայ Յիսուսի Քրիստոսի ըստ հրամանի փրկչին մերոյ։ Մեծ է պատիւ առաքելոյ...»

37. էջ 1062—1066 «Սբ հաւրն Եփրեմի պատճառ երկրորդ թղթոյն Տիմոթեայ։ Պաւղոս ծանեաւ հոգովն, որ էր...»

38. էջ 1066—1104 «Առ Տիմոթէոս թուղթ Բ. ընթր". ա. Պաւղոս ծառայ Յիսուսի Քրիստոսի կամաւքն Աստուծոյ ըստ աւետեաց...»

39. էջ 1105—1109 «Սրբոյն Եփրեմի պատճառ Տիտոսի թղթոյն։ Պաւղոս եթող զՏիտոս ի Կրիտէ...

40. էջ 1109—1129 «Առ Տիտոս ընթր. ա. Պաւղոս ծառայ Յիսուսի Քրիստոսի և առաքեալ Յիսուս Քրիստոսի. տես զխարդ անխտիր...»

1. ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ էջ 3. Սբ. մեկնիչս գոլով լուսահոգի Աղէքսանդրի պարոն Ռափայէլին և Ստեփանին, ետուն յիշատակ Պետրոս վարդապետին։ Ընթերցողքդ ասէք Աստուած ողորմի յիշատակ եթողաց 1207 թվին. ի Հիլալէ քաղաք։

2. էջ 4. Այս մեկնիչ գիրքս գոլով Բերթումի որդի Պետրոս վարդապետի Պետրոս աստուածաբան վարդապետին։

Պետրոս վարդապետ Բերթումեան ապա եպիսկոպոս, Աղամալեանցն է, որը Աստուածանմանութեան տես թիւ 1, ինչպէս եւ յաջորդ մեկնութեան թիւ 7-ի եւ այլ մեկնաբանութեանց հեղինակն է։

3. էջ 4. (անվարժ ձեռքով) «Եւ ի վայելումն մահտեսի Յովհաննեսի Անանեան Մազրեցույ։

**7**

# ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՌԱԿԱՑ ԱՒԵՏԱՐԱՆԻ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 23×16 սմ.։—ԿԱԶՄ, խաւաքարտ կաշեկազմ։—ՎԻՃԱԿ լաւ։—ՆԻՒԹ թուղթ բարակ եւ հարթ։—ԹԵՐԹ 111, ԳԱՏԱՐԿ սկզբից էջ I—VI, VIII. 194—196, 204—214։—ՏՈՂ 25։—ԳԻՐ նոտրագիր.—ԽՈՐԱԳԻՐ ՎԵՐՆԱԳԻՐՆԵՐ եւ ՍԿԶԲՆԱԳԻՐՆԵՐ կարմիր։—ԶԱՐԴ էջ 11. գեղեցիկ եւ թագաձեւ ԽՈՐՆԱԶԱՐԴԻ տեղ։—ԼՈՒՍԱՆՑՔՈՒՄ նշանակուած են վկայութեանց աղբիւրները.—ԹՈՒԱԿԱՆ ՌՄԿԱ=1812։—ԳՐԻՉ Անտոն աբեղայ։—ՏԵՂ Երուսաղէմ։—ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ էջ VII. 9—10. 187. 188—190. 191—193.—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ կազմի եւ կողքի ներսի կողմում կպցրած տպագրուած թերթերի վրայ կայ «Աղէքսանդր Ղազարեան Թահիրեանց»։ Էջ. I. կայ «№ 975».

Մ ա տ ե ա ն ս է

Գիրք մեկնութեան առակաց սրբոյ Աւետարանին։

Ցայժ գեղեցիկ մեկնութիւն և շնորհալի վարդապետութիւն շարադրեալ Նախջուանցի Աղամալեան Պետրոս արքեպիսկոպոսէ սրբոյ Էջմիածնի միաբանէ։ Ի փառս մեծին Աստուծոյ...։

ա. էջ 1—9 «Բան առ բարեմիտ ընթերցօղս յաղագս առաջիկայ առակացս։ Կանխաբարբառ և հոգիահրաշ Նախապատմող բանին...» Վերջաբանում էջ 8 ասում է

«Զի ոչ ինքնակամ փութացաք յայս, նաև ամենևին իսկ ոչ ունէաք զխորհուրդ ձեռնարկելոյ ի սոյն, բաւական համարելով զտեսութիւն բարունապետացն որք առաջ քան զմեզ։ Սակայն մօրս մերոյ հաւատոյ մեծի աթոռոյս Էջմիածնի բաջ քարտուղար եւ գրագիր յօշականցի Տէր Երեմիա աստուած իմաստ վարդապետն, սիրահարեալն ի գեղ առակացս Քրիստոսի, աղերս մատուցեալ խնդրեաց 'ի մէնջ ի մի ժողովել զամենայն առակսն աւետարանական, համառօտ բացագրութեամբ, ի յուսումն իւր և փափաքողաց։...»

բ. էջ 9—10. «Ոտանաւոր գրքոյս չինողի ի վերայ անուան իւրոյ։ Ցորդորակ ա-

*ռակաւոր բանիս Քրիստոսի։*

*Պարտէ մարդոյ գիտել զխմաստ և զհան-*
*ճար*
*Որով անճար պահու յինքեան գտցէ*
*զճար։*
*Եւ ընդունել զզարձուածս բանից ի-*
*մաստնաբար ևս։*

*Ցուների կարմիր սկզբնագիրները կազմում են հեղինակի, „Գևարոսի վարդապետի“, անունը։*

2. էջ 11—18. «Ցաղագս *թէ որքան հարկաւոր է հաշտութիւն եղբայրական։* Առակ. Մատթէոսի 5. 23. *բնաբան։ Մինչ մատուցանիցես զպատարագն Քրիստոս ի վերայ սեղանոյ...»*

3. էջ 18—22. *Ցաղագս տեսակաւորեալ հաւատոյ։* Առակ 2։ Մատթէոս. գլխ. 7. համար. 21։ *Փրկիչն աշխարհի Ցիսուս մեղաւորաց բերանովն...»*

4. էջ 23—26. «*Ցաղագս թէ որքան չար է խստասրտութիւնն* Առակ 13. Մատ. գլ. 11. համար 16։ «*Եւ երկնային իմաստութիւն Ցիսուս, որ նման իւր արար...»*

5. էջ 26—33. «*Ցաղագս առակին սերմանահանին։* Առակ գ. Մատ։ «*Երկնային մշակն յետ որոյ ստացաւ զբանական...»*

6. էջ 33—40. «*Ցաղագս սկզբան ի կատարածի մարդոյն։* Առակ 5. Մթ.։ «*Եզական վարդապետն տիեզերաց* Տէրն *մեր Ցիսուս Քրիստոս...»*

7. էջ 40—42. «*Ցաղագս գործունէական խոկման արքայութեան։* Առակ 6. Մատթէոսի 13. 31.։ «*Առակաբան երկրորդ Սողոմոն գերազանցն...»*

8. էջ 42—45. «*Ցաղագս աճողական զօրութեան սրբոյ աւետարանին։* Առակ 7. Մատթէ. 13. 13։ «Տէրն *մեր զաճողական զօրութիւն սրբոյ Աւետարանին...»*

9. էջ 45—49. «*Ցաղագս մեծութեանց արքայութեան երկնից։* Առակ։ 8. Մատթէ. 13. 44։ «*Սքանչելի խորհրդական* Տէրն *մեր Ցիսուս Քրիստոս որ...»*

10. էջ 49-53. «*Ցաղագս գեղեցիկ արքայութեան երկնից.* Առակ։ 9 Մատթ. 13. 45։ «*Գեղեցիկն յորդիս մարդկանց Ցիսուս կամենալով սիրահարս...»*

11. էջ 53—55. «*Ցաղագս ամենագրաւ զօրութեանց արքայութեան երկնից։* Առակ։ 10. Մատթ. 13. 47։ «Տէրն *մեր ցուցանել կամելով մեզ ամենակալ...»*

12. էջ 55—63. «*Ցաղագս թէ որքան հարկաւոր է թողուլն զանցանս եղբօրն։* Առակ 11 Մատթ. 18. 23։ «*Ոչ ոք կարէ զարքայութիւն ժառանգել եթէ...»*

13. էջ 63—70. «*Ցաղագս առաւել արժէ բոպէական գործն սիրով, քան տարեկան թարց սիրոյ։* Առակ 12. Մատթ. 20. 1. «Տէրն *մեր առ ի ցուցանել թէ որքան արգիւնաւոր է...»*

14. էջ 70—72. «*Ցաղագս թէ Աստուած յամենայն հասարակաց խնդրէ զպտուղ* Առակ 13. Մատթ. 21. 19. «*Եւ տեսեալ զթզենի մի ի վերայ ճանապարհին...»*

15. էջ 72—75. «*Ցաղագս թէ անհաւատարիմ կորուսանէ զայն, զոր ունի.* Առակ 14. Մատթ.» 21. 33։ «Տէրն *մեր զանհաւատարմութիւնն մշակաց յայգոյն...»*

16. էջ 76—81. «*Ցաղագս թէ որքան չար է յամառել 'ի կոչ երկնային հարսանեաց։* Առակ 15. Մատթ.» 22. 2. «Տէրն *մեր զմեծ վնաս և զանմտութիւն Հրէից և անհաւատից...»*

17. էջ 81—83. «*Ցաղագս միւս անգամ գալստեան* Տեառն *և վասն յարութեան մեռելոց։* Առակ. 16. Մատթ.» 24. 31. «*Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ...»*

18. էջ 83—91. «*Ցաղագս գալստեանն Քրիստոսի.* Առակ 17. Մատթ. 25. 1. «*Ցայնժամ նմանեսցի արքայութիւն երկնից տասն կուսանաց...»*

19. էջ 92—100. «*Ցաղագս մարդկային անկման աղետից և Նորին կանգմանն.* Առակ 18. Ղուկաս։ «*Այր մի եկանէր յԵրուսաղէմէ յերիքով անկաւ ի ձեռս...»*

20. էջ 100-105 «*Ցաղագս թէ յարատև աղօթքն առնուն, զոր խնդրեն։* Առակ 19. Ղուկաս 11. 5. «*Եւ ասէ ցնոսա, ո՞վ է 'ի ձէնջ մարդ, որոյ իցէ բարեկամ...»*

21. էջ 106—111. «*Ցաղագս թէ ագահաց սիրտն ոչ յագի.* Առակ. 20. Ղուկ. 12. 16։ «Տէրն *մեր տեսանելով զստացիկ յարումն ագահաց...»*

22. էջ 111—112. «*Ցաղագս թէ զապառնի գալոցն և զգործոյն վերջն մըտածել և ապա ձեռնամուխ լինել։* Առակ» 21. Ղուկ. 14. 28։ «*Ո՞վ ոք 'ի ձէնջ որ*

կամիցի չլինել զաշտարակ և ոչ նաև...»

23. էջ 112—114. «Ցաղագս հոգևոր պատերազմի որ ընդ անմարմնոց: Առակ. 22. Ղուկ. 14. 31: «Կամ ո՞ր թագաւոր երկեալ տայցէ պատերազմ ընդ...»

24. էջ 114—118. «Ցաղագս գիւտի մոլորեալ ոչխարին: Առակ. 23. Ղուկ. 15. 4: «Ո՞վ ոք իցէ ի ձէնջ մարդ որոյ իցէ հարիւր ոչխար...»

25. էջ 118—133. «Ցաղագս վասն անառակ որդւոյն: Առակ. 24. Ղուկ. 15. 11: «Առն միոջ էին երկու որդիք: Նկարագրապէս...»

26. էջ 133—140. Ցաղագս մեծատան և տնտեսին: Առակ. 25. Ղուկաս. 16. 1: «Այր մի էր մեծատուն, որոյ էր տնտես և եղև...»

27. էջ 140—149. «Ցաղագս ագահաց: Առակ. 26. Ղուկաս. 16. 19: «Այր ոմն էր մեծատուն և ետուն նմա անդք...»

28. էջ 149—158. «Ցաղագս զգօրութենէ յարատև աղօթից: Առակ 27. Ղուկասու 18. 1: «Ասաց և առակ մի նոցա առ այն՝ թէ պարտ է յամենայն ժամ...»

29. էջ 153—156. «Ցաղագս զկե(ր)պ աղօթիցն աւանդելոյ: Առակ. 28. Ղուկաս 18. 10: «Արք երկու ելին ի տաճարն կալ յաղօթս մինն...»

30. էջ 156—161. «Ցաղագս երկայնմըտութեան Աստուծոյ: «Առակ. 29 Ղուկ. 13. 6: «Թզենի մի էր տնկեալ յայգւոջ իւրում և եկն...»

31. էջ 162—173. «Ցաղագս արքայութեան տեառն մերոյ: Առակ. 30. Ղուկաս. 19. 12: «Այր ոմն ազնուական գնաց աշխարհ հեռի առնուլ...»

32. էջ 173—175. «Անիւաւոր(°) առ առակմն»: Մի քանի տուն ոտանաւորներ:

33. էջ 175—183. «Քարոզ ի բանն այն՝ որ ասէ Սիրաք: Լաւ է երթալ ի տուն սգւոյ՝ քան ի տուն ուրախութեան: Ցաղագս ննջեցելոց հարց (լուսանց.քում): Երթալ ի տուն սըգոյ... գի՞նչ օգուտ ունի...»

34. էջ 183—185. «Ցաղագս սրբազանի երկիւղի: Գլ. 32: Աստուծոյ և տեառն մերոյ...»

35. էջ 186—187. «Ցանկ (երեսուն երկու) գլխոյ», ապա մի ոտանաւոր «Ով որ. Գրիգորիոս, հայր մեր քաղցրագին. և»:

1. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ էջ 188—192: Արդ ի յաւարտումն փոքրաքանակ գրքոյս՝ նախ մեծաւ շնորհակալութեամբ և երկրամերձ արտասուալի դիմօք փառաւորեմ զահաւոր Ամենասուրբ Երրորդութիւն համագոյ, որոյ կարող և հզօր աջողութեամբն հասի յաւարտումն սորին, որ է պտղաւէտ աւետարանական առակացն Քրիստոսի. մեկնութիւն փրկաւէտ համառօտեալ...:

Երկրորդաբար մաքրեալ մտօք գիտաւորութեան՝ լիալիր տալ զողորմին քրտնաջան շարագրողի և հաւաքողի աշխատողի ի սմին Տեառն Պետրոսի հեղահօգի և Բանիքուն՝ հոգեշահ գիտնական վարդապետի, և ներկայ անձանձրոյթ համեղ ղասասացի, և զշինջեալ ծրագուման լուսաւորողի անթերապէս, և պասքումն փափաքողաց բաւական. զովացուցանող ինեւ Սրբոյ Աթոռոյս Միածնաիջի և իմոյս իսկ հոգեկցի՝ և ցանկալւոյ դաստիարակի, որ և յուսամ ի տէր աշխատմամբ սորին. գոն և քանի մի՝ համառօտ բարեւլի սեղանաց հոգևոր կերակրոց և խորտկաց նախապատրաստումն ջամբել մանկանց մօրս լուսոյ Հայաստանեայցս եկեղեցւոյ:

2. էջ 193—195 ՎԱՍՆ ՏԱՌԱՊԵԼՈՅՍ ԱՆՑՔՆ ՅԻՇԱՏԱԿԵՑԻՑ.

Նաև արդ ուրեմն ամենայն Սուրբ Գիրք վկայեն թէ՝ մարդկայինս հոգի պատկեր Աստուծոյ գոլով առ ի աստուածայինն ցանկայ հանապազ: Բայց մարմինս այս նիւթական, որ ի չորից տարերաց բաղկացեալ է՝ առ ի ընութեանց տարրաց հետևի, որպէս քաջին քննողաց յայտ է...: Ցաղագս որոյ սոյն սակս և մերն փոխարկելով ցանկացոյց մեզ 'ի տեսութիւն սրբոց տեղեացն տէրունականաց, այսինքն է տնօրաշրջիկ սրբոյ քաղաքին Երուսաղէմի, որ և ՌՄԾԸ թուականի հայկազնեանս սեռի, բազում բաղձանօք և փափագելեաւ 'ի սարկաւագական աստիճանի ելեալ 'ի յերկրէն Թիֆլիզոյ ապաւինեցաք յոյոն ընաւից Քրիստոս: Եւ ուղի անկեալ գիմեցաք զցանկալին մեր 'ի ՌՄԾԹ թուին և ի մարտ ամսոյ ԺԵ.ին օրն կիրակի, որ էր տնտեսին, աշխատանօք բազմա

Հասաք ի ս. քաղաքն Երուսաղէմ։ Եւ զկնի կատարմանց ուխտից և երկրպագութեանց սրբոց տեղեաց տէրունականաց, կայանս առաք 'ի վանսն Սրբոց Յակովբեանց երջանիկ առաքելոցն Քրիստոսի առ 'ի միաբանութեան. և յետ ընթացից ամանակաց հոլովելոց ըստ սովորութեանց իւրեանց անցելոյ ամի միոյ և ի հասանելոյ 'ի տօնն այն, որ կոչի կաթուղիկէ յեկեղեցւոյ, ըստ սովորութեան Ս. Աթոռոյս որ ձեռնադրէին սարկաւագունս ընտրեալս 'ի աստիճան քահանայութեան, այսինքն կուսակրօն աբեղայութեան, որ և նուաստութիւնս մեր գոլով սարկաւագ 'ի երկրէն իմմէ՝ հրաւիրեցին և զմեզ 'ի սարկաւագութենէ ի յաբեղայութիւն, ըստ ընտրողութեան սրբազան եպիսկոպոսաց Աթոռոյս և համահաճութեամբ գերերջանիկ Թէոդորոս սրբազան Պատրիարքի տեղույս, որ է փոխանորդ աթոռոյս երջանիկ և արդար անուան առաքելոյն Յակոբայ. ուրեմն և մեր նուաստութիւնն զիջեալ զկամս նոցին հնազանդեցաք, ըստ հրամանաց սրբազնութեանց նոցունց յանձնառու եղաք զլուծս աբեղայութեան ի պարանոցի մերում 'ի թուականիս հայոց ՌՄԿ. և 'ի յունիս ամսոյ Դ-ին։

Արդ՝ չէինչ երկարեմ զբանս ապարդիւնս՝ այլ զՀեղինակ գրքոյս յայտնեսցուք, որ է այսպէս, Անտօն անուամբ սևակիրս տեսանելով զայս գիրքս չքնաղ, որ է մեկնութիւն առակաց սրբոյ Աւետարանին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի ձեռն կարգակից եղբօրն իմոյ ջուղայեցի Գրիգոր սրբակրօն և համեստափայլ վարդապետի, ցանկացայ ստանալ զնա, որ և փափագմամբ մերում թելադրութեամբ և յորդորմամբ սոյն հեղահոգի եղբօրս սկսեցի գրել. ըստ կարեաց իմոց աւարտ հասուցի. ուրեմն երեսս անկեալ խնդրեմ հանդիպողքդ... Ես ամէն։

*** ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ 1. Յիշատակարանի, որը՝ սխալմամբ տեղափոխուած է։

Նաև ի վերջ բանիս տալ զողորմին քաջ քարտուղարի Սրբոյ Գահիս Մատթէոս Նորաբողբոջ գիտնական վարդապետի յատուկ եղբօրս իմ ըստ հոգւոյ, մերում շահեցողի, և սորին բուն օրինակն պարգևողի, զոր ըղձիւ ընկալեալ և գըրմամբ յաւարտ հասուցաք համառօտութեամբ շնորհիւ Տեառն ի յաղքատ ծերութեանս. որ մաղթեմք, որոյ և յիշատակն օրհնութեամբ մնասցէ ընդ իմում Կարապետ նուաստիկ մեղապարտ վարդապետիս Տիգրանակերտցւոյ, որ երբեմն անդ դէտ և նարդենիս ծառայ Սրբոյ Իջման տեղոյն և ներկայ Սրբազան վեհին Տեառն Սիմէոնի հեզաբուն և սրբաշնակատար կաթողիկոսի և ծայրագոյն քահանայապետի ամենից հայոց և իմում իսկական հոգևոր ծնողիս ընդ հոգւոյն Աստուծոյ տնօրինման. որ և կամ այժմ յուսացեալ 'ի Տէր աղքատութեամբ իմով՝ ակն ունելով այցելութեան, և սովաւ մխիթարեալ. ի 1218 արամեանս և յունվարի 24 աւարտումն։ Արդ զկնի նուաստութեան մեր օգտողքդ տացէք զողորմին...։

Հուսկ ապա յիշեսջիք զվերստին օրինակող սորին 'ի գաւառէն Թիֆլիզոյ և 'ի Ծինող կոչեցեալ գիւղէն. անարժան և մեղսամած Անտօն աբեղայս, և զծնողս իմ զԱռաքելն և զԹամար. և զայլ ամենայն արիւնամերձ ընտանիսն իմ, զկենդանիս և զհանգուցեալսն 'ի Տէր։

Եւ առատն ի բարիս Աստուածն համայնից յիշողացդ և մեզ յիշեցելոցս առ հասարակ ողորմեսցի Ամէն։ (Ապա չորս տող ոտանաւոր)։

***36. էջ 199—205 (մնացանք յիշել իւր տեղում հետեւեալը)։ «Քարոզ առ այն թէ բանն մարմին եղև։ Համբուրեսցէ զիս ի համբուրից բերանոյ իւրոյ. Վարդապետք ասեն թէ...»

## 8

## ԿԵՐԱԿՈՒՐ ՔԱՀԱՆԱՅԻՑ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 20,5×16,7 սմ:—ԿԱԶՄ խաւաքարտ, սեւ լաթով պատած:—ՎԻՃԱԿ լաւ:—ՆԻՒԹ թուղթ պինդ եւ հարթ:—ԹԵՐԹ 41:—ԴԱՏԱՐԿ սկզբից երկու եւ վերջից երեք թերթ:—ՏՈՂ. 31:—ԳԻՐ նոտրագիր երկսիւն, իւրաքանչիւրը 15,7×6:—ԽՈՐԱՆԱԶԱՐԴ մատիտով էջ 5:—ԹՈՒԱԿԱՆ 1828:—ԳՐԻՉ Մովսէս գրիչ Կիրակոսեան:—ՏԵՂ. Կարմիր վանք:—ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ սկզբի ա. թերթի ա. էջ. եւ էջ 72:—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ էջ 1, եւ վերջին թերթի բ. երեսում «Ներս. Յոգեւոր դպրանոցի» կնքադրոշմը:

### Մատեանս է Կերակուր քահանայից

Թարգմանեալ յառաջագոյն ի լատին լեզուէ ի հայ բարբառ, ի ձեռն Վարդանայ ուրումն կրօնաւորի: Եւ ապա հրամանաւ տեառն տեառն Ստեփաննոսի առաքելապսակ արքեպիսկոպոսի Զմիւռնիոյ նոր շարադրեալ ըստ հայկաբանութեան կարգի, յաւելմամբ... ի Միրզայեան Տէր-Յովհան Վանանդեցի վարժապետ քահանայէ Զմիւռնիոյ սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյն 1822: Ի 16 յուլիսի:

1. էջ 3. Հեղինակի Տ. Տ. Ստեփաննոս արքեպիսկոպոսին գրած «Ուղերձ Նուիրանաց».

2. էջ 5—59. «Յաղագս պատւոյ քահանայից» առանձին գլուխ, որին յետեւում է տասնեւինը գլուխ:

3. էջ 59—70. «Յաղագս թերութեանց, որք հանդիպին ի մատուցման սրբոյ պատարագին» չորս պրակ:

4. էջ 70—72. «Առ ազդեցութիւն հեղինակիս առանց ինչ յաւելման»: Վա՜հ, ով թշուառ...»:

Այս գիրքը տպագրուած է Ս. Էջմիածնում "ի հայրապետութեան տեառն տեառն Ը. Յովհաննու Կարբեցւոյ սրբազնակատար կաթուղիկոսի ամենայն Հայոց, եւ ասպետի Աղէքսանդրի Նեւսկու եւ Վլադիմերի առաջնոյ, որոյ եւ բարձրագոյն հրամանաւ տպագրեցաւ յամի տեառն 1841 ի Թուին Հայոց ՌՄՂ. ի 4 դեկտեմբ. ի տպարանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, որ յատուածակերտ գերագահ աթոռս սուրբ Էջմիածին" Գ.. Ջար. Հայկ. մատենախօսութիւն:

1. ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ էջ 1. Եւ այժմ նորոգ օրինակեալ ի ձեռն նորին ինքեան տէր Յովհաննու Վանանդեցւոյ. ի բարեաւ վայելումն հոչակաւոր աթոռոյն Մշու սրբոյ Կարապետի արդիւնաւոր նուիրակի տեառն Մկրտիչ քաջաքարոզ վարդապետի, ի յիշատակ հիմնաւոր մտերմութեան՝ որում տէր տացէ հաստատ ամօք վայելել:—1824 յապր". 23: Ի դպրատանն Զմիւռնիոյ:

Եւ արդէն վերստին օրինակեցաւ ի նոյնոյ բնագրէ ես ձեռամբ Կարնեցի երբեմն մանկավարժ, երբեմն և գործակալ Հրաշալի Կարմիր վանից և երբեմն (կամ և այժմ բոլորովին) թափառական և աստանդական լեալ, այրի (Նորոգ) Մովսէս գրչիս Կիրակոսեան. ի վայելս իմոյ անձին և յատուկ այնոցիկ, որք զճշմարտութիւնն սիրեն: 1827. դեկտ". 28. ի Կարնոյ մերձ՝ սուրբ Աստուածածնի Հրաշալի Կարմիր վանքն:

Մովսէս գրչի մասին համեմատիր թ. 5-ի յիշատակարանը:

2. էջ I. 1827. Դեկտ. 28: Ժամ 11 երրորդ երեկոյեան սկսեցի և աւարտեցի 1828 Յունվարի 3: Ի վեցերորդ ժամ... կէսն հինգ օր լինի և պակաս:

## 9.

## ԱՍՏՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 15×10,5 *սմ:*—ԿԱԶՄ *տախտակեայ, հին կաշեկազմ:*—ՎԻՃԱԿ *միջակ. էջ 136 թանաք թափած:*—ՆԻՒԹ *թուղթ պինդ եւ անհարթ:*—ԹԵՐԹ 119:—ԴԱԴԱՐԿ *էջ* 114—122:—ՏՈՂ 15:—ԳԻՐ *անվարժ նոտրագիր:*—ԽՈՐԱԳԻՐ, ՎԵՐՆԱԳԻՐ, ՍԿԶԲՆԱԳԻՐ, *կարմրատառ:*—ԹՈՒԱԿԱՆ *ժԸ° դար:*—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ *էջ* 1 «№ 200» *մի քանի տող ջնջուած գիր. էջ* 3 *մատիտով «աստեղաբաշխութիւն». էջ* 5 *եւ* 238 *«Ներ. հոգ. դպրանոցի» մատենադարանի կնքադրոշմը:*

**Մատեանս է Աստղաբաշխութիւն**

1. էջ 5—113 «Վասն աստեղաբաշխութեան և զրանին և գնացից աստեղաց ընդ միմեանս և հայեցուածոց:

2. էջ 123—192. «Ցաղագս երկնից շարժման ի նուաստ Յովհաննէս Երզնկացոյ շարադրեալ իմաստնոց բանից. ի խընդրոյ բարեպաշտ և գեղազարդ պատանուն Վաղթանկայ. և նարդեան ի խնդրոյ իշխանին Պաղտասարաղայի Գէորգեան մանուկ իմաստնասիրի, զոր տէրն բացէ զմիտս նորա. ամէն: Արարչագործ Աստուած իմաստութեամբ...»

3. էջ 192—193. «Գուռն վեց հազորեկին, զոր արարեալ է Անանեայ Շիրակացին. օգնեա հոգիդ Աստուած և հասոյ յաւարտ բանիցս: Գիտելի է կերպիւ իմն համարողութիւն, որ ասի գ.ռեակ...»:

## 10.

## ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՒՂԻԿԷՈՒԹԵԱՆ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 17,2×10,5 *սմ:*—ԿԱԶՄ *տախտակեայ, հին կաշեկազմ. կողքերի ներսի երեսները լաթով պատած:*—ՎԻՃԱԿ *վատ. թերթերը տժգոյն, ծայրերը սեւացած:*—ՆԻՒԹ *թուղթ պինդ եւ անհարթ:*—ԹԵՐԹ 108:—ԴԱՏԱՐԿ *էջ* 208—213:—ՏՈՂ 15:—ԳԻՐ *նոտրագիր միասին* 12,5×7.3 *սմ:*—*Անշուք կարմիր* ՎԵՐՆԱԳԻՐՆԵՐ *եւ* ՍԿԶԲՆԱԳԻՐՆԵՐ:—*Մի տգեղ* ԽՈՐԱՆԱԶԱՐԴ:—ԹՈՒԱԿԱՆ ԺԸ *դար:*—ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ *էջ* 207,—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ *կազմի վրայ գրուած է «քրիստոնէական վարդապետութիւն»: էջ* 1. *եւ* 216. *«Ներս. հոգեւ. դպրանոցի» մատենադարանի կնքադրոշմը: Էջ* 1. *կայ «291 համար». էջ* 208—213 *դուշով սեւացուցած. էջ* 214—216 *անվարժ ձեռքով գրչախաղեր:*

**Մատեանս է**

*ճշմարիտ նշանակութիւն կաթուղիկէութեան ի հայրապետութեան ամենայն Հայոց Տեառն ղազարու ճշմարտասէր կաթուղիկոսին:*

1. էջ 2—3. «Առաջաբանութիւն գըրոցս: Որովհետեւ պարի Կղեմէս զերիս մեծամեծ հատորս գրեալ է ընդէմ Հայոց, ապա և մեք պարտեմք պատասխանել նմա: Քանզի մեծ բանն նորա այս է, մեք Հայքս ունեմք հնազանդ կաթուղիկէ եկեղեցւոյ, վասն այսորիկ և մեք կամեցաք մեկնել ի մէջ այս գրքիս, թէ զանազան նշանակութիւն առել եւ ցուցանել կաթուղիկէ, որ մեք Հայքս քան զամենեսեան առաւել հնազանդ հետեւողք եմք կաթուղիկէ եկեղեցւոյ:

2. էջ 3—6. Գրքիս բովանդակութեան գլուխների ցանկը:

3. 7—36. «Ա. Նշանակութիւն կաթուղիկէութեան: Կաթուղիկէ է Հռոմոց բարբառ...»

4. էջ 36—116. «Բ. և ճշմարիտ (կա-

*թուղիկէութեան) նշանակութիւն։ Երկրորդ և ճշմարիտ և մանաւանդ...»*

5. 116—140. *«Յաղագս հասարակ հերձուածողութեան. (երկարնակաց) գուցէ հարցանիցէ ոք...»*

6. 140—152. *«Յաղագս մոլորեցուցչաց կարգաւորաց մերոց։ Իսկ զի՞նչ ասասցուք...»*

7. 153—158. *«Ա. նշան (հերձուածողաց նոցա գառնազգեստ կեղծաւորութեան նոցա)։ Քանզի նախ և առաջ,..»*

8. 158—162. *«Բ. Նշան իմաստութեան նոցա։ Հերձուածողաց...»*

9. 163—165. *«Գ. նշան հակաճառութեան։ Երրորդ նշան հերձուածողաց, զոր նախագուշակեալ...»*

10. 165—167. *Դ. նշան առաքելանուամբ որջորջելն նոցա։ Չորրորդ նշան հերձուածողաց...»*

> *Վերնագրների վերաբերեալ փակագծների մէջ եղած բառերը եւ հետեւեալ* 11—16 *ամբողջ վերնագիրները ցանկից են առնուած։*

11. 167—169. *«Ե. նշան իգական քաղցրախօսութիւն նոցա։ Հինգերորդ նշան հերձուածողաց, զոր...»*

12. 169—171. *«Զ. նշան իգասիրութեան։ Վեցերորդ նշան, զոր նախագուշակեալք են...»*

13. 171—177. *«Է. նշան առասպելախօսութեան նոցա։ Եօթներորդ նշան հերձուածողաց, զոր նախագուշակեալ է...»*

14. 177—197. *«Ը. նշանն մոացածին հաւատոց քարոզութեան։ Ութերորդ նշան հերձուածողաց զոր նախագուշակեալ է Աստուած...»*

15. 197—200. *«Թ. նշանն նոցա երկպառակութեան և հերձուածն է։ Իններորդ նշանն հերցուածողաց զոր նախագուշակեալն են առաքեալն...»*

16. 200—207. *«Ժ. նշանն ի ժողովոց հասարակ աղօթից կատարելն է։ Տասներորդ և վերջին նշան հերձուածողաց զոր...»*

> *Այս տասնուչորս գլխով վերջանում է։ Բայց ըստ ցանկի էջ* 4—6 *պէտք է լինէին եւ հետեւեալ գլուխները։*

17. *ԺԱ. Միամտաց գայթակղութեանն։*

18. *ԺԲ. Թշնամութիւն խաչին Քրիստոսի։*

19. *ԺԳ. Քրիստոսի Աստուածութեան թշնամութիւն։*

20. *ԺԴ. Հայհոյութեան հոգւոյն սըրբոյ։*

21. *ԺԵ. Նշանն հայհոյութիւնն սըրբոցն։*

22. *ԺԶ. Նշանն թշնամութեան թագաւորացն։*

23. *ԺԷ. Գայլարնութիւն սրտմտութեան նոցա։*

24. *ԺԸ. Նշան սուտակասպասութիւն նոցա։*

25. *ԺԹ. Լուծանողութեան Յիսուսի։*

26. *Ի. Վերջինն հերցուած հաստատութեան նոցա։*

27. *Առաջին խրատ առ միամիտ մոլորեալս վասն չարագործ կարգաւորաց մերոց։*

28. *Երկրորդ խրատ առ նոսս, վասն հերձուածող կարգաւորաց ազգին մերոյ։*

29. *Աղօթք շարագրողի գրքուս առ Քրիստոս վասն դարձման՝ երկադաւանաց ազգին իւրոյ։*

1. ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ *էջ* 207. *(խիստ անվարժ ձեռքով)։ Յիշատակ է այս գիրն տէր Գէորքի* ՌՄԽԹ—1800.

## 11.

## ԳԻՐՔ ՎԿԱՅՈՒԹԵԱՆՑ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 16,5×10 *սմ։*— ԿԱԶՄ *տախտակեայ, հին կաշեկազմ ներսի կողքերը լաթով պատած։ Կաշեայ փականքով։* — ՎԻՃԱԿ *վատ, շատ տեղ դեղնած, սեւացած եւ անընթեռնլի, թերթեր են պակաս* —ՆԻՒԹ, *հարթ թուղթ։* — ԹԵՐԹ 297։ — ՏՈՂ 23։ — ԳԻՐ *նոտրագիր միասին* 11×6 *սմ։*— ԽՈՐԱԳԻՐ, ՎԵՐՆԱԳԻՐ *եւ* ՍԿԶԲՆԱԳԻՐ *կարմրատառ։*— ԽՈՐԱՆԱԶԱՐԴ *էջ* 1. *երփնագոյն։* — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ *էջ* 110։ —

ԹՈՒԱԿԱՆ ԺԷ դարից ոչ առաջ։ — ԳՐԻՉ Աղէքսա՞նդր։ — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ կազմի մէջքին «գիրք վկայութեան» էջ 3 եւ 594 «Ներս. Հոգեւ. դպրանոցի» կնքադրոշմը. էջ 456 եւ 592 ուղղանկիւնի կնքադրոշմ, ուր կարդացւում է «Քի ծո (Քրիս. ծառայ) Յ ո վ հ ա ն ն է ս»։

## Մ ա տ ե ա ն ս է

*Վկայութիւնք պիտանիք և հարկաւորք յաղագս առխպատրաստ գոլոյ ի ձեռս խնդրողաց բանի պէտս (անվերծանելի բառ) և թէ ի պէտս վճարան(ողաց°) ...° ի պէտս գիտութեան (բառ անվերծանելի) յաստուածայնոցն... (աշխատութեամբ ումեմն Աղէքսանդրի։*

1. էջ 1—52. Վկայութիւններ հին և նոր կտակարանից, որ են ըստ կարգի. Ա. Երկրորդ օրինաց։ Բ. Ղևտականք։ Գ. Դ. Ե. (անընթեռնլի)։ Զ. Եզրաս և. Է. Մակաբայեցւոց։ Ը. Յոբ։ Թ. Սիրաք։ Ժ. Սողոմոն։ ԺԱ. Եկլեսիաստէս որ է ժողովող։ ԺԲ. Եսայի։ ԺԳ. Երեմիայ։ ԺԴ. Միքայ։ ԺԵ. Դանիէլ։ ԺԶ. Յովէլ։ ԺԷ. Աբդիոն։ ԺԸ. Սոփոնիայ։ ԺԹ. Թուղթ Պօղոսի առ Հռովմայեցիս։ Ի. Թուղթ առաջին կորնթացոց։ ԻԱ. երկրորդ Կորնթացոց։ ԻԲ. Գաղատացւոց։ ԻԳ. Եփեսացւոց։ ԻԴ. Փիլիպեցւոց։ ԻԵ. Կողոսացւոց։ ԻԶ. Թեսաղոնիկեցւոց։ ԻԷ. Երկրորդ Թեսաղոնիկեցւոց։ ԻԸ. Առ Տիմոթէոս առաջին։ ԻԹ. Առ Տիմոթէոս երկրորդ։ Լ. Տիտոս։ ԼԱ. Եբրայեցւոց։ ԼԲ. Յայտնութիւն և տեսիլ Յովհաննու աւետարանչի։

2. էջ 52—109. Վկայութիւնք 'ի գրոց սրբոյն Դիոնէսիոսի. իսկ այն, որ մերձ բանին հանդէպ լուսանցքին բենն է, նշանակէ թէ բանս այս 'ի բնաբանէն է, իսկ մենն, այսինքն թէ ի մեկնչէն։—Հայրենաւանդ լուսափայլութիւն... ևն։

ա. էջ 98—109. Ոչինչ է յիմացականացն ամենայնի ընդ գերունակութեան պատճառն։—Եւ դարձեալ ի վեր ելանելով...

3. էջ 110—122. «Յաղագս գրոց ժողովեալ 'ի բանից սրբոյն Գրիգոր Աստուածաբանի։ Զինչէ իմաստ...»

4. էջ 122—126. «Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի ասացեալ Եւ արդ տէր բարեբար... ևն։

5. էջ 126—160. «Վկայութիւնք Սըրբոյն Կիւրղի եպիսկոպոսապետին Աղէքսանդրի ի պարապմանց գրոց։ Քրիստոսից անուն ոչ սահմանի զօրութիւն... ևն։»

6. էջ 160—162. «Մեծին Աթանասի է բանս 'ի պարապմանց գրոց։ Խոստովանիմք զնա որդի Աստուծոյ... և։»

7. էջ 162—163. ա. «Գրիգոր Սքանչելագործն ասէ։ Որ ոք ասէ այլ ոք... ևն։»

8. էջ 163 . բ. Բարսղի Կեսարացւոյ ասացեալ։ Թէ ոք ի վերայ մերոյն... ևն։»

9. էջ 163—201. «Ծաղկաքաղ հաւաքեալ ի բանից Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի յաւետարանական մեկնութեանէ, որ Ը գլխոյն Յոհաննու։ Յորժամ վասն...»

10. էջ 201—249. «Խրատք Սրբոյն Նւազրեայ, անմարմնոյն ի մարմնի որ զարդ և մերն անապատի կոչի։ Ոգեշահք և զգուշականք։—Յիշման տեառն մերոյ մեալ իմեզ...և»։

11. էջ 249—250. «Ամբրոսիոս ասէ։ Որ անարժանութեամբ առնու զՔրիստոս... ևն։»

12. էջ 250—258. «Օգոստինոս։ Աշխարհս այս է պանդխտութիւն... ևն։»

13. էջ 258—260. Հերոնիմոսի ասացեալ փ։—Միշտ գործեա ինչ բարի... ևն։»

14. էջ 260—265. «Գրիգորի ասացեալ։—Ով ոք իցէ ի հաւատացելոյն... ևն։»

15. էջ 265—268. «Բեռնարտոսի ասացեալ փ։ Առաքինութիւն աշխատութիւն խնդրի...»

16. էջ 268—270. «Սենեքայի ասացեալ փ։ Սկիզբն փրկութեան է ճանաչումն... ևն։»

17. էջ 270 . ա. «Թուլիոսի ասացեալ փ։ Հեշտութիւն չիջուցանէ... ևն։»

18. էջ 270 . բ. «Եզիդորոսի ասացեալ փ։ Որ գահերեցութեան ցանկայ... ևն։»

19. էջ 271—306. «Հասարակ վարդապետաց ասացեալ, զորոց անուանքն ոչ գտաք։ Մեծ են գործք աստուածայինն... ևն։»

20. էջ 306—335. «Յերանելոյն Սարգսի շնորհալից վարդապետի բանից ժողովեալ 'ի կաթուղիկէից մեկնութիւնէ։ Առնելի է Քրիստոսի... ևն։»

21. էջ 335—420. «Ի մեկնութիւնէ

Սրբոյ պատարագին Տեառն Ներսէսի Լամբրոնացւոյ արքեպիսկոպոսին Տարսոնի Կիլիկեցւոյ: Ասէ սուրբն Նիրեմ ի ճառ... ևն:»

22. էջ 420—424. «Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանին է բանս: Քանզի տէրունական... ևն:»

23. էջ 424—428. «Նորին տեառն Ներսէսի Լամբրոնացոյ: Քանզի նշխարհ պատարագին մնացուածոյ... ևն:»

24. էջ 429—489. «Եւ սորին Գրիգորի Տաթեւացւոյ Հարցմանց գրոց ժողովեալ աշխատասիրութեամբ հայոց Աղէքսանդրի թշուառ ոգւոյ: Զի՞նչ է ծարագոյն միաւորութիւն բանին... ևն:»

25. էջ 489 – 592. «Յալբերթ գրոց ժողովեալ ի նոյն Աղէքսանդրէ բանի ծառայէ» (տես գրքիս վերնագիրը)

26. էջ 592—594. (պակաս) «Համառօտութիւն հնոյն առ նորս արարեալ սրբոյն վանականայ վարդապետի: Երկինք=Եկեղեցի: Արեգակն ակն=Աւետարան: Լուսին=Օրէնք: Արուսեակ=Յովհաննէս Մկրտիչ: Ընդհանուր աստեղք=Բոլոր քրիստոնեայք ևն: Յկե օր տարոյ=Զօդուածքս: Երկոտասան ամիսք=Երկոտասան անդամք: Է. օր շաբաթու=Է զգացութիւնք: Դրախտն=Եկեղեցի: Ծառ կենաց=Խաչն: Գիտութեան պտուղ=Քացախ և լեղին: Ադամ=Քրիստոս ևն:—Չորս գետքն=Աւետարանիչքն...: Աբէլ=Նախավկայն... Մաթուսաղայ=Սիմէոն ծերունին ևն: Տապանն չորեք կուսի=Կտաւն դ. տըտանոց: Պատուհանին բացումն=Կողին բացումն ի խաչին: Ագռաւն չդարձաւ=Սատանայ անկաւ ի դժոխս: Աղաւնոյն արձակումն=Հոգոյն աւանդումն ևն ևն:

## 12.

## ԺՈՂՈՎԱԾՈՅ

**ՄԵԾՈՒԹԻՒՆ** 13×11 *սմ:* — **ԿԱԶՄ** *տախտակեայ, հին կաշեկազմ. կաշեայ կապելիքի մնացորդ:* — **ՎԻՃԱԿ** *ընդհանրապէս լաւ. ժամանակից մաշուած:* — **ՆԻՒԹ** *թուղթ հարթ:* — **ԹԵՐԹ** 301: — **ԴԱՏԱՐԿ** *էջ* I—XII. 478, 562—563, 570—589: 517 *քառակուսի տողած:* — **ՏՈՂ** 20—22: — **ԳԻՐ** *նոտրագիր, իսկ էջ* 244—320 *բոլորագիր:* — **ԽՈՐԱԳԻՐ, ՎԵՐՆԱԳԻՐ, ՍԿԶԲՆԱԳԻՐ** *կարմիր, գլուխների սկզբնատառերը թռչնագիր:* — **ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ** *մի քանի հատ սիրուն. լուսանցքում տեղ տեղ յաւելուածներ:* — **ԹՈՒԱԿԱՆ ՌՀԵ**=1626: — **ԳՐԻՉ** *Յեսայեայ եպիսկոպոս:* — **ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ** *էջ* 27, 203, 204, 379, 528: — **ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ** *Կազմի մէջքին գրուած է «քառագիրք» նոյնն եւ էջ* III, *ուր եւ կայ «*287 *համար».* *էջ* 567—569 *փրացերէն. էջ* 1 *եւ* 569, 570 *«Ներ. հոգ. դպրանոցի» մատենադարանի կնքադրոշմը. էջ* 575 *երեք մեծ տառ.* 577 *գրչով նկարած թռչուն:*

**Մ ա տ ե ա ն ս  է  ժ ո ղ ո վ ա ծ ո յ**

### Ա. ԲԱՌԱՐԱՆ

1. էջ 1—14 «Բանք որ ինչ ի խորանէն, և այլոց անյայտից: Անկուած=Հանած: Ախափակ: Ապառումն և ապաւանդակ ստորոտ խորանին... և այլն:

2. էջ 15 – 27 «Եւթնդ. գլուխ գրոցս. որ կոչի քառգիրք, զոր այժմ մեկնէ զմնացուածն: Առանցեալ=խեղագարեալ: Աշխղ=անխոնարհելի, անշիջելի: Աստուածարեալ=տեսանել հանդերձեալն: Ատակ=տես և կարող են ևն:

3. էջ 29—102 «Աստուած բառ է Հայոց լեզուէ պարզ և յստակ արարիչ: Աւգոստոս=աշխարհակալ: Անդնդին=անքըննին: Աքաղաղ=խաւրող: Արագիլ=լակլակ են են...

4. էջ 103—110 «Աւետեաց երկիրն, Երուսաղեմ է...». Զանազան հին և նոր թէ Հայոց և թէ օտար աշխարհագրական անուններ:

5. էջ.°. 192—201 (սկիզբը պակաս): Բառեր: Բազմարեր, բարբառս, աստեղնորդի: Գերունոյն...»

### Բ. ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

6. էջ 111—117 «Յառաջաբանութիւն մեկնութեանց Պորփիւրի։ Հանդերձեալք հանդերձ...»

7. էջ 117—119 «Ստորոգութիւնք Արիստոտէլի։ Գոյացութիւն, որակ, քանակ...»

8. էջ 120—122 «Վերլուծականէն ի գրոցն Արիստոտէլի։ Ասէ իմաստասէրս...»

9. էջ 122—124 «Ի սահմանաց գրոց որ կոչի Լօիքա։ Որք միանգամ իմաստասիրութեան տենչան...»

10. էջ 124—136 «Ի բանից Պղատոնի յէակաց գրոց։ Գիտելի է ըստ կանոնաց իմաստասիրաց...»

11. էջ 385—397 «Արիստոտելի յաղագս առաքինութեան առ Աղէքսանդր թագաւոր։ Գովելի են գեղեցիկքն...»

12. էջ 447—452 «Դաւթի Անյաղթ փիլիսոփայի ընդդէմ առարկութեանցն չորից Պիւռոնի իմաստակի. և սահմանք և տրամադրութիւնք իմաստասիրութեան։ Ամենայն չար տանջելի...»

13. էջ 456—477 «Խաղաղ իմաստասիրի Տուսացոյ ասացեալ վասն բանական հոգւոյ գիտութեան, թէ ո՞րպէս կամ զի՞նչ է սահման նորա։ Գիտութիւն լիցի ձեզ, որ Աստուած...»

### Գ. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

14. էջ 127—153 «Քերականութիւն է հմտութիւն, որք ի քերթողաց...»

15. 153—158 «Մեկնութիւն բառից քերականին։ Վերածնութիւն=ընթերցողութիւն։ Ներկուռ=ընդ կուռ, կ. կոխ։ կ. կերթ, կ. վարժ...» են։

16. էջ 158—160 «Մովսէսի Խորենացոյ բան իմաստութեան։ ՅԱստուծոյ խորհրդով, և իմաստութեամբ հաստատեցաւ մարդկայինս...»

17. էջ 160—191 «Սահմանք իմաստասիրին Դաւթայ. սահմանք իմաստասիրական, իբր հարցմամբ։ Զի՞նչ Աստուած։ Աստուած վսեմական և ինքնաբուն...»

### Դ. ՊԱՏՄԱԿԱՆ

18. էջ 28 «Առաջնորդք Հռոմայ աթոռոյն։ Առաջին Պետրոս... Լ. Սիղուեստրոս մինչև ի սուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր...»

19. էջ 202—204 «Հայրապետք Հայոց կարգաւ։ Տէր Սբ. Գրիգոր ա. կաթողիկոս և լուսաւորիչ Հայոց ամս Լ... են մինչև Տէր Թորոս ամս Ը. թվ. ՊԼԷ=1388։

20. էջ 205 Առաջնորդք Երուսաղէմայ կարգաւ։ Երուսաղեմայ ա. եպիսկոպոս Յակոբոս... ԼԹ. Հերմոն. մինչև ի սուրբն Գ. Լուսաւորիչն մեր։

### Ե. ԿՐՕՆԱԿԱՆ

21. էջ 206—273 «Գրիգորի աշակերտի եռամեծին Յովհաննու Որոտնեցւոյ. տեսութիւն ի բան մարգարէին որ ասէ. «Հոգի Տեառն 'ի վերայ իմ վասն»։ Տեառնողն վեհ երևակ տեսութեամբ...»

22. էջ 273—320 Յովհաննու Որոտնեցոյ հաւաքեալ 'ի բանից իմաստասիրաց։ «Իսկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր և գործք ձեռաց քոց երկինք են...»

23. էջ 331 «Նփրեմի Խուրին Ասորոյ ասացեալ։ Տաւնք տարեկանք..

24. էջ 332—334 Կարգաւորութիւն աւրհնութիւնաքեր ցուցակի, որ ունի յինքեան զժամանակի իւրաքանչիւր կարգեալ կանոնացդ զտեղիսն, թէ ո՞վ ոք կամ յորժ՞ գաւառէ։ զհայրապետաց ժամանակն նշանակեցից թէ ո՞վ եբեր 'ի Հայոց աշխարհ և որոց հրամանաւ կարգեալ ճառեցին։ «Յետ ՃԺԱ. ամի սրբոյն Գրիգորի եղև թարգմանութիւն...»

25. էջ 334—351 Սրբոյն Գ. Հայոց Լուսաւորչի ի բան հաւատոյ. և Նորին նմանեացն բան առաջին «Եկեղեցական հարց Դիոնէսիոսի Աթենացւոյ, Եփրեմի Խորին Ասորոյ, Հիպողիտէս Բոստրացոյ, Գրիգորի Սքանչելագործի, Գր. Նիւսացոյ, Դամասու Հռոմա, Կիւրղի Երուսաղէմացու, Գր. Աստուածաբանի և Յովհաննու Ոսկեբերանի գրուածքներից հատուածներ...

26. Թէ որպէս կարասցուք պատասխանի առնել այնոցիկ, որ երկու ներգործութիւնս առնեն ի վերայ Տեառն մե-

րոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի։

27. էջ 356—383. ա. էջ 356 Ստեփաննոսի Սիւնեցոյ եպիսկոպոսի տիեզերալոյս և իմաստուն վարդապետի. Ասա հերետիկոսաց։ Զընութեանս զանազանութիւն, աքանչելին ի բնաւս Գրիգորիոս...»

բ. էջ 362. Գլուխ երկ. Եթէ բնութիւն անմարմին առանց ենթակայի գոյութիւն ունի՞, թէ ոչ։ Գիտել պարտ է նախ եթէ ի քանիս բաժանի բնութիւնն...»

գ. էջ 365 Գլուխ երր. Յորժամ խընդրի ի մէնջ թէ բ. բնութիւնք զոր ասեն անձնաւորք են և դիմաւորք, եթէ անանձն և անդէմ։ Գայ այսուհետև ախոյեան չարութեան...»

դ. էջ 379 «Ի հաւատոյ արմատոյն է դրուակս։ Հաւատամք ի մի Աստուած, որ բազում աստուածս ասեն...»

ե. էջ 382 «Սահմանք հաւատոյ որ ի Նիկիայ ժողովեցան սուրբ եպիսկոպոսք. յժը։ Խոստովանիմք զտէր մեր Յիսուս Քրիստոս..»

28. էջ 384 «Այլ բան Վարդան վարդապետի։ Զի՞նչ է ճրագալուցին լուծանելն...»

29. էջ 398—404. ա. «Դաւանութիւն քաղկեդոնկացոց, զոր ինքեանք Աթանասի ասեն, է ինչ որ ուղիղ է և է ինչ որ թիւր։ Որ ոք կամիցի փրկիլ...»

բ. էջ 400—404 «Տամար Ղեւոնի առաջին շինողի իւր տան։ Բանն մարմին եղև...»

գ. էջ 404 «Դաւանութիւն Քաղկեդոնացւոց տես և զգոյշ լեր։ Գիտելի է զի են ոմանք...»

30. էջ 409—411 «Վասն խորհրդոց պատարագին ասացած Վարդան վարդապետի։ Նշխար կազմի հին կտակօք սաղմոսին...»

31. ա. էջ 412—438. Վասն խնդրոյն որ եղև ի մէջ քրիստոնէից վասն հոգոյն Աստուծոյ թէ ի հօրէ միայն պարտէ ասել, թէ ի հօրէ և յորդւոյ։ Ի Հռոմայեցոց ազգէն շարժեցաւ այս խնդիր...»

բ. էջ 416. «Խոստովանութիւն ճըշմարիտ հաւատոյ ուղղափառաց։ Հաւատամք ի հայր, և յորդի...»

գ. էջ 422. «Գրեաց և մեծ վարդապետն վանական, թէ որպէս մարթէ խոստովանել և կամ ասել սուրբ հոգին ի հօրէ և յորդւոյ։ Այս է վանական վարդապետին։ Հոգով խօսել զհոգոյն հոգևորացն է գործ...»

դ. էջ 430. «Չորեքտասան աստիճան հաւատոյ ի Գրիգորէ։ Խոստովանիմք և հաւատամք...»

ե. էջ 432. «Այլ դաւանութիւն չորեքտասան գլուխ։ Հաւատամ յամենասուրբ...»

32. էջ 439—446. «Ի Նուաստ ումեմնէ ասացեալ և սուղ ինչ վասն երգերգոյն Սողոմոնի։ Պաճար գոլով ես յիմաստնոց...»

33. էջ 453—455. Յովհան Քոնեցին գրէ ընդէմ հայոց այսպէս։ Առաջին զՔրիստոս մի բնութիւն ասեն ըստ կարծեացն Դիոսկորոսի... են»։

Ընդամենը տասնը են ինն առարկութիւններ: Վերջը գալիս է այս հետաքրքիր հատուածը:

«Յովհան Քոնեցին մեծին Նաւյեա աշակերտք էին. և այսչափ վարդապետովս, ղարձեր են 'ի Փռանկաց դաւանութիւն։ Մարգարէ վարդապետ ի գեղջէն Օծոպայ։ Յակոբ վարդապետ ի գիւղաքաղաքէն Գառնոյ։ Հայրապետ վարդապետ 'ի յեօթն աղբիւր գեղջէ։ Յովհաննէս վարդապետ 'ի Ծուանս գեղջէ։ Սիմէոն վարդապետ ի Բասէն գաւառէ։ Ներսէս վարդապետ 'ի Գաւառէն Տարօնոյ։ Առաքէլ և Խորայէլ վարդապետք ի գաւառէն Արտազու։ Գրիգոր վարդապետ 'ի յԱպրակունիս գեղջէ։ Կոստանդին և Յովհաննէս վարդապետք 'ի յաշխարհէն Կիլիկոյ։ Սիմէոն վարդապետ ի Խաչէն գաւառէ։

34. էջ 455. Տէր Ներսէսի հայոց կաթուղիկոսի հա՛րց։ Ընտէր ասէ աւետարանիչն, թէ սկսաւ Յիսուս տրտմել և հոգալ... Պատասխանի։ Ոմանք ի հերձուածողացն...»

## Գ. ՏՕՄԱՐԱԿԱՆ

35. էջ 321—330. Զօհալն հով է և չոր, և իր հովութիւն աւելի է քան...»

Վերջը պակաս է, մեզ թւում է օկիզբը նոյնպէս:

36. էջ 480–502. Պատճէն տումարիս Հայոց։ Չկրկնակ տումարդ նոյնպէս արա...»։ Էջ 469 Աղիւսակ Հայոց ամիսների։

37. էջ 504–528. Պատճէն տումարին Հռոմայեցոց։ Կրկնակ ամսոյս այսպէս արա...»։ Էջ 503 Աղիւսակ Հռոմայեցւոց ամիսների։

38. էջ 529–558. «Մեկնութիւն տումարի, զոր արարեալ է Սամուէլի քահանայի ի խնդրոյ Սանփաննոսի իմաստասիրի, Հարց։ Զինչ է տումար. պ. Տումար ասի...» Բովանդակը հարցուպատասխանով։

39. էջ 551–556. Անպէտք և անկապ գրուածքներ, նորագոյն գրչի, որոնցից յետոյ մի քանի երես վրացերէն։

1. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ էջ 528. Ով եղբարք՝ ի Հայոց թվին, ՌՀ(Ե՞) երկիրն իհլեհացի ի քաղաքն Իլով գրեցի սակաւ բանս, որ ցուցնէ զղատիկն Գռանգաց թէ ամենայն ամի քանի շաբաթ յառաջ տի լինի և կամ յորում ամի ի միատեղ լինի. Թվական և գրով տարոյն գիտ զամենայն և յիշեա զՍեբաստացի զաշխատողս և զանարժանս գծողս ի տէր ամէն։

Սեբաստացին, հաւանական է որ, նոյն Յեսայեայն պիտի լինի, քանի որ այստեղ էլ գծող անուանում է իրեն ինչպէս և հետեւեալ յիշատակագրութեանց մէջ։

2. ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ էջ 27, 204 և 379 «զՅեսայեայ գծաւղս յիշել աղաչեմ թվ. ՌՀԵ=1626։

3. էջ 203. Լուսանցքում հետեւեալ հետաքրքրական ծանօթութիւն ենք կարդում։

«Թվ. յ. Նանա սարկաւագ ասորի մեկնեաց զաւետարանն Յովհաննու ի խնդրոյ Հայոց իշխանին վկային Քրիստոսի Սմպատայ», որին անմիջապէս հետեւում է այս «և ջրազարն ի Հաղբատ շինեցաւ»։

## 13.

## ԺՈՂՈՎԱԾՈՅ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 17×12,4 սմ։—ԿԱԶՄ տախտակեայ, հին կաշեկազմ, կաշեայ փականքով։—ՎԻՃԱԿ. շատ գործածութիւնից աղտոտուած, մի քանի թերթեր ճղուած, միջից թերթեր կտրուած. վերջից պակաս։—ՆԻՒԹ թուղթ, պինդ եւ ողորկ։—ԹԵՐԹ 253։—ՏՈՂ 13։—ԳԻՐ միասին 13×8,5 սմ։—ԽՈՐԱԳԻՐ եւ ՎԵՐՆԱԳԻՐ կարմրատառ։—ՍԿԶԲՆԱԳԻՐ սեւատառ։—ԽՈՐԱՆԱԶԱՐԴ էջ 3. անշուք։—ԹՈՒԱԿԱՆ ԺԶ դարից առաջ։—ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ էջ 2։—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ կազմի վերայ գրուած է «գիրք խոստովանութեան» էջ 1. «№ 196», եւ էջ 2. մի քանի տող անվարժ ձեռքով գրուածք։ էջ 1. եւ 506 «Ներ. հոգ. դըպրանոցի» մատենադարանի կնքադրոշմը։ Սկզբից մի վերջից երկու մագաղաթեայ թերթ աւետարանից միջին երկաթագրով։

Մատեանս է Գիրք խոստովանութեան։

1. էջ 3–40 «Պատմութիւն և խրատ պատուական և պիտանի, տեառն Աբրայ ասացեալ, վասն խոստովանելոյ զմեղս և առնուլ մեզ ապաշխարութեան։ Որք սուրբ հոգւոյն են ցանկացեալք...»

2. էջ 41–55 «Ի Մեհեկի Ի. Տաւն է ամենաժողով սքանչելի երեւմանն փրկական և սուրբ խաչին Քրիստոսի 'ի լեառն Վարագ։ Փրկական և կենդանարար խաչին Քրիստոսի, որ երեւեցաւ ի լեառն Վարագ, պատմութիւնն է այսպէս։ Կինկղաւդէս կայսերն Հռովմա... են»

3. էջ 55–76 Տեառն Զաքարիայի Հայոց կաթողիկոսի ասացեալ յաւր արմաւենեացն և ի գալուստ Տեառն մերոյ յԵրուսաղէմ։ «Եւ յելանելն նորա յԵրիքով...»

4. էջ 76—91 *Ներսեսի* ասացեալ, յաղագս պահոց պնդութեան։ Աչքս և կարեոր և օգտակար…»

5. էջ 91—132 Նորին *Ներսեսի* ասացեալ վասն ողորմութեան աղքատաց անձնըյ։ Մի ոք տղայական բարուք և…»

6. էջ 132—175 Նորին *Ներսեսի* ասացեալ յաղագս ընդունելի և անընդունելի աղօթից։ Աստուածային շնորհութեամբն…»

7. էջ 175 - 197 Սրբոյն Յովհաննու *Ոսկեբերանի* Կոստանդնու Պաւլոսի հայրապետի ասացեալ ի խաչն տէրունական։ Մի ոք ամօթ համարեսցի…»

8. էջ 197—226 «Սրբոյն Յովհաննու *Ոսկեբերանի*, Կոստանդնու Պաւլոսի հայրապետի ասացեալ յաւետիս Աստուածամաւրն։ Դարձեալ խնդութեան…»

9. էջ 226—266 «Տեառն Յովհաննու *Ոսկեբերանի* ասացեալ Յաղագս աշխարհութեան մեղաւորաց։ Տեսէք յառաջնումն…»

10. էջ 266—319 «Սրբոյն *Յակոբայ Մծբնայ հայրապետին* ասացեալ ի յաւր մեծ ուրբաթին չարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յիններորդ ժամու։ Յաւաղակն որ հրաւիրեցաւ ի դրախտն և բերովքէն որ պահէր զճանապարհս ծառոյն կենաց։ Անծանաւթ ծնունդ ծոցոյ…»

11. էջ 319—… Երանելոյն *Աթանասի* արքեպիսկոպոսի Աղեքսանդրու. հարցմունք փոյսելուչք և պատասխանիք Կիւրղի Երուսաղէմի հայրապետի, յաղագս մակացութեան հանճարից։ Հետևումն համարիմ ընդ Աստուծոյ…» (վերջից պակասում է)։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ էջ 2. (անվարժ նօրագրոյն ձեռքով) «Խիստ լաւ խրատ է։ Ես *Պետրոսս* կարդացի և իմացայ. ով հանդիպի կարդացման ողորմի ասէ… ևն։

## 14

## ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 11,5×8 *սմ*։ — ԿԱԶՄ *թղթեայ, հին կաշեկազմ*։ - ՎԻՃԱԿ *միջակ մաքրութեամբ, վերջերը կեղտոտ, թերթերը դեղնած. մի թերթ սկզբում երկուած եւ դուրս հանուած*։ — ՆԻՒԹ *թուղթ, ամուր եւ հարթ*։—ԹԵՐԹ 153։—ԴԱՏԱՐԿ *մի թերթ սկզբից մինը վերջից էջ* 1 *եւ* 180—187։—ՏՈՂ 16։—ԳԻՐ *նօտրագիր միասին* 7×4,7 *սմ*. *բոլորագիր սկսեալ էջ* 261—302։—ԽՈՐԱԳԻՐ, ՎԵՐՆԱԳԻՐ *եւ* ՍԿԶԲՆԱԳԻՐ *կարմրատառ*։ — ԽՈՐԱՆԱԶԱՐԴ *էջ* 21, *կարմրատուն*։ — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ *էջ* 21. *սիրամարգ*։—ԹՈՒԱԿԱՆ ՌՂԸ=1649։—ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ *էջ* 179։ —ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ *կազմի վերայ գրուած է «պարզատումար»*։ *Էջ* 1. «289 *համար»*։ *Էջ* 1 *եւ* 302 *«Ներս. հոգեւոր դպրանոցի» մատենադարանի կնքադրոշմը*։ *Էջ* 21. *կնքադրոշմը երկու տեղ հակառակ դիրքով որոնց վերայ կայ* 1822 *տարե-* … *նիքը բաժանուած է երկու մասի,* … *խորաքանչիւրն ունի փակագիր.* … *մասի փակագրի մէջ «Յովհաննէս Կարնեցի» է կարդացւում*։

Մատեանս է Պարզատումար.

1. էջ 2—178 Բանալի առաջին գիրն դամն է և տանուտէրն ի վերևն խոյն է և կարմիր գրած տողերն նահանջ է։

> Մինչև էջ 178 նոյն է Հ. Յ. Տաշեանի կազմած Վիեննայի կայսերական մատենադարանի ցուցակի Թ. 25-ի հետ։ Կայ և.

2. էջ 188—212 Տօմարական աղիւսակներ և

3. էջ 213—254 «*Կրկնակ* ամսոց այսպէս արա, կալ Յունվար ամիսն և երթ է, է որ միայ կրկնակ է։ Փետրվար ամսոյ կալ…»

4. էջ 255—259 «Յաղագս ընծայումն լուսնի. ասացեալ է մեծ իմաստնոյն *Անդրեասայ*։ Յորժամ լուսինն ի Մարտ ընծայի, և եղջիւրն ուղորդ. գուշակէ բազմութիւն ցորենոյ. և այլ հնդոց մրգոց. և խաղաղութիւն։ Նթէ եղջիւրն ի կախ գուշակէ բազմութիւն չորքոտանեաց և վաստակ մարդ-

կանէ...»։ Այսպէս և միւս 12 ամիսների վերաբերութեամբ մինչև փետրուար։

5. էջ 261—202 «Նաւասարդ տարեմուտ է Հայոց և Եգիպտոս ամիս Հռոմայն։ Գյակայ վանաց Սուրբ Կարապետին և գիւտ գլխոյն Յովհաննու։ Վերադարձումն նշխարաց Սուրբ Կարապետին. և ամենաւրհնեալ գլխոյ Նորին և Թագաւորին Արտաւազա. և ապրեմտին։ (Այսպէս շարունակում է Հայոց և Հռոմայեցւոց բոլոր ամիսներում պատահած իւրաքանչիւր օրուայ սրբերի անունը կարգով յիշելով)։

2. ՑԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ 179 (բոլորագիր).

Ես Աղէքսանն ցանկացի,
Ի գեղեցիկ և ցանկացի
Ըզբոլոր տումարս ի յինքն ունի
Տպաւորեալ 'ի իւր սրտի։

## 15.

## ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԾԱՅՐԱՔԱՂ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 14,5×9,6 սմ։ - ԿԱԶՄ տախտակեայ կաշեկազմ, զարդերով. քայքայուած։—ՎԻՃԱԿ ընդհանրապէս վատ. եւ առհասարակ անընթեռնլի։—ՆԻՒԹ ալինդ եւ անհարթ։ - ԹԵՐԹ 226։ - ՏՈՂ 18—23։ —ԳԻՐ բոլորգիր միասին. 6,7×11,5 սմ. էջ 437—451 նոտրագիր. անվարժ գրչութիւն։ - ԽՈՐԱԳԻՐ, ՎԵՐՆԱԳԻՐ, ՍԿԶԲՆԱԳԻՐ ղժգոյն կարմիր։ — ԹՈՒԱԿԱՆ ԺԷ° դար։—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ էջ 1 եւ 452 «Ներսհոգեւոր դպրանոցի» կնքադրոշմը էջ 1 եւ 5 գրուած է «համար 288»։ Կազմի մէջքի վերայ գրուած է «Մ ե կ ն ու թ ի ւ ն հ ա մ ա ռ օ տ». բայց թերթելով գիրքը, յարմարագոյն գտանք այն վերնագիրը, որ կայ էջ 452 «Աստուածաբանութիւն ծայրաքաղ»։

Մատեանս է

Մեկնութիւն համառօտ կամ Աստուածաբանութիւն ծայրաքաղ.

Մեզ վերջին վերնագիրն աւելի ուղիղ է թւում։ Էջ 200 կարդացւում է այսպիսի վերնագիր զորօրինակ «Վասն դժոխոց». էջ 266 «Վասն չարաց, որ բարիս վայելեն» են ևն։

Այս ձեռագիրը չնչուած, դժգոյն և այնչափ խառն ի խուռն է և թերթերն անկարգ դասաւորուած, որ մեզ անհնարին եղաւ բովանդակութեան մասին մի որոշ բան յայտնել։

## 16.

## ՔԱՐՈԶԱԳԻՐՔ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 23,5×16 սմ։—ԿԱԶՄ թղթեայ, ղժգոյն թղթով ծածկուած, կազմի մէջքը կաշեայ։ - ՎԻՃԱԿ կեղտոտ, անւացած, միջից թերթեր կտրուած, վերջից պակաս. սկզբում եղել է ինչպէս 336 էջի ներքեւ գրուած է ԱՃՀԷ =175 թերթ։ — ՆԻՒԹ թուղթ, հասարակ եւ անհարթ։ —ԹԵՐԹ 169։ - ԴԱՏԱՐԿ սկզբից եւ վերջից մի մի թերթ եւ էջ 6—8, 337—338։ - ՏՈՂ 25։ - ԳԻՐ նոտրագիր երկսիւն, խորանաձեւ 17,5×5 սմ։ — ԽՈՐԱԳԻՐ եւ ՎԵՐՆԱԳԻՐ երփներանգ մեծատառ։ ՍԿԶԲՆԱԳԻՐ կարմրատառ։ — ԽՈՐԱՆԱԶԱՐԴ էջ 9. գեղեցիկ երփներանգ, բայց խունացած։ — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ մի քանի հատ անշուք։ — ԹՈՒԱԿԱՆ ԺԷ° դար։ — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ էջ 1 կայ «№=95». էջ 3 չորս տեղ, էջ 336 մի տեղ «Ներս. հոգ. դպրանոցի» կնքադրոշմը։

## Մատենանս է Քարոզգիրք

1. էջ 3—5. Ցանկ գլխակարգութեան:

* 2. էջ 9—° «Քարոզ վասն աղօթից, որ ասէ, Արք երկու ելին ի տաճարն: Պարտէ գիտել զի...» Վերջը պակաս:

3. էջ °—24. «Քարոզ վեցերորդ կիրակէի որ, ասէ, Արթուն կացէք».

Որ քարոզի սկիզբը պակաս է, հարցական նշանով որոշեցինք. իսկ վերնագրերը ցանկից առանք եւ փակագծի մէջ դնելով լրացուցինք:

4. էջ 24—33. «Քարոզ Սրբոյն Գ. Լուսաւորչին (վասն սրբոյն Գրիգորի Հ. Լուսաւորչին) Հայաստանեայց հայրապետին ի բանն, որ ասէ: Բարեգութն և բարերարն...» Թերթ է կտրուած:

5. էջ ° 33—43. «Քարոզ վասն պաշտաման պատուհասի ի բանն Յովելիա մարգարէին, որ ասէ. Փող հարէք ի Սիոն. սրբեցէք պահս, քարոզեցէք պաղատանս, ժողովեցէք զծերս և զայլս: Փոփոխելով փոփոխական է մարդոյս բնութիւն...»

6. էջ 43—° «Քարոզ վասն ողորմութեան ի բանն աւետարանին, որ ասէ. Նշխարք գթած, որպէս և հայրն ձեր երկնաւոր գթած է: Յորժամ որ տեսանէ...»

Էջ 25-ից յետոյ թերթեր են պակաս եւ ամբողջ գլուխներ որոնց վերնագրերն ցանկից առանք * որոշելով:

* 7. էջ ° 53—57. «Քարոզ վասն մեծատանն և Ղազարու, որ ասէ, Այր մի էր մեծատուն և ագանէր:

* 8. «Քարոզ ի բանն տեառն, որ ասէ. Եղերուք խորագէտ իբրև զօձ և միամիտ իբրև զա...»:

* 9. «Քարոզ ի բան մարգարէին, որ ասէ. որպէս իժի և քարրի. զի»:

* 10. «Քարոզ ի բան Սողոմոնի, որ ասէ. Որ զանձն իւր ի գործս իւր ոչ բժշկէ:

* 11. «Քարոզ ի բանն Սողոմոնի, որ ասէ. Մահ և կեանք ի ձեռն լեզուի է և»:

* 12. «Քարոզ ի բանն Յոհաննու, որ ասէ. Որ [illegible]ղբայր»:

[illegible]. «Քարոզ ի բանն Յորա, որ ասէ. [illegible]իմ սուրբ են և ճշմարիտ առ»:

14. «Քարոզ վասն ջրհեղեղին, որ ասէ. Նոյ էր ամաց Ութ և ջուր ջրհեղեղին եղև իվե»:

* 15. «Քարոզ ի բանն, որ ասէ. Աղաղակ Սոդոմացոց»:

* 16. «Քարոզ վասն աշտարակին ի բանն, որ ասէ. Եկայք իջցուք և խառնակեսցուք».

* 17. «Քարոզ ի բանն, որ ասէ. Հայեցաւ Աստուած ի Հաբէլ և ի».

* 18. «Բանք իմաստասիրաց հոգևոր՝ և գեղջուկ բառով ասացեալ».

* 19. «Քարոզ վասն ելից ժողովրդեանն յեգիպտոսէ 'ի բանն, որ ասէ Տէր ցՄովսէս. Եկ առաքեցից զքեզ առ փա».

20. էջ 57—71 «Քարոզ ի բանն աւետարանի, որ ասէ. Մի տայք զսրբութիւն շանց և մի արկանէք զմարգարիտ ձեր առաջի խոզից: Առաջին սրբութիւն...»

21. էջ 71—89. «Քարոզ ի բանն, որ ասէ. Աւն արիք գնասցուք: Հրամայէ մարգարէն Միքիա...»

22. էջ 89—97. «Քարոզ ի բան յօրինացն Մովսէսի, որ ասէ, Պատուեա զհայր քո և զմայր. զի քեզ բարի լինիցի յերկրի: Եւ պարտէ եղբայրք գիտել...»

23. էջ 97—108. «Քարոզ ի բան Սողոմոնին, որ ասէ, Աւրհնեա անձն իմ զՏէր և: Անձն զբանական հոգին իմանի...»

24. էջ 108—117. «Վասն խոստովանութեան բան խրատական հարկաւոր և յոյժ օգտակար: Բայց նախ վասն խոստովանութեան...»

25. էջ 117—144. «Քարոզ ի բան Սողոմոնի, որ ասէ. Որ ողորմի աղքատին փոխ տայ Աստուծոյ: Այսպէս հրամայեն վարդապետք...»

26. էջ 144—164. «Քարոզ ննջեցելոց վասն միխթարութեան սրտի սգաւորաց ի վերայ մեռելոց. Վարդապետք ամենայն ասեն ..»

* 27. «Քարոզ աւետեաց Աստուածածնին, որ ասէ, Եւ յամսեանն վեցերորդի»:

28. էջ° 165—170. «Քարոզ ծննդեան Յովհաննու ի բանն որ ասէ, Դու մանուկ մարգարէ բարձր»:

29. էջ 170—176. «Նորի՞ն քարոզ Յոհաննու ի բանն, որ ասէ, Առաքեցից զհրեշտակ իմ առաջի քո, որ պատրաստեսցէ զճանապարհս իմ առաջի քո: Գիտելի է զի գիրք սուրբ...»

30. էջ 176—184. «Քարոզ վասն ծննդեանն և մոգուցն ի բանն, որ ասէ. Ահա մոգք յարևելից եկին։ Ո՞ւր է որ ծնաւ ար։ Ի վերայ բանիս այս...»

31. էջ 184—198. «Քարոզ Տեառն ընդառաջին ի բանն, որ ասէ, Իբրև լցան աւուրք սրբութեան, ածին զմանուկ Յիսուս։ Լոյսն ի Հայրական ծոցոյ...»

32. էջ 198. «Նորին քարոզ վասն տեառն ընդառաջին ի բանն, որ ասէ. Իբրև ածին ծնաւղքն զմանուկն Յիսուս։ Զպատճառ աւուրս տօնի...» Համարեա ամբողջովին պակաս։

33. էջ 199 - 201. «Քարոզ վասն շաբաթապահոց այլ և վասն առաջաւորին ի բանն Յոհաննու։ Ահա երեք...»

34. էջ 201 - 211. Դարձեալ ի նոյն խորհուրդ քարոզ ի բան Յովնանու մարգարէի, որ ասէ. Ահա երեք աւուրք և այլ ես ոչ իցէ Նինուէ։ Գիտելի է զի հնար է...»

35. էջ 211—224. «Քարոզ Գրիգորի վարդապետի ասացեալ վասն խոստովանութեան ի բանն Եսայեա մարգարէի, որ ասէ. Լուացարուք սրբեցարուք։ Զսրբութիւն և զմաքրութիւն աղտեղութեան...»

36. էջ 224—232. «Քարոզ ապաշխարութեան ի բանն, որ ասէ. Ապաշխարեցէք զի մերձեալ է արքայ։ Նախ տեսցուք թէ զի՞նչ է ապաշխարութիւն...»

37. էջ 232 - 246. «Քարոզ պահոց ի բանն աւետարանին, որ ասէ. Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ ի հոգւոյն, փորձեալ ի սատանայ է պահեալ զխ. տիւ և զ։ Գրեալ է ի գիրս...»

38. էջ 247—266. «Քարոզ դարձեալ ի նոյն խորհուրդ, որ ասէ. Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ ի հոգ։ Գրեալ Յուդիթ թէ Հողեբեռնէս չար իշխանն...»

39. էջ 267—° «Քարոզ դարձեալ ի նոյն բանն, որ ասէ. Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ ի հոգւոյն փորձեալ ի սատանայէ։ Իմաստունքն թէ գող ոմն առնէր...»

* 40. էջ° — 307. Քարոզ մեծի սրբութեան խաչին խորհրդոյ ի բանն Յակովբա նահապետին, որ ասէ. Իշառաւիղէ.

41. էջ 307—310° «Քարոզ մեծի շաբաթուն ի բանն, որ ասէր. Որպէս Յովնան էր ի փոր կէտին զերիս տիւս և զերիս գիշերս նոյնպէս և որդի մարդոյ ի սիրտ երկրի։ Գիտելի է զի...»

* 42. էջ 311°—312° «Դարձեալ քարոզ վասն մեծի շաբաթին ի բանն, որ ասէ. Եկն Մարիամ Մագթաղենացի և միւս Մա...»

* 43. էջ 313°—325. «Քարոզ վասն հաղորդութեան։

44. էջ 325—327. «Քարոզ վասն պատարագի խորհրդոյ ի բանն, որ ասէ. Առ Յիսուս հաց աւրհնեաց, եբեկ և ետ աշակերտացն և ասէ. կերայք ի սմանէ այս է մարմին իմ։ Գրեալ է թագաւորութիւնս...»

45. էջ 327—331. «Քարոզ ննջման Ս. Աստուածածնին ի բան մարգարէին Եսայեա, որ ասէ. Ահաւասիկ Տէր նստեալ ի վերայ թեթև ամպոյ եկեսցէ յԵգիպտոս։ Ահաւասիկ իբրև ամպոյ ասէ...»

46. ԽԵ. էջ 331—336°. «Քարոզ ի բանն Աստուած, որ ասէ. Ես եմ հովիւ քաջ, հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց։ Ասեն վարդապետք...»

Վերջը պակաս. իսկ ըստ ցանկի պիտի լինէին և հետևեալ գլուխները։

* 47. ԽԶ. Այլ քարոզ դարձեալ ի նոյն բանն, որ ասէ։ Ես եմ հովիւ քաջ. հովիւ քաջ...»

* 48. ԽԷ. Քարոզ ի բանն Տեառն, որ ասէ. Ամենայն ծառ, որ ոչ առնէ պտուղ բարի...»

* 49. ԽԸ. «Քարոզ ի բանն Տեառն, որ ասէ. Զգոյշ լերուք ի սուտ մարգարէից անտի, որ...»

* 50. ԽԹ. «Քարոզ ի բան Տեառն, որ ասէ. Ծառ բարի պտուղ բարի առնէ և ծառ չար...»

* 51. Ծ. «Մեկնութիւն արարածոց. Այլ և դատաւորաց և թագաւորաց...»

* 52. ԾԱ. Մեկնութիւն տոմարի.

* 53. ԾԲ. Նախերգան քարոզաց։

## 17.

## ՎԱՐՔ Ս. Գ. ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 23×18,5 սմ։—ԿԱԶՄ թղթեայ, նոր. մէջքը կաշեպատ։—ՎԻՃԱԿ լաւ։—ՆԻՒԹ թուղթ, պինդ եւ հարթ։—ԹԵՐԹ 128։—ԴԱՏԱՐԿ սկզբից մի, վերջից երկու թերթ։—ՏՈՂ 27—30։—ԳԻՐ շաղագիր։—ԼՈՒՍԱՆՑՔՈՒՄ նշանակուած են գրուածքիս աղբիւրները։—ԹՈՒԱԿԱՆ «սկըսեալ 1831 մարտի 1-ից եւ յապրիլի մէկն վերջացեալ»։—ԳՐԻՉ «Աղէքսանդր Թաջիրեանց»։—ՏԵՂ Տփխիս՞։—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ Առաջին կողքի ներքին երեսում տպագրուած թերթերի վրայ կայ «Աղէքսանդր Ղազարեան Թաճիրեանց», որի տակը «1160»։

Մ ա տ ե ա ն ս է

Պատմութիւն վարուց Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին...

«Աշխատութիւն Հայր Մատթէոս կրօնաւոր վարդապետի հաւանութեամբ սրբոյ հօր իւրոյ Մխիթարայ վարդապետի...»

Տպագրուած է արդէն «յամի տեառն 1749... Ի Վենետիկ, ի տպարանի Անտոնի Պորթոլի» Հ. Գ. Զար. Հայկ. մատենախօսութիւն էջ 573։

## 18.

## ՍԱՂՄՈՍԻ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՔԱՂՈՒԱԾՈՅՔ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 27×18 սմ։—ԿԱԶՄ հին. տախտակեայ կաշեկազմ. կողքերի դրսի երեսներին խաչաձեւ զարդեր դրոշմուած։—ՎԻՃԱԿ ընդհանրապէս լաւ, տեղ տեղ քրքրուած, ծայրատուած. անվարժ ձեռքեր ներքեւները խզզզել են. վերանորոգուած է 1627-ին։—ՆԻՒԹ թուղթ, հաստ եւ հարթ։—ԹԵՐԹ 352։—ԴԱՏԱՐԿ էջ 704. սկզբից եւ էջ 4-ից յետոյ թերթեր են պակաս։—ՏՈՂ 23—37։—ԳԻՐ սիրուն բոլորագիր. էջ 5—60 մանր, անվարժ եւ տգեղ։—ԽՈՐԱԳԻՐ, ՎԵՐՆԱԳԻՐ եւ ՍԿԶԲՆԱԳԻՐ կարմրատառ։—ԽՈՐԱՆԱԶԱՐԴ 7 հատ, կարմիր, իւրաքանչիւր կանոնի սկզբում. միայն Ա. կանոնը չունի։—ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ կարմիր, իւրաքանչիւր գլխի սկզբում։—ԹՈՒԱԿԱՆ ՊԾԴ = 1405։—ԳՐԻՉ Գրիգոր։—ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ էջ 699—700. 701—703. 138, 513, 530 եւ 704։—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ էջ 10, 210, 318, 319, 416, 513 փոքր եւ էջ 417, 538 մեծ կնքադրոշմներ. վերջինիս վրայ պարզ կարդացւում է Ք. Ծ. Ղուկաս վարդապետ 1240=1791։ Արդեօք ապագայ Ղուկաս կաթուղիկոսը՞ էջ 1 երկու. էջ 704 մի կնքադրոշմ «Ներսէսեան դպրանոցի». էջ 1 վարը կայ «№=180, Սաղմոսաց մեկնութիւն»։

Մ ա տ ե ա ն ս է Ք ա ղ ո ւ ա ծ ո յ ք Մ ե կ ն ո ւ թ ե ա ն Ս ա ղ մ ո ս ա ց Դ ա ւ թ ի ։

1. էջ 1—60. Նախերգանք, և ա. կանոն։ Սկզբում ինչպէս և հետեւեալ իւրաքանչիւր կանոնից առաջ 1—4 թերթ ցանկն է։ Սկիզբը պակաս է. էջ 5 սկսւում է։ «Նախ Փարաւոն կոչէին... և»

2. էջ 61—120 բ. կանոն։ Ի կատարած սաղմոս ի Դաւիթ։ Երկրորդ կանոն։ Որ է ութ և տասներորդ սաղմոս։ Պատճառք ունի զերիս օրէնս, զբնականն, զգրաւորն և զաւետարանն... և»։

3. էջ 121—206 գ. կանոն սաղմոս ի Դաւիթ։ Երեսուն և վեց սաղմոս։ Պատճառ ունի զնախանձելիք ծերութեան Դաւթի։ Դէմքն առողջութիւն է մեղուցելոց...»

4. էջ 267—312 դ. կանոն։ «Ի կատարած վասն ժողովրդեանն, որ ի սրբոցն էին։ Ի ժամանակի զի կային զնա այլազգիքն ի Գէթ։ Ցարձանագիր սաղմոս ի Դա-

ւիթ։ Յիսուն և հինգ սաղմոս։ Պատճառ ունի զժողովուրդն ի սրբութեանց հեռացեալ...»

5. էջ 313—414 Ե. կանոն։ Սաղմոս Յասափ. ութանասներորդ երկրորդ սաղմոս։ Պատճառ ունի զգերինոյն։ Դէմքն յուզմունք խորհրդոց և կրից մարդկան...»

6. էջ 415—513 Զ. կանոն։ Աղօթք ի Մովսէս յայրն Աստուծոյ։ Վեցերորդ կանոնն է սա։ Անտարակոյս Ախթարքն որ ղանազան կերս և փոփոխմունս մեր ցուցանէ կարգ կանոնին։ Ասաց նախ բարի է Իսրայէլի Աստուած և ուղղոյն սրտի։ Այս էր որ ապաւէն եղև մեզ մարմնոյն...»

7. էջ 514—530 Է. կանոն։ Սկզբից թերթ է պակաս. իսկ շարունակութիւնն է էջ 517։ «Իսկ այլք կամաւ և գիտութեամբ մեղանչեն...»

8. էջ 531—698 Ը. կանոն։ «Աւրհնութիւնք աստիճանաց» Յաղագս ութերորդ կանոնին, որ է ՃԺԹ սաղմոս։ Պատճառք ունի զգերութեան ազատել։ Դէմք զբնութեանս փրկութիւն։ Կարգն։ Անդ ամբիծքն ի ճանապարհի...»

1. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ էջ 699–700.

«Յիշատակարան։ Ընդ որոց վերջինս բանասիրաց և տրուպ խնդրողաց բանին, պիտակ անուն կոչեցեալ Գրիգոր, մեղաներկ անձամբ՝ և տխեղծ մտաւմբ, վերստին հաւաքեցի զբաղումածոյս մեկնութեան սաղմոսացն Դաւթի։ Ի նեղ և սորաստուցեալ ժամանակիս, յորում բռնակալն Թամուր թուրքութեամբ վերին խնամոցն. տիրեալ էր բազում աշխարհի և աւերեալ։ Եւ կործանեցաւ յայսմ ամի ՊԾԴ. թուի։

Եւ պատճառ շարժողութեան վերստին քաղուածոյս։ Նախ՝ Մեծին Վարդանայ՝ համառաւտ և խորին տեսութիւնն, որ անյայտ մնայ միշտ. հոգացայ յայտնի և ընդարձակ ցուցանել։ Երկրորդ՝ զի առաջին քաղուածոյն կարի կարճ և պակաս թուէր։ Երրորդ՝ ի թախանձանաց ոմանց հարկեցեալ։ Մանաւանդ՝ որ տայ ամենայնի և յայտնէ ում և կամի։ Եւ է պիտանութիւն սորա. Նախ ի մեկնիչն Վարդանա գտանի ընթերցմանց, պայծառ տեսութեանց՝ այլ և ի բանս խրատու և քարոզութեանց և լուծումն խնդրոյ հարցողաց։ Նա և՝ ի վարժումն իմաստից մտաւոր սաղմոսաց։

Եւ բազում մեկնութիւն կրկին է գրեալ։ Որպէս ողորմութիւն և ճշմարտութիւն և հատուցումն և այլն։ Վասն կրկին պատճառի։ Նախ՝ որ էր յառաջին քաղուածոյն և յերկրորդս գրեցաւ։ Եւ դարձեալ դանդաղկոտ մտաց՝ յուլացեալ անձանց։ Եւ քառակին տեսութիւն ըստ հասակի տեսողաց։ Եւ ոչ ամենայն բանի, զի բոլորին մեկնութիւն յառաջինն գտցի, որպէս ասէ իմաստուն սորոգիչն աշխարհի։

Արդ՝ եթէ գտցի ինչ 'ի սմա արժանի տեսութեան ձեր տեառն շնորհք և վարժասիրացն նախնի և պակասն՝ տկարութեան մերում ներեսցի։ Այլ և վարժապետին իմոյ Յովհաննու Որոտնեցւոյ յիշատակ բարի 'ի տէր արձանասցի։

Ընդ որում քաւութիւն բազմազան մեղաց մերոց և ծնողացն կրկին, արեան մերձաւորաց և աշակերտաց յեղբայրասէր կամաց ձերոց մաղթեսցի։

Որ և գրել աղաչեմ զիմաստուն գաղափարաւղս սակաւս յիշատակի, որպէս և դուք գրեալ լինիք ի գիրն անջնջելի։

Եւ Զեզ յիշողացդ ի բարի և մեզ յուսողացս 'ի հողի։ Առ հասարակ Տէրն ողորմեսցի։ Ամէն։ եղիցի։

> Յաջորդ տողերը թէպէտ եւ անմիջապէս, բառ երեւոյթին, շարունակութիւն են վերի յիշատակարանի, բայց նախ կարմիր գլխատառով բաժանուած է, երկրորդ թէ թանաքը եւ թէ գրչութիւնը նոր է եւ նման յաջորդ, երկրորդ, յիշատակարանին. մանաւանդ որ միեւնոյն անունները եւ 2. յիշատակարանի վերջի տողերում յիշւում են: Վերջապէս 1. յիշատակարանի վերջի բառերը „Ամէն: Եղիցի", ինչպէս եւ յաջորդ տողի սկիզբը „Դարձեալ յիշեցէք" նոյն են ապացուցանում:

Դարձեալ յիշեցէք ի յերկնգնաց աղօթս ձեր հեղահոգի և բարեմիտ աստուածասէր, մանկատափ Գրիգոր և ծնողքն իւր, հայրն իւր Մարգարէն, մայրն իւր Ծամիկն յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք։

2. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ էջ 701–703.

Զվերջին ստացողի սուրբ գրոյս քաղուածք քաջ և արի բարեպաշտի, տիե-

զերալեւր և աշխարհալուսի, շնորհաբաշխի և մարգասիրի, ճգնազգեստ և առաքինի, որ է որդի հարազատ և նահատակի ի մեծ ազգէն պարթևացի, Լուսաւորչին Գրիգորի, Յակոբ ընտիր վարդապետի։ Արդ աշխատեաց երեք վաննաց սուրբ Վիրապին խոր կոչեցած։ Հայոց աթոռ թագ պարծանաց և վանստանեաց. և ի Ուրծատափի վանեաց. Աստուածածնի և Սուրբ Յակոբ ընդ նմին գոված, և աշխատեաց այգեստանեայց, տունկ և արմատ բերաստանեաց. ՚ի շինութիւն տանեաց, վախմաց, ժամանակաց, ի հոգևոր և մարմնաւոր առաքինեաց, կոչեաց զմեզ Գեղարգունեաց։ Յետ նորոգել զգիրքս ծերացած, որդիք սխոն նոր զարդարեաց։ Արդ աղաչեմ լալագին ես, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զբարունապետ Յակոբ վարդապետն, որ յետ նորոգել զսա ի հալէ ինչից ի յիշատակ իւր հոգւոյն և իւր ծնողացն, հօրն Տէր Շմաւոնին, որ նահատակութեամբ փոխեցաւ ՚ի Քրիստոս. և մօրն Ազիզ փաշին և հօր եղբայրն իւր պարոն Տէր Յակոբն և միւս եղբայրն Մելիք աղէն և պապն պարոն Վէլիճանն և եղբայրն Գրիգոր կաթուղիկոսն և միւս եղբայրն Աղաճանն և մեծ պապն պարոն Միրզէն և եղբայրքն իմ Վէլիճանն, Յակոբճանն, որ են հանգուցեալ ՚ի Քրիստոս. և միւս եղբայրն իմ հարազատ Ղուլիճանն և որդին սորայ նորաբողբոջ է Արիճան սարկաւագն և միւս որդին, Ջալալին և դուստրն իւր Ազիզ փաշէն, խանում աղէն, Դաստագուլն։ Դարձեալ յիշեցէք զպարոն տէր Մանուէլ արքեպիսկոպոսն, որ է առաջնորդ ի սուրբ Վիրապին և հայրն իւր պարոն Միւրիմանն և մայրն իւր Խանփարուարն և եղբայրն իւր . . . պարոն Էլպէկն, որ է հանգուցեալ ի Քրիստոս։ Դարձեալ յիշեցէք պարոն Թաճէյն և իւր հարսն Սոլթան ղատէն. Գօզալն, որ է հիւրընկալ. և մեք եռեալ քան զամենայն հող և մոխիր և անպիտանք։

Աղաչեմ զձեզ, ով սուրբ հանդիպողք, յիշեցէք և զմեզ անյիշելի և զառածեալ սուտ անունս, զՅովհաննէս քահանայս, որ չեմ յիշելոյ և զանարժան Սիմէօնս, որ յանունս ունիմ և ոչ գործս. եթէ միով ողորմեսցին արժան առնէք, Աստուած ձեզ ողորմեսցէ իւր միւս անգամ գալստեան. Ամէն։

Դարձեալ յիշեցէք զՄարգարէն և կողակիցն, Խիկարն, և որդիքն իւր Դաւիթն, Բաղդասարն, Մխիթարն և Մարգարի հայրն Ջզաւհրապն, մայրն Թրաւանդէն, Խիկարի հայրն Շաղաւադն և մայրն Մրաւաթն յիշեցէք ՚ի Քրիստոս։

Դարձեալ յիշեցէք Գրիգոր մահտասին, որ բազում երախտիք ունի ի վերայ Վիրապին և հայրն իւր Մարգարէն և մայրն իւր Ծամիկն և միւս մահտասին Ամիրագիզն և եղբայրն իւր Թումայ կրօնաւորն յիշեսջիք ի Քրիստոս, ի թվականութեանս հայոց ՌՀԶ էր բարով վայելէ։

3. ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ էջ 530. Ձմեռապարտ գծողս Յիվան ․՟ յիշեայ ով սուրբ ընթերցողք. և Աստուած զձեզ յիշէ։

## 19.

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 26,3×21 սմ։—ԿԱԶՄ թղթեայ, մէջքը կաշեպատ։—ՎԻՃԱԿ լաւ։—ՆԻՒԹ թուղթ, բարակ եւ ողորկ։—ԹԵՐԹ 115։—ՏՈՂ 36—37։—ԳԻՐ շաղագիր միասին 22,5×18 սմ։—ԹՈՒԱԿԱՆ ԺԹ դար։—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ էջ III գրուած «Սրբոյն Նանայի Ասորւոյ վարդապետի մեկնութիւն Յովհաննու»։ էջ IV. գրուածէ «Ներսիսեան ուսումնարանի գրադարանին նուէր նոյն ուսումնարանի V դասատան աշակերտ Աւ. Ազէսեանից։ 1892 ամի, 29 փետր. Թիֆլիզ»։

Մատեանս է Ասորւոյ Մեկնութիւն Յովհաննու։

1. էջ V—X «Կանխաբանութիւն: Ո՜չինչ ըղձալի է քան...»

2. էջ 1—14 «Գլուխ Ա. Բնաբան. Սկզբանն էր բանն: Մեկնութիւն. Պարտ է մեզ սկզբան ճառից նկատել...»

3. էջ 14—19 «Գլ. Բ. Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին ի Կանայ...»

4. էջ 19—31 «Գլ. Գ. Եւ էր այր ոմն ի փարիսեցւոցն Նիկոդիմոս անուն նորա իշխան Հրէից...»

5. էջ 31—42 «Գլ. Դ. Իսկ իբրև գիտաց Յիսուս եթէ լուան Փարիսեցիքն, եթէ Յիսուս բազում աշակերտս առնէ...»

6. էջ 42—55 «Գլ. Ե. Յետ այսորիկ տօն էր Հրէից. և ել Յիսուս յԵրուսաղէմ...»

7. էջ 55—72 «Գլ. Զ. Յետ այսորիկ գնաց Յիսուս յայնկոյս ծովուն Գալիլիացւոց...»

8. էջ 72—82 «Գլ. Է. Յետ այսորիկ շրջէր Յիսուս ի Գալիլիա...»

9. էջ 82—93 Գլ. Ը. Դարձեալ խօսեցաւ ընդ նոսա Յիսուս և ասէ. Ես եմ լոյս աշխարհի...

Ութերորդ գլուխը բաժանուած չէ, ինչպէս միւսները, այլ կցուած գ-ին, անշուշտ սխալմամբ. որին հետեւում թ. գլուխը. արդէն նկատելի կերպով բաժանուած եւ վերտառութեամբ է, ինչպէս միւսները: Սակայն դիտելու արժանին այն է որ Ը. գլխի սկիզբը 1—14 տան մեկնութիւնը, այն է շնացող կնոջ պատմութիւնը, չկայ: Այս մեկնութիւնը՝ ոչ թէ նախաւն գրել է եւ պատահմամբ կորած արտագրողների անզգուշութիւնից, այլ հաւանական է, որ նա երբէք չէ գրել. քանի որ ձեռագրներ կան, որոնց մէջ շնացող կնոջ պատմութիւնը չկայ:

Ի հաստատութիւն մեր կարծիքի այստեղ յառաջ ենք բերում 1867-ին Երուսաղէմի սուրբ Յակովբեանց վանքում Նոր կտակարանի էջ 306 Յովհաննու աւետարանի Ը. գլխի սկզբում շնացող կնոջ պատմութեան ներքեւ գրուած հետեւալ ծանօթութիւնը:

„Ի հին երկաթագիր և ի բոլորագիր ձեռագիրս, որոց հետեւեցաք յառաջնում եւ երկրորդումս յայսմիկ տպագրութեան, է զի ոմանք խսպառ զանց առնեն զպատմութիւն կնոջն շնացելոյ. սկսեալ ի 53 համարոյ նախընթաց գլխոյ մինչեւ ի 11 համարն. եւ ոմանք ի բոլորագիր օրինակաց ունին զնոյն ի վախճանն եղեալ, որպէս եւ մեք եդաք յառաջին տպագրութեանն. իսկ արդ հարկ եղեւ մեզ հետեւիլ հասարակ տպագիր աւետարանաց:

10. էջ 93—102 «Գլ. Թ. Եւ մինչդեռ անցանէր, ետես այր մի կոյր ի ծնէ...»

11. էջ 102—114 «Գլ. Ժ. Ամէն ամէն ասեմ ձեզ, որ ոչ մտանէ ընդ դուռն ի գաւիթ...»

12. էջ 114—127 «Գլ. ԺԱ. Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս ի Բեթանիա...»

13. էջ 127—143 «Գլ. ԺԲ. Իսկ Յիսուս վեց աւուրբք յառաջ քան զզատիկն եկն ի Բեթանիա...»

14. էջ 143—149 «Գլ. ԺԳ. Յառաջագոյն քան զտօնն զատկի, գիտաց Յիսուս եթէ հասեալ է ժամ նորա...»

15. էջ 149—158 «Գլ. ԺԴ. Մի խռովեսցին սիրտք ձեր, այլ հաւատայցէք յԱստուած և յիս հաւատացէք...»

16. էջ 158—104 «Գլ. ԺԵ. Ես եմ որթն ճշմարիտ, և Հայր իմ մշակ է...»

17. էջ 164—173 «Գլ. ԺԶ. Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի մի՛ գայթակղեսջիք...»

18. էջ 173—180 «Գլ. ԺԷ. Զայս իբրև խօսեցաւ Յիսուս, համբարձ զաչս իւր յերկինս և ասէ...»

19 էջ 180—187 «Գլ. ԺԸ. Զայս իբրև ասաց Յիսուս, ել աշակերտօքն հանդերձ յայնկոյս ձորոյն Կեդրոնի...»

20. էջ 187—199 «Գլ. ԺԹ. Յայնժամ առեալ Պիղատոս զՅիսուս և գան եհար զնա...»

21. էջ 199—208 «Գլ. Ի. Եւ ի միաշաբաթօջն Մարիամ Մագթաղենացի գայ առաւօտուն...»

22. էջ 208—216 «Գլ. ԻԱ. Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց զանձն իւր...»

Նման Աստուածամօրն տես մեր ցուցակի 12 ձեռագրի յիշատակագրութիւն 3. եւ համեմատիր Հայր Գ. Զարպհանալեանի Հայկ. թարգմ. էջ 610:

## 20.

### ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՌԱԿԱՑ ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆԻ։

ՄԵԾՈՒԹԻՒՆ 23×18,5 *սմ:*—ԿԱԶՄ *թղթակազմ։*—ՎԻՃԱԿ *վատ, գրերը ղըժգոյն, կազմը խախտուած։*—ՆԻՒԹ *թուղթ բարակ եւ հարթ։*—ԹԵՐԹ 43։—ԴԱՏԱՐԿ *մի թերթ սկզբից, էջ* 76 *եւ* 80—84։—ՏՈՂ 38։—ԳԻՐ *նոտրագիր երկսիւն, իւրաքանչիւրը* 19,3×6,8 *սմ։*—ԽՈՐԱԳԻՐ, ՎԵՐՆԱԳԻՐ *եւ* ՍԿԶԲՆԱԳԻՐ *կարմիր։*—ԹՈՒԱԿԱՆ 1772 *մարտի* 12։—ԳՐԻՉ *Մահտեսի Ստեփան։*—ՏԵՂ *Պասրա։*—ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ *էջ* 79։—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ *էջ* 1. *եւ* 84 *«Ներս. Հոգեւ. դպրանոցի» կնքադրոշմը։ Գրքի մէջքի վերայ գրուած է «Գ ի ր ք  վ կ ա յ ու թ ե ա ն». իսկ էջ* I. *«№* 127 *մատեան որ կոչի գ ր չ ե ա յ մ ե կ ն ու թ ի ւ ն»*

Մատեանս է Մեկնութիւն Առակաց սուրբ Աւետարանի.

Բովանդակում է նոյնն ինչ որ Թ. 7. այն տարբերութեամբ՝ որ առաջին երկու գլուխների տեղերը փոփոխուած են։

Պակաս է Թ. 7-ի մէջ էջ 172—245 գտնուածը. աւելի է միայն էջ 77—79 «Այս չէ շարադրեալ գրքոյս։»

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. էջ 79. Սիրելի և ազնուական եղբօր պարոն Պօղոսի Բերթումեան։ Յայտ լիցի ազնուութեան քում. զի զմեկնութիւն չորից գլխոց աւետարանին, զոր արարեալ է եղբօր քում Պետրոսի վարդապետի, գտեալ առ փոխանորդի լուսահոգի Յովսէփ վարդապետի սրբոյ Էջմիածնայ նուիրակի, ետու *Մահտեսի Ստեփաննին* ընդօրինակե՛լ զ՛յն և զօրինակն առաքեցի առ ազնուութիւնդ։ Այժմ անտես արարեալ բարեպաշտութիւնդ զխալանմն գըրչիս Եւ անմեղադրելի համարեալ զգրողն. յընթեռնուլն ձեր զայն. և ի շահելն ի նմանէ գտցուք և մեք մասնակից առաւելութեանն նորին։ Զի մտեալ մեր միանգամ յայդ պարտէզ ծաղկալից և վայելեալ յանուշահոտութենէ դորին. փափաքելի եղև մեզ հանապազ ի դոյն զմայլիլ ողջ լեր։ Ամի Տեառն 1772։ Ի մարտի 12։

Ի *Պասրա։* Նուաստ ծառայ Մահտեսի *Աստուածատուր Դաւթեան Թիֆլիզեցի։*

## 21.

### Տ Ե Լ Ե Մ Ա Ք

ՄԵԾՈՒԹԻՒՆ 32×19,5 *սմ:*—ԿԱԶՄ *խաւաքարտ, կաշեկազմ:*—ՎԻՃԱԿ *լաւ:*—ՆԻՒԹ *թուղթ կապոյտ:*—ԹԵՐԹ 268:—ԴԱՏԱՐԿ 5 *թերթ սկզբից, էջ* 53—56, 62—526:—ՏՈՂ 31—37:—ԳԻՐ *շղագիր:*—ԽՈՐԱԳԻՐ, ՎԵՐՆԱԳԻՐ *և* ՍԿԶԲՆԱԳԻՐ *սեւ գլխատառերով:*—ԹՈՒԱԿԱՆ *ԺԹ դար:*—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ *սկզբի* 1. *թերթի ա. էջում գրուած է «№* 187. *գրչեայ Տելեմաք». նոյն տեղում եւ վերջին թերթի բ. երեսում կայ «Ներս. Հոգ. դըպրանոց»ի մատենադարանի կնքադրոշմը:*

Մ ա տ ե ա ն ս  է  Տ ե լ ե մ ա ք ա յ  ո ր դ ւ ո յ ն  Ո դ ի ս ե ա յ

1. էջ 1—52 Տելեմաքի ա. և բ. գիրքը։

Մեզ յայտնի երկու Հ. Մանուէլ Ջախջախեանի և Հ. Եդուարդ Հիւրմիւզի գրա-

բառ թարգմանութիւնը չէ այս, այլ սակաւ ինչ նման է հայ ընթերցողներին անծանօթ Պարոն Խօճենցի թարգմանութեան։

Հ. Գ. Զար. Հայկական Մատենագրութեան մէջ յիշուած չլինելով, յառաջ ենք բերում ամբողջ վերնագիրը։

,,Փոխադրեալ ի գաղղիացւոց եւ յիտալացւոց լեզուէ ի հայ բարբառ. ջանիւ եւ աշխատասիրութեամբ Պարոն Մարգար Զաքարիայի Խօճենց Երեւանցւոյ։ Սրբագրեալ զգուշութեամբ ի ձեռագրոյ թարգմանչին ի Թադդէոս վարդապետէ Կոստանդնուպօլսեցւոյ Մարտիրոսեան. Տպագրեալ ի վեհափառ հայրապետութեան Լուսաւորչեան եւ քրիստոսակիր Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Տեառն Ղուկասու երիցս երանեալ սրբազնասուրբ կաթուղիկոսի ամենայն Հայոց։

Հրամանաւ՝ Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի ծայրագոյն Նուիրակի եւ հիւսիսային կողմանս եղեալ ազգի Հայոց՝ առաջնորդի, սանահնեցի Երկայնաբազուկ Արղութեանց իշխանազնեայ Տեառն Յովսէփայ պատկազգեաց Սրբազան Արք եպիսկոպոսի, հիմնադրի Նոր Նախիջեւանու եւ Գրիգորուպօլու քաղաքացն։

Արդեամբ եւ ծախիւք բարեպաշտօն եւ մեծահաւատ Ջուղայեցի պայծառ իշխան Աղայ Յօհաջանին Գէորգեան, բնակելոյն ի Հնդիկս, ի Սուրաթ։

Յամի Տեառն 1794, ի հոկտեմբերի 10. իսկ ի թուին հայոց ՌՄԽԳ։

Ի տպարանի նորին բարձր Սրբազնութեան, որ արփիանման պայծառացեալն է՝ զուարթառատ եւ արդիւնաւոր տովք, ի Հնդիկս՝ ի զանազան քաղաքս բնակեալ բարեսէր մերազնէից հասարակութիւնն։

Ընդ հովանեաւ երկնահանգէտ Սուրբ Խաչ վանիցն՝ որ ի Նորն Նախիջեւան։

2. էջ 57 «Արուեստ բանական կամ տրամաբանութիւն Փրանկիսկոսի Սոավէի։ Փոխեաց ի հայս. Հայր Արսէն վարդապետ Անտոնեան Մխիթարեանց ի Վենետիկ ի տպարանի Մխիթարեանց 1825։ Յորմէ քաղեալ ընտրանաւ, զբառս և զբանս զոմանս յօգուտ գրասիրաց, 'ի Լոռու Մելիքեանց Գրիգոր քահանայէ, ի յիշատակ վայելողաց—1831 յամի ի Տփխիս»։ Կայ միմիայն «Յառաջաբանութենէ թարգմանչին» 16 տող։

3. էջ 57—61 Համառօտ պատմութիւն իմաստասիրութեան մանաւանդ ըստ մասին բանական արուեստի բնազանցութեան. և բարոյականի։ Ապա մինչև վերջ բոլոր թերթերը դատարկ։

22 և 22ա.

## ԲԱՌԱՐԱՆ ԱՆԳԼԵՐԷՆ-ՀԱՅԵՐԷՆ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 41×16,5 սմ։—ԿԱԶՄ բարակ թղթեայ, կաշեպատ։—ՎԻՃԱԿ լաւ պահուած, կազմը սակաւ ինչ փչացած։—ՆԻՒԹ թուղթ։—ԹԵՐԹ 186. 22ի էջ 1—370 իսկ 22ա. 104. էջ 371—570։ —ԳԱՏԱՐԿ 22ի սկզբից 1, իսկ 22ա-ի սկզբից և վերջից երկերկու թերթ։—ՏՈՂ 40—65. բառերի դիմաց շատ տեղ համապատասխան բառերը պակաս են։—ԳԻՐ լատիներէնը սովորական գրչութիւն, իսկ դիմացի հայերէնը նոտրագիր։—ԹՈՒԱԿԱՆ ԺԸ՞ դար։—ՏԵՂ զուցէ Հնդկաստան։ — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. 22ա. կողքի ներսի երեսին մի քանի բառեր, դիմացը հայերէն նշանակութիւնը. էջ 1. երեք, էջ 370, մի եւ 22 ա. էջ 371 եւ վերջի դատարկ թերթի երկրորդ երեսն ունեն «Ներս. Յով. Դալրանոցի» մատենադարանի կնքադրոշմը։ Առաջին եւ երկրորդ հատորի սկզբի դատարկ թերթերի եւ երեսի վերայ մատիտով գրուած է «Բ ա ռ ա ր ա ն  լ ա տ ի ն  լ ե զ ո ւ ի»։

**Մ ա տ ե ա ն ս  է  Ա ն գ լ ե ր է ն-Հ ա յ ե ր է ն  բ ա ռ ա ր ա ն.**

I. 22 սկսում է էջ 1 Abbadon և վերջանում է էջ 370 quicksigled բառով. իսկ

II. 22 սկսւում է quicksilver և վերջանում էջ 570 Zootomy բառով։

## 23.

## ԲԱՆՔ ՈՍԿԻԱԿԱՆՔ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 34,5×22 *սմ:*—ԿԱԶՄ *խաւաքարտ, գունաւոր թղթով պատած. մէջքը եւ կողքերի ծայրերը ոսկի կաշեայ կալեկիք*։—ՎԻՃԱԿ *լաւ:*—ՆԻՒԹ *թուղթ, ալինդ եւ հարթ:*—ԹԵՐԹ 126։—ԴԱՏԱՐԿ *էջ* 18—140. 142—146. 154—173. 178—188. 191—200. 216—233։—ՏՈՂ 52—67։—ԳԻՐ *տգեղ նոտրագիր, երկսիւն խորաքանչիւրը* 30×8,5 *սմ. բայց էջ* 201—215 *միասիւն:*—ԹՈՒԱԿԱՆ 1837, *մայիսի* 10։—ԳՐԻՉ *Գրիգոր քահանայ Լոռու-Մելիքեան:*—ՏԵՂ *Տփխիս*։—ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ *էջ* 5 *լուսանցքում:*—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ *էջ* 3, 5 *եւ* 251 *«Ներս. հոգ. ղալթանցի» կնքադրոշմը. ա. կողքի ներսի երեսին մի քանի տող գըրուածք. վերջին թերթը կպած է կողքին: Էջ* 3 *այսպէս* «№ 182 *բ ա ն ք  ո ս կ ի ա կ ա ն ք  գ ր չ ե ա յ*»:

### Մ ա տ ե ա ն ս է.

*Բանք Ոսկիականք* քաղեալք ընտրանաւ ի հոգելից գրոց տարեկան առածից. *աշխատասիրութեամբ Գրիգոր քահանայի Լոռու-Մէլիքեանց* ի պէտս բանասէր եղբարց, և յաւէտ քարոզչաց սրբոյ եկեղեցւոյ։

1. էջ 5—17. և էջ 41 խրատներ ամիսների խրաքանչիւր օրուան համար, Յունուարն ամբողջ. Փետրուարից մի մասը. և էջ 41 Յուլիս։ Շատ պակաս է։

2. էջ 103 Կերակուր քահանայից։

3. էջ 141 Արշալոյս լոագրից լուրեր։

4. էջ 149—152 Բացայայտութիւն խրթին բառից պատմագրութեան սրբոյն Եղիշէի (և էջ 158 գովեստ մատենագրութեան սրբոյ Եղիշէի)։

Հետաքրքրութիւների հարցասիրութեան գէթ մասամբ գոհացում տալու համար յառաջ ենք բերում առանձին կարեւորութիւն ունեցող բառերը:

*Բղակապետ,* պետ ամրոցի, բըրգանց կամ աշտարակաց բերդապահ. ղալաբէգի, խուլէ տիղտարի ըստ տաճկաց։

*Բոզպայտ.* է մին ի հինգ աղանդոց մոգական կրօնից, որ 'ի հին բառարանի մերում գրի բաղպայիտ. և մեկնի մեղաց քաւարան։

*Գումարտակ.* աստ նշանակէ ականակուռ քառամանեակ, ռամկօրէն գերդանըլբ։

*Գրուան.* Պարսից բառ. Նշանակէ յանցաւոր, մեղապարտ, վնասակար, ղարահաթըլ։

*Դարիթիւ.* կոչմի ի պարսկական բառիցս թիւրէ, որ է օրէնք և թու, որ է ծածկոյթ և յարկ և նշանակէ օրինատուն, որով իմանի յարկն՝ ուր իշխանն մոգպետաց սովորէր դատել և վճռել զերս կրօնի։

*Դենիմազդէն.* է բառ պարսկական, որ ըստ հին բառարանին մերում թարգմանի հաւատոյ հաւատ։

*Դերանդերձապետ.* Նշանակէ փոխանորդն վերակացուի ապարանիցն արքունի։ Սարայ քէհեասը վէքիլի։

*Նրան եւ տանեբան.* են բառ պարսկական, որք ըստ հին բառարանին մերոյ թարգմանին մեծարոյ և պատուական։

*Զանդիկ.* ըստ հին բառարանին մերոյ թարգմանի սպասաւոր և է անուն յատուկ իմն կրօնի հրապաշտ մոգուց և ըստ Եզնկայ մոգն և զանդիկն համակրօն են. բայց միայն մոգն առ երես կերպարանի առաքինի, այլ զանդիկն ամենայնիւ է զեղխ։

*Թրաւշ.* անարգ, անպիտան, երբեմն նշանակէ ուլունս, պունճուխ։

*Լաշկար.* զօրք, ասկէր, երբեմն՝ ամուր տեղի և աստ ուր ասի անձուկ լաշկար՝ իմանի կիրճ, կամ նեղ անցք այսինքն է կապան։

*Խոնաստան.* ըստ Պարսից բանակեալ, օդու կամ հրապարակ, ատեան, ուր բազմի խանն կամ թագաւորն և արքունի գործակալք՝ յորոշել զխնդիր ինչ. դիւան։

*Խոնճանումք.* Նշանակէ զարկեղս գանձուց. խազնէ. է բառ պարսից։

*Համակդէն.* է մին 'ի հինգ աղանդոց

մոգական կրօնից. ըստ բառին միահաւատ. իսկ հին բառագիրքն մեր Թարգմանէ, ամենահարուստ կամ բոլորից ուսուցիչ. յայսմ աղանդոյ էր երանելի մոգպետն, որ հաւատաց ի Քրիստոս և նահատակեցաւ։

Համհարզ. պարսկական բառ, նշանակէ համախոհ, միասիրտ, կամակից։

Հարմատ. ձևացեալ ի պարսկական բառէս՝ հիւմիւզդ, որ է անուն Լուսնթագ մոլորակին, զոր պաշտէին իբրև զԱստուած. յայս միտ առեալ ի հարմատայ, նշանակէ յառաջ եկեալ 'ի սերմանէ չաստուածոց կամ դիւցազին։ Եւս է անուն քաղաքի, որ մերձ Ովկիանու, երբ ասի 'ի հարմատայ ցուցանի լինել ի քաղաքէն Հիւրմիւզտայ։

Ղանիշ. ըոտ մեզ համագունդ, բայց երևի նշանակել ատ պատնէշ կամ մաթարիզ։

Մովպետան մովպետ. ըստ պարսից հնչի մուպէտան մուպէտ կամ մէվպէտան մէվպէտ. նշանակէ գիտնականն մոգուց, այսինքն մոգպետաց մոգպետ, կամ իշխանաց իշխան։

Շախուռապետ. համբարակապետ, վերակացուն արքունական ապարանից կամ շտեմարանապետն. ամբէր էմինի. կամ վէքիլ խարջ։

Պանհասիկ. է մին ի հինգ աղանդոց մոգական կրօնից. որոց հեղինակն եղեալ է գիտնական ոմն պալհաւ. այսինքն Բուխարացի։

Պարմանել. հնարել, կազմել, յառաջ բերել։

Պարսկառէն. է մին 'ի հինգ աղանդոց մոգական կրօնի, որոյ հեղինակն եղեալ է ոմն 'ի գիտնականացն Պարսից։

Պարտքաշ. կամ ամպարտքաշ. է մին 'ի հինգ աղանդոց մոգական կրօնից, այսինքն համակրօն, լուսամիտ։

Ռատ. Հայոց և Պարսից նշանակէ առատ, լիովին։

Սաղար. այսինքն է սալար. բառ պարսից, զօրագլուխ, սէրասկէր։

Վատախտարակ առնել. չարաչար խոտել կամ շփոթել. կամ դարանամուտ լինելով ընդ կրունկն դարձուցանել և շփոթել։

Վզուրկ. պարսից ըստ նոցա վիւզիւրք այսինքն մեծ, ուլու։

Վռամ. ըստ Պարսից ալէհրամ, է անուն մոլորակին, որ 'ի մեզ կոչի Հրատ. ուստի Վռամականն նշանակէ զայն՝ որ վերաբերի առ Հրատն, որ իմանի կրակն ատրուշանաց, զոր վառէին հրապաշտք 'ի պատիւ Հրատին։

Փազամ. պարսից է. 'ի մեզ գրի փանդամ և մեկնի կողպատ երեսաց, սաւան, պիւրիւկ։

> Որքան յիշում ենք Եղիշէի ձեռագրներն ունին եւ մի այլ փոփոխակ, փոխանակ փանդամի՝ փամամ, որ օխալ է:
>
> Փանդամը մի բարակ լաթի կտոր է, որ կապում էին քթի տակից, վերին շըրթունքի վերայ, որպէս զի շունչը խմոր շաղախելուս եւ հունցելուս, վերջինիս չառնէր և չպղծէր. այսպէսով միայն հասկանալի է դառնում Եղիշէի խօսքը ,,հաց առանց փանդամի զանկցին":

Քումիզ. օշնան խոտն է, զոր այլ գիրք օճառ ասեն լուալեաց, չօղան խոտ։

Քրտիկար. Պարսից. վաստակաւոր, գործունեայ, շահարար։

Քրտիկար առնել. Պարսից. մասնաւորաբար առեալ նշանակէ լուանալ զսրբանն, զի այս բան, «քրտիկար չառնելով դժ տայք խարամանւոյն», այսինքն լուացումն ի փոր չառնելով դժ տայք խարամանւոյն, այսինքն դիւաց. ըստ հին բառարանին։

5. էջ 174 Թուղթ Գիւտ հայրապետի առ Վաչէ Թ ձեռքի՝ — 

6. էջ 175—176 Ոսկեբերանից, Շնորհալուց քաղուածք։

7. էջ 177 «Վասն գլուխ ասացեալ բառին ի Լատինացւոց՝ սրբոյն Պետրոսի համօրէն առաքելոց և եկեղեցեաց քրիստոնէից, ջրումն ի Միքայէլ վարդապետէ Սալլանթեանց։

8. էջ 189—190 «Քաղուածք ի պատմագրութեանց չորից ինքնակալութեանց։ յԱդամայ մինչև ջրհեղեղն...»

9. էջ 201 Ուղերձ առ Ներսէս Ե. Աշտարակեցի «Ասացեալ ի Նիկողայոսէ Տէր Աւետիսեան Պապովէ, ի փառաւոր հանդիսի նոր տարւոյ 1847 ամի ի մէկն յունուարի։ Գոլով 12 ամաց ի Տփխիս»։

10. էջ 204—205 Ներբողեան յաւուր տօնի օծման Տեառն Յովհաննիսի սրբազնա-

գոյն ի Տէր Սահակ գիտնական քահանայէ Սահառունեանց։ Ծիր որոտաց աշխարհ համայն... Են ի 22 Նոյեմբ. 1839 ամի ի Ս. Էջմիածին։

11. էջ 206 Ի շնորհաւորութիւն Նոր Տարւոյ ազնուական Պետրոս ամիրայի և Պայազատի Նուսուփեան, անզոյգ բարերարի մերոյ. որ ի Թրեստ քաղաք յԵւրոպիայ։ Ի Ձմեռնիայ 1837։ «Ոչ փայլթոն մանուկ անվարժ ի հիռս անուոյն լուսացայտ...» և այլն

12. էջ 207 «Ի Թրեստ։ Ազնուական աղայ Աբրահամ Առաքել Թպրօյենց անաղօտ պարծանք հայրենեացդ։ Ի կամարին գետ կարկաչուն, որ զկողեւք հայրենեաց...։ Ն. Ծ. Գրիգոր Տէր-Վարժապետեան։ (Էջ 206 ոտանաւորն էլ թերևս սորանն է).

13. էջ 208—214 Ոտանաւորներ, և մի ճառ, ստորագրուած «Գրիգոր Տէր-Վարժապետեան 1834 ի 25 օգոստոսի ի Ձմեռին»։

14. էջ 214—215 «Առ ամենապատիւ գիտնական պարոն Գրիգոր Վանանդեցի Տէր Յովհաննէսեան, և առ աշակերտակից Նորուն Գրիգոր աղայ Կոստանեանց Նուէր... ի Պօլսոյ Խաչատուր Միսաքեան Իւսկիւտարցի։ Հոկտ. 9, 1836։

15. էջ 215 «Տաղք ի վերայ մահուան տեառն Յովհաննու Վանանդեցւոյ բազմարդիւն վարդապետի Մեսրովբեան ուսումնարանիս. ասացեալ յաւուր հանգիսի վարձատրութեան աշակերտաց ի Հայրապետէ Թովմայեան։ Վեց տուն չորստողեան. 11 փետր. 1840. ի գործարանի ուսումնարանին։

16. էջ 217—225 «Ի Գրովտիոսի գրութեանց, ի ծանօթութեանց։ Գիլոն Բիբլիոս ի գիրս իւր, որ յաղագս վարձուց...»

17. էջ 226 «Ի Զարչարանս Քրիստոսի Տեառն երգ։ Ի դառն յետնում յայն գիշերին... Են» 13 տուն հինգտողեան։ Շրջանի տարւոյ կեանք մեր նմանակ... Են 1839 յօրացոյց, որ ի Կ. Պօլիս։

18. էջ 227—229 «Ընտիր ասացուածք։ Ակն կալ յայլմէ, զոր ինչ դու նմա առնես...»

19. էջ 230 ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՃԱՇՈՑԻ։ Եւ գրեցաւ սուրբ գիրս (Յիշատակարան ճաշոցս) յերկրին Ջագամայ (որ է ի Շամշադին) 'ի գեղջս՝ որ կոչի Սուլթանեցիք, ընդ հովանեաւ 'ի դուռն խնկալից սուրբ Աստուածածնի 'ի տեսչութեան Հայոց հանուրց սեռի Տեառն Եսայեայ երիցս երանեալ երջանիկ հայրապետի, և քաջ հովտորի, յաթոռ սուրբ Գանձասարի. Եւ 'ի վերատեսչութեան նահանգին վերին Ջագամայ Ղարաղայու կամ Ղըզըլ ձորիս հեզահոգի արհի եպիսկոպոսի և շնորհազարդ հայրապետին տեառն Դաւթի յաթոռ սուրբ Գօշին Մխիթարայ։ 'Ի ժամանակս թագաւորին Պարսից Սուլթան Հուսէյինի ի Միրզայ շահին. Եւ 'ի տէրութենէ Թուրքմանլարու նահանգիս Ալի ղուլի խանին, և Շահրիար Աղալարին, որդոյ Քալանթար Իսկանդարին, որդոյ Հախնազարին, որդոց Աղաբաբայ Քեալանթարին. Եւ մելիքութեան Թահիր բագին։

Արտագրեցի զայս յիշատակարան 'ի վերոյիշեալ յայսմաւուրէ. որ կայ այսօր 'ի տան Ղօրղանի որդի հանգուցեալ տէր Գրիգորին, մականուանեալյն ճանճ. Ի Տփխիս քաղաքն. Գրիգոր քահանայ՝ Լոռու-Մէլիքեան։

20. էջ 230—232 Աշխարհագրական պատմական և այլ մանրմունր տեղեկութիւններ։

21. էջ 234—237 «Ընտիր ասացուածք։ Ամենայն նիւթոյ որ մարմին է ապականութիւն հետևի. Լամբրոն'' յատենաբանութեան... Են».

22. 238—250 «Գիտելիք, զուարճալիք. ոտանաւորներ և դէսից դէնից հաւաքած ծանօթութիւններ, լուրեր, տեղեկութիւններ։—Առհասարակ բովանդակ գրքի մէջ զետեղուած են ամեն տեսակ մանրմունր տեղեկութիւններ, մենք միայն գլխաւոր և կարևոր մասերը նշանակեցինք։

## 24.

## ՃԵՄԱՐԱՆ ՄՏԱՑ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 34×21 *սմ։*—ԿԱԶՄ *նոր, խաւաքարտ, գունաւոր թղթով պատած, մէջքը եւ ծայրերը կաշեպատ. կողքերի ծայրերին կայ երկ-երկու թել, գիրքը կապելու համար։*—ՎԻՃԱԿ *լաւ։*—ՆԻՒԹ *թուղթ, ալինդ եւ հարթ։*—ԹԵՐԹ 144։—ԴԱՏԱՐԿ *էջ* 2—4, 14—54. 56—72, 77—96, 115—288։—ՏՈՂ 42—52։—ԳԻՐ *նոտրագիր երկսիւն, խորագրները* 30,5×8 *սմ։*—ԹՈՒԱԿԱՆ *ԺԹ դար։*—ԳՐԻՉ *Գրիգոր քահանայ Լօռու-Մելիքեան։*—ՏԵՂ *Տփխիս։*—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ *ա կողքի ներսի կողմը թանաքով գրուած է «№ 181» էջ 1. երեք եւ 282 մի կնքադրոշմ «Ներս. հոգեւ. դպրանոցի»։—Գիրքը թուղթը, գիրը եւ արտաքին բոլոր հանգամանքները ցոյց են տալիս որ Լօռու Մելիքեան քահանայի գործն է. համեմատել ձեռագիր 23-ի հետ։*

**Մատեանս է ճեմարան մտաց**

1. էջ 1 «Երազացոյց լուսնի և բարի աւուրց։ 1. Օրն բարիէ, երազն ի բարին կատարի։ 2. Օրն չէ բարի, երազն երեք օրն կատարի...» ևն։

2. էջ 5—13 Մեծն Կոստանդիանոսի պատմութիւնը մինչև 312 թուականը։

3. էջ 55 «Ամք քո ոչ անցանեն։ Յօրացուցէ, 1837 ամի Վենետիկ։ Կեցի զբաղում ժմերուն...» 21 տող։

4. էջ 73—76 Ի քրիստոնէականէ Յակոբ պատրիարգի։ Այն է հաւատով բարի քրիստոնեայ, որ գործով լինի Քրիստոսի ծառայ։

5. էջ 97—114 «Քաղուած յաստուածանմանութեան մատենէ Բերթումեան աստուածաբան արհի եպիսկոպոսի Աղամալեան հին Նախիջեւանցւոյ, միաբանի սրբոյ աթոռոյն Էջմիածնի. յաւուրս Սիմէօնի կաթուղիկոսի երևանցւոյ»։ Մնացեալն ամբողջովին դատարկ։

Բերթումեանի Աստուածանմանութիւն գիրքը տպագրուած է Կալկաթա 1827 ամի։ Տես Հ. Գար. Զար. Մատենագիտութիւն։

## 25.

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԶԱՆԱԶԱՆ ՆԻՒԹՈՑ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 34×22 *սմ։*—ԿԱԶՄ *նոր, խաւաքարտ, գունաւոր թղթով պատած, մէջքը եւ ծայրերը կաշեպատ։*—ՎԻՃԱԿ *լաւ, կողքերի եզերքը մաշուած. էջ 10-ից յետոյ թերթեր են կտրուած։*—ՆԻՒԹ *թուղթ, կապոյտ, ալինդ եւ անհարթ։*—ԹԵՐԹ 92։—ԴԱՏԱՐԿ *էջ* 10, 132—150, 152, 155—158, 160—172, 176—183։—ՏՈՂ 37—65։—ԳԻՐ *նոտրագիր։*—ԹՈՒԱԿԱՆ 1843 *ապրիլի* 2։—ԳՐԻՉ *Գրիգոր քահանայ Լօռու-Մելիքեան։*—ՏԵՂ *ի Տփխիս։*—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ *ա կողքի ներսի կողմը քաղուածքներ. էջ 1 երեք, էջ 182 մի կնքադրոշմ «Ներս. հոգեւ. դպրանոցի»։ Մէջքի վրայ կցուած թերթիկի վրայ գրուած է «մեկնութիւն զանազան նիւթոց»։*

**Մատեանս է ժողովածոյ**

1. էջ 1—9 Զանազան գրքերից ծանօթութիւններ, հատուածներ և ոտանաւորներ։ Լօռու Մելիքեանց ցեղի մասին տեղեկութիւն էջ 2—3։

2. 2. էջ 9—10 Վարք նախնի իմաստասիրաց. համառօտ ի հայր Ցակոբոս վրդապետ ճէլալեան տպագրեալ Ի Վենետիկ 1826.

3. էջ 60 Տպագրուած գրքերից քաղուածքներ. ոտանաւորներ օրացոյցներից. հին դասական հեղինակների մասին Ինճիճեանից։ Մխիթար աբբայի Մատթէոսի աւետարանի մեկնութիւնից։ Շատ տեղ բազմաթիւ թերթեր դատարկ են թողնուած և ապա յանկարծ մի ծանօթութիւն, արտագրութիւն և այլն։ Գիրքը մի քաղուածք է։

## 26

### ԳՈՒՂԶԱՆԱԳԻՐՔ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 33,5×22,5 *սմ:*—ԿԱԶՄ *խաւաքարտ կաշեկազմ. կողքերի դրսի երեսները զարդերով. իւրաքանչիւր կողքի ծայրին երեք մետաղեայ ճարմանդի մնացորդներ:*—ՎԻՃԱԿ *շատ լաւ պահուած. կտուրքը ծիրանագոյն:*—ՆԻՒԹ *թուղթ, պինդ եւ հարթ:*—ԹԵՐԹ 230:—ԴԱՍԱՐԿ *սկզբից երեք թերթ. վերջից* 212 *ա*. *եւ* 213—227. *մի մի էլ կազմի հետ. այլ եւ տարեթիւների հանդէպ ամբողջ բազմաթիւ էջեր:*—ՏՈՂԵՐՆ *սկսում են, բացի թթ* 208*ա*—212*բ*, *ոչ ըստ սովորականի վերեւից ներքեւ երկայնութեամբ, այլ լայնութեամբ, այնպէս որ երկու էջը մի է դառնում:*—ԳԻՐ *սիրուն նոտրագիր:*—ԽՈՐԱԳԻՐ, ՎԵՐՆԱԳԻՐ *և* ՍԿԶԲՆԱԳԻՐ *կարմիր: Մի քանի երփնագոյն վերնագրեր եւս ունին:*—ԽՈՐԱՆԱԶԱՐԴ *թթ* 5*ա մի հատ զեղեցիկ, երփնագոյն եւ ոսկեզօծ:*—ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ *թթ* 5*ա երփնագոյն եւ ոսկեզօծ:* —ԹՈՒԱԿԱՆ 1712. *բայց թթ* 208*բ*—212*բ* 1763:—ԳՐԻՉ *թթ* 1—208*ա* *(որի հեղինակն է Ա. Եւդոկիացին) անյայտ. բայց թթ* 208*բ*—212*բ Ղունկիանոս (որն եւ հեղինակ է թթ.* 210*բ*—212*բ*, *այսինքն Ղազար կաթուղիկոսից մինչեւ Սիմէոնը. իսկ միջանկեալ ժամանակի, Աստուածատուրից մինչեւ Ղազար, Յակովբ Շամախեցին)* —ՏԵՂ *Ս. Էջմիածի՞ն:*—ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ *թթ* 4*բ*, 7*ա*, 92*բ*, 208*ա*, 211*ա*:—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ *թթ* 4*բ*, 5*բ*, 7*բ*, 92*բ*, *եւ* 164*ա ունի մ'իեւնոյն կնքադրոշմը «Քի+ծո | Յակովբ վարդապետ (փակագրով) ՌՃՁԴ. ապա կաթուղիկոս, որն եւ գրքիս տէրն է: Մատեանս ժապաւինեալ է. թթ* Iա, 227*բ մի մի զմուռի կնքադրոշմ' զինանշանով: թթ* IIա, 1*ա*, 224*բ*, 225*բ*, 226*բ «Ներս. հոգ. ղըրա-*[illegible] *հին կնքադրոշմը, որ տարբեր-* [illegible] *է միւս ծեռագրների մէջ եղած-* [illegible]*ից: Առաջին կողքի ներսի կողմը պազրուած տոմսակի վերայ կայ «Աղէքսանդր Ղազարեան Թահիրեանց»:*

Մ ա տ ե ա ն ս է

*Գիրք պատմութեանց, որ կոչի Գաւազանագիրք, համահաւաքեցեալ ի հին գաւազանագրաց և ի վիպաքանութեանց՝ ի մի, բազմօք երկամբք: Յումեմնէ Աւետիսէ աշխատասիրէ Եւդոկացւոյ: Ի հայրապետութեան ամենայն Հայոց և Սրբոյ Էջմիածնի լուսանկար աթոռոյ տեառն Աստուածատրոյ: Յամի տեառն* 1714 *և ի Հայոց* ՌՃՀ *և* Գ *թուին:*

1. Թթ 1ա. *Մի տտանաւոր չորս սիւնակի բաժանուած, հետեւեալ կերպով մի մի բառից.*

| | | | |
|---|---|---|---|
| *Ի սէր* | *սիրոյդ* | *տենչիւ* | *փարիմ* |
| *սիրոյդ* | *տենչմամբ* | *ես յոյժ* | *յարիմ* |
| *տենչիւ* | *ես յոյժ* | *սրտա* | *մարիմ* |
| *փարիմ* | *յարիմ* | *մարիմ* | *տապիմ* |

*Վեց տուն ևս այս կերպ չորս տողեան. իսկ վերջին իններորդ տունն է թէպէտ պարձեալ չորս ամանակով, բայց երեք տողեան.*

*Թիւ փրկչական առ այս յայտնի որոյ գումարն ըստ որ դասի | զաբրահամու զօրացն խմբի վեցիցս պատկեալ վերադրի | երկսրեւեան ի բաց բառնի ապա թիւն ուղեալ լինի |*

2. Թթ. 2բ—1բ. *«Ցանկ նորագիւտ պատմագրիս: Ծանիր ով ընթերցող այս ցանկիս մէջն որում տեղի որ թիւ աստ, այն թիւս է ի սկզբաննէ արարածոց թիւն, որ եղըն է գաւազանացն յաջմէ, որպէս զի դիւրաւ գտանիցես այս թվովս զոր զորինչ խնդրես մինչև ի ծնունդն Քրիստոսի. այս թվովս տանի շարն ցանկիս. իսկ յետ ծննդեան Քրիստոսի կենարարին ամօքն տանի ցանդն մինչև հայոց թուականն: Իսկ յետ այնմ Հայոց թվով գտցես մինչև ի ներկայն յորում եմ:*

*Վասն մեղաց Ադամա պատմութեան տես ի թիւն մէկ: Վասն ծննդեան Կայենի, տես ի թիւն հզ... ևն:*

3. Թ. 3բ—4ա. *Հրեշտակների խմբը գա-*

ըլ կամարների մէջ. տակը գրուած «Դրախտն Ադամա վատմնաւոր»:

4. Թթ. 4բ—4բ. կամարներ 1. «Հրեղէն կամար անշարժ» 2. «Կամար ջրեղէն կամ պիլօր և սա ևս անշարժ... ևն: Այսպէս 17 հատ:

5. Թթ. 5ա. «Ադամ ստեղծեալ ի դաշտն Քեբրոնի ի յագարակին որ կոչի այժմս սուրբ Սիօն»:

6. Թթ. 5բ. «Ըստ մեծին Արիստոտէլի իմաստասիրի, հարկէ ամենայն ընդհանրականի յառաջանալ յիւրում առանձնական...» Այս էջն ունի մի գեղեցիկ, երփներանգ և ոսկեզօծ խորան և թռչնագիր:

7. Թթ. 6ա. Մի ծառ, որը Հին և Նոր կտակարանի բաժանումը ծիւղաւորութեամբ ներկայացնում է:

8. Թթ. 6ա—7ա «Հեղինակի յառաջաբանը:

Քանզի զմտաւ խոռվ ածելով զճապաղութիւն աստուածային պատմութեանցս...

Արդ այսու պայմանաւ եղև հնար համեմատութեան ի դարեաց ի դար նկարեալ զաւազանքն մինչև ի Քրիստոս, ի գիրքս այս որպէս տեսանի և աղխաանքն սկսանի ի նախահօրէն Ադամայ յետ արտաքսելոյն ի անուշակ կենացն. և տանի մինչ ի ջրհեղեղն նահապետաց թվովքն միաբան. մինչ ի Նոյի. Ռ. ամ. որ լինի յԱդամայ մինչ ի ջրհեղեղն ամք ՍՄԽԲ ըստ Աստուածաշնչին. և ըստ հ.նից թարգմանութեան համեմատ ի միասին և անմիաբան ի յայլ պատմագրացս. որպէս Ասորոց թարգմանն: Նա այլք պատմիչք, յԱդամայ ի ջրհեղեղն, ոմն աւելի բերէ քան ըզ ՍՄԽԲ ամ. և ոմն պակաս, զոր կարի նշալ գայր միջոցն և շաղփաղփ. նա և ոչ կարացի իմանալ զպատճառ անմիաբանութեան սոցա, թէ ընդէ՞ր ոչ համեմատին Աստուածաշնչին և հ. նից. վասն այն ոչ կարացի իշխել անմիաբան թըվոցն ձեռն արկանել և գրել աւել և պակաս թվով, զոր բազում անգամ ամսօրեայք պարապեալ ի. հետ գրքիս բէղէմէ թափ թղթովք համարելով զթիւքն անմիաբան թէ մինչ ի ջրհեղեղն, և անտի յաշտարակն անցանելով. մինչև Մովսէս և յելսն Եգիպտոսի. և անդուստ ի Սողոմոն և այլ առաջեալ մինչ ի Զօրաբաբէլ. և ի ծնունդն Քրիստոսի էր որ միաբանէին թիւքն. և էր որ ոչ ոմն յառաջ և ոմն յետ տանէր զդարագլուխ, թուականքն. վասն այն անճար մնացի զ.հ.նիցն ձեռնարկի և կրկին բեղէմով համարեալ յԱդամայ մինչ ի ծնունդն Քրիստոսի. գտի համեմատ զանմիաբանութիւքըն, որ այց արար ինձ իմանալի արեգակն ի բարձանց. փաղափափաք ըղձիս զոր ցանկայի ի տուէ և ի գիշերի. և խոկացի միշտ թէ որով կերպիւ կարիցեմ զայս տաժանելի պատմագիրքս հեշտօրէն և նորաշէն աղիւսակօք հասուցանել մինչ ի մեր ժամանակս. և այսպէս շնորհիւ տեառն զորգիտութիւնս ի բաց եռեալ համարձակեցայ յայս գործ և սկսայ յամի տեառն ՌՉԺԲ և հայոց ՌճԿԱ=1712 յամսեանն հոկտեմբերի. Բ. օրն Եշի յերես անկեալ խնդրեմ իմաստուն ընթերցողդ. որ զծառայս ձեր անդատապարտ թողուլ ի բանբասանաց. զի կարն իմ այսչափ բաւեաց. և հազիւ թէ հնարել կարացի զգիրքս աշխատութեամբ այսքան: Նուաստագոյն ծառայ՝ Անտիք զրիչ, ծնունդ Տիգրանակերտեան եւ նորակերտող գրքիս:

9. Թթ 7ա—57ա. «Յաղագս մեղացն Ադամա: Իբրև մեղաւ Ադամ ի դրախտին, կոչեաց Աստուած զայրն...»

Ձախ կողքին սիւնակներով բաժանուած մի կարգ այբուբենով նշանակուած են տարեթուերը. որոնց վերնագիրն է կարմրատառ «Ամք իսկզբաննէ Արարածոց». իւրաքանչիւր տարեթուի առաջ գրուած է պատահած իրողութիւնները: Անուհետև աւելանում են իւրաքանչիւր նահապետի կեանքի տարիները ծննդից մինչև մահը, որով վերջանում է աղիւսակը. այսպէս՝ առաջին սիւնակին կից աւելանում է «Ամք Կայենի», և ապա հետզհետէ «ամք կենաց Հաբէլի» թթ 9ա—12բ: «Ամք Սէթա» թթ 13ա—17ա: Ծնունդք և ամք Ենովսա թթ 17բ—21բ: Կայնանա թթ22ա—25բ: Մաղաղիէլի թթ 26ա—29բ: Յարեդի թթ 30ա—30բ: Թագաւոր Ազօրաս և ամքն թթ 31բ—33ա: «Ծն. և ամքն Ենովքա թթ 33բ—37բ: Մաթուսաղայի թթ 37բ—42ա: Ամք Ղամէքա թթ 42բ—45բ: Ծնունդք Նոյի թթ46ա—55բ: Սէմա թթ 55բ—56ա: Քամա թթ 56բ: Յաբեթի թթ 57ա: Թթ 57բ կան Նոյեան տապանի ձեւերը ա. ըստ

Մովսէսի, Բ. ըստ Յովսէփայ պատմագրի. Գ. ըստ հին վարդապետաց. Դ. ըստ հին վարդապետաց. և Ե. Զև տապանին ըստ կարծեաց փիլիսոփայից։ — Թագաւորների աղիւսակում Ալորոսից յետոյ կարգով գալիս են Եղբայրոս, Ազմիոն, Ամօօս. Ամբ Թագաւորին Ռասոնա. Դինոս, Տուրգինոս. Մամփիոս. Օտարդիոս. Քսիսութրոս։

10. Թթ. 57բ—91ա. Նոյ նահապետի, որդւոց, թոռների և բոլոր ժառանգների տարեթուերը կարմիր ու սևախառն վերնագրներով, և սոցա դիմաց պատմական անցքերը նահապետների ճիւղագրութեամբ։

11. Թթ. 91բ—212 Հին և Նոր արեւելեան և արևմտեան ազգերի և պետութեանց թագաւորների անունները տարեթուերով.—Հրէից քահանայապետները, Քրիստոսի ծննդեան և մեր թուականը։ Հետաքրքիր է Թթ. 144բ Երուսաղէմի յատակագիծը «Քաղաքս այս Երուսաղէմ է, ըստ վերջին շինուածն Նէէմիայ։»

Հայոց քաղաքական եւ եկեղեցական պատմութիւնը մէջը հիւսուած է: Շատ հետաքրքիր ձեռագիր է երեւում եւ ամեն կողմից արժանի ուշադրութեան: Թերեւս մի այլ անգամ սորանից ազգային պատմութեան վերաբերեալ նիւթերը հրատարակենք:

1. ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ Թթ 208 ա.

Ով ուսումնասէր և իմաստասէրք սիրելի և հոգևոր եղբարք մեր՝ են բանքս այսք նախազեկականք։

Արդ յետինս 'ի սպասաւորաց բանին Յակոբ անուամբ միայն վարդապետս Տամանեցի կոչեցեալ՝ որ ի ՌՃՂԲ թուականիս մերում յորում գրեցուցի և ստացայ զայս գիրք՝ զոր և կազմել ետու: Այլ և կամեցայ և պատշաճ տեսի ի վախճանմանէ աստի գաւազանական տփոցս՝ զսկիզբն առնել նորապէս՝ գալ և ի ջանել և հասանել ի մերս ժամանակ. ըստ ոճից և ըստ ձևոց նախկնոյդ գաւազանականի տփոցդ: Գտնելով և գրելով համառօտաբար հանդէպ թուականաց՝ զարս ոմանս անուանիս. զգեթիւնս իրաց և իրակութեանց ոմանց [illegible]աւորաց անցելոց և ներկայից, որք ի [illegible]ապագայուն պիտոյացին խնդրողաց: Եւ մանաւանդ զի յայսքան միջոցում ժամանակիս՝ յորում մեք գոմք, անուանի արքն՝ և նշանաւոր եղելութիւնքն ոմանք յոյժ պատշաճաւորք, մի մնասցեն յանյայտութեան. այլ՝ յայտնեսցին և իմանիցին և թէ չարք և եթէ բարիք: Ակն ունելով մասին փոքու վարձու բարւոյ, ըստ աշխատանց մերոց սակաւուց, որպէս բազմաշխատ վիպաբանք ընդունին ի Տեառնէ անդ և բարեկիշին ի մարդկանէ աստ: Բայց՝ ընդ այսմիկ ժամանակիս ըմբռն վարկայ և բաւական համարեցայ զեօթնեակ գաւազանական տուփս առնել: Յորոց յառաջնումն՝ զամս սկզբան աշխարհիս դնել. յերկրորդումն զամս կենարարին մերոյ Քրիստոսի կարգել. յերրորդումն զթուականն Հայոց կցուցանել. Ի չորրորդումն զհայրապետսն Հայոց զետեղել. ի հինգերորդումն զթագաւորս Օսմանցւոց դասել. ի վեցերորդումն զթագաւորս Պարսից զՂզլըլբաշից՝ կարգել և յեօթներորդումն զթուականս մահմետականաց դնել: Նաև՝ ըստ հասարակաց գրեանց գրման և ըմբռնման զգրումն գրելեաց և զըմբռնումն գրքոյս ուղղեցի. զի ըստ կարգի ամենայն գրեանց լիցի գրումն և ըմբռնումն նորաշէն գաւազանացս. և մանաւանդ՝ դիւրին և ուղղակի եղիցի ձեռնասուն ընթերցողաց: Եւ այսպէս եօթնեակ գաւազանական տփօք, և ուղղակի ձեռօք բերեալ հասուցի ի ժամանակս մեր երկամբ բազմօք. և ամենակարող զօրութեամբն և կամեցողութեամբն Աստուծոյ ի փառս նորին. ի յօգուտ մանկանց սրբոյ եկեղեցւոյ. ի յիշատակ բարի ի յապագայս՝ իմոյ մեղսավիրի անձինս, այլ և իմայնոցն ամենից: Վասն որոյ ահա խընդրեմ ի հոգևոր եղբարցդ իմոց, զի 'ի յընթեռնուլն ձեր զայս և ի շահիլն՝ յիշեսջիք ի Քրիստոս զիս և զիմայինսն յօժար կամօք, զի և դուք յիշեցեալ լինիցիք հանդերձ ձերայնովք ի Քրիստոսէ յաւուրն ահեղին: Ամէն:

Որք վասն իմ ըզթողութիւնս բանիւք հայցեն | Նոքա ըզ նոյնս 'ի Քրիստոսէ արդեամբք առցեն։

2. ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ Թթ 211 ա.

Երկրորդի հեղինակին գաւազանական գրոցս Տեառն Յակոբայ գիտնականի վարդապետին

Շամախեցւոյ՝ յարակցաբար աշխատութիւն ի գաւազանագիրս յայս ատէն դադարեալ վերջացաւ։

Քանզի էր թէպէտ սա կարի գիտուն և տեղեակ գրոց աստուածայնոց և փիլիսոփայականաց և հմուտ պատմագրութեանց, և ժամանակին եղելութեանց. և յոյժ առատ և հանճարեղ ի միտս, ի խելս, ի խորհուրդս, ի բանս և ի գործս, և յամենայնի պիտանացու և վարժ ի հոգևորս և ի մարմնաւորս։ Վասն որոյ ոչ թողուին զսա կաթողիկոսքն ժամանակին հանգիստ և հանդարտ, այլ միշտ ի զբաղալի գործս և ի յաշխատանս ունէին. զի ի գնալ կաթողիկոսաց ի դրունս թագաւորաց և մեծամեծաց Տաճկաց առանց սորա ոչ գնային և յոչ գնալն իւրեանց զսա առաքէին։ Եւ յԱթոռս եկեղոց Տաճկաց մեծաց և փոքունց զսա դիմադրէին։ Եւ ամենեքեան եկողքն զսա ճանաչէին։ Եւ ժամանակն ես կարի վրդովեցեալ և աղմկաշատ և գրեթէ ի ժամանակս Ղազարու, Մինասայ և Աղէքսանդրի կաթողիկոսացն, յորս թէպէտ նոքա էին կաթողիկոսք. սակայն սա էր կառավարիչն և ցաւակիրն սրբոյ Աթոռոյս ըստ յամենայնի։ Եւ բաց ի յայսցանեաց, ունէր ես ինքեան զմեծ և զաշխատալի գործ մի յատուկ ի սուրբ Աթոռոջս. այսինքն զհոգս գրագրութեան։ Զի գրագիրքն սրբոյ Աթոռոյս ընդ ձեռամբ սորա էին, որոց սա տայր զպատուէրս և զմուսավարայսն և զամենայն զցաւսն և հոգսն գրոց և գրելեացս կրէր։ Ուստի ի սրբոյ Աթոռոջս՝ որքան տետր և գիրք օրինակաց և մուսաւատից կոնդակաց թէ կազմեալ և թէ անկազմ կոնդակաց՝ նուիրակաց՝ և ժողովքարարաց՝ զմահուանէ և զընտրութենէ կաթողիկոսացն, յանձնարարականաց նուիրակաց՝ և առաջնորդականաց կոնդակաց և շնորհակալական գրոց. և այլոց երկաւորաց, որք գտանին, ի սմանէ են շարադրեցեալք, ըստ մեծի մասին։ Այլ և ունէր սա զգործ մի մեծ և հարկաւոր. այսինքն, զդասաւորութիւն միաբանից սրբոյ Աթոռոյս, որ գրեթէ ի յԱթոռոջս ի սմանէ ծաղկեցաւ ըստ մեծի մասին գիտութիւն գրոց թէ աստուածայնոց և թէ իմաստասիրականաց և մանաւանդ արհեստն քերթողութեան։ Եւ զի յայսքան բազմատեսակ և ի զբաղալի հոգս գոլով ի ժամանակս վարդապետութեան և յառոյգ հասակին, ոչ կարաց ձեռն արկանել զայսմանէ մեծաց մտածմանց արժանի գործոյս, թէպէտ ունէր միշտ զտենչն և զյօժարութիւն ի սրտին։ Ապա 'ի ՌՄԸ թուականիս մերում մինչ ընտրեցաւ յԱստուծոյ կաթողիկոս և Նստաւ հայրապետ, յայնժամ սկսաւ ձեռն արկանել զսմանէ որոյ հասակն էր լրացեալ, կարողութիւն պակասեցեալ, և ոգին և ցաւքն բազմապատկեցեալ. վասն որոյ ի յԱստուածատուր կաթողիկոսէն մինչև ի Ղազար կաթողիկոսն հազիւ երեք աշարս գաւազանացն, որոյ զաշխատանսն Տէր ի փառս իւր համարեսցէ. և զհոգի նորին ընդ սրբոց հայրապետացն դասեսցէ և ի լոյս երեսաց իւրոց հանգուսցէ. ամէն։

---

Ապա ի ՌՄԺԲ թուոջս մերում և ի մարտի ԻԱ. մինչ վերոյիշեցեալ բազմաշխատ Հայրապետն ի Տէր փոխեցաւ, և ի սոյն թուոջս ի յԱպրիլի ամսոյ Ի ուռ՞ ընտրութեամբ հոգւոյն Աստուծոյ յաջորդեաց զտեղի սիրածնի և բարեբջանկի հօր իւրոյ և Նստաւ Հայրապետ ի սրբոյ Աթոռոջս Էջմիածնի Տէր Սիմէօն առատասիրտ՝ գիտնաշատ և աստուածաբան վարդապետն և արհի եպիսկոպոսն Երևանցի (որ էր բնիկ միաբան և մեծավաստակ աշխատաւոր և հոգսակիր զաւակ սրբոյ Աթոռոյս։ Նա և յատուկ և ձեռնասուն աշակերտ նոյնոյ Յակոբայ հոգելոյս հայրապետին)։ Ի յամի դժնէացեալում ժամանակոջս և յամենայն անտիրացեալումս երկրոջ. յորում նորանոր և արժանի գրեցման եղելութիւնք իսկ շատ պատահէին, և մանաւանդ զաշխատանս ըստ հոգւոյ հօրն իւրոյ ոչ պատշաճ տեսանելով թողուլ անկատարս. վասն որոյ հարկ եդ ի վերայ անձինս թշուառի և պարսաւակոծ գրչիս Ղունկիանոսի ծառայիս և ըստ յամենայնի տգիտիս գրել զհարկաւոր եղելութիւնսն 'ի շարս գաւազան ի գրքոյս հասուցանել ի ժամանակս իւր։ Զոր և յանձն առեալ յօժարութեամբ գրեցի իսկ որք հետևելին այսուհետև։ Ուրեմն՝ որք ընթեռնուքդ և օգտիքդ ի սմանէ, ընդ երկուց

հեղինակաց զրոցս՝ յիշեսջիք և զվերոյի-շեալ Սիմէօն կաթուղիկոսն սրբազան և ծայ-րագոյն պատրիարքն ամենայն Հայոց և սըր-բոյ Էջմիածնի, հանդերձ կրկնակի ծնողիւքն ի Քրիստոս Աստուածն մեր և ի գթութիւնս և յառատ ողորմութիւնս Նորին՝ ի կրկնա-կի գալստեանն իւրում։ Եւ յուսկ յետոյ զիս եբրև երորդ հեղինակս զՂունկիանոս ապաշնորհ գրիչս ի մաքուր և յերկնաթռիչ յաղօթս ձեր. զի դուք և մեք միշեցման արժանի լիցուք ի Քրիստոսէ, Ամէն։

3. Թթ 4. Յիշեա Տէր ողորմութեամբ քով զՑակոբ վարդապետ (ապա կնիք) բաղ-մամեղ Շամախեցի, զստացողն սորին յա-ւուր մեծի գալստեան արքայութեան քոյ, հանդերձ կրկնակեօք ծնողօք իւրովք և ա-րիւնակցօք, ընդ որս և զմեզ. և քեզ փառք յաւիտեանս ամէն։

Ցակոբ Շամախեցու իսկական ձեռագիրն է, ինչպէս եւ հետեւեալը։

4. Թթ 92 բ (կնիք) Շամախեցի ստա-ցող սորին ի ՌՃՂ և Ա=1742 թուին։

## 27.

## Գ Ի Ր Ք  Խ Ո Ս Տ Ո Վ Ա Ն Ա Կ Ա Ն

ՄԵԾՈՒԹԻՒՆ 34×21 սմ։—ԿԱԶՄ նոր խաւաքարտ. մէջքը կաշեպատ, որի վրան ոսկեզօծ տառերով գրքի անունն է դրօշմուած։—ՎԻՃԱԿ լաւ. ճղուած թեր-թերը նոր կպցրած, էջ 13 վերեւի կող-մից վերան նոր թուղթ կպցրած եւ գը-րուած։—ՆԻՒԹ թուղթ կապոյտ, բարակ պինդ եւ անհարթ։—ԹԵՐԹ 132։—ԴԱ-ՏԱՐԿ մի թերթ սկզբից եւ 10 վերջից նոր սպիտակ թուղթ։—ՏՈՂ 29։—ԳԻՐ նոտրագիր միասին 27,7×14 սմ։—ԹՈՒԱ-ԿԱՆ 1798։—ՏԵՂ Աստրախան։

### Մատեանս է Գիրք Խոստովանական անուանեալ

Ճանապարհ փրկութեան կամ աստուած-պաշտական ջերմեռանդ խոկմունք զանա-զանք. ի յորս պարունակին մասունք աստուա-ծաբանականք և բարոյականք՝ հարկաւորք հասարակաց գիտութեան։ Շարադրեալ Ֆէօ-դօր Ալեքսանդրովէչ յԷմինայ հանգուցելոյ ի տէր։ Եւ այժմ թարգմանեալ Ցարու-թիւն Դաւթեան Դելեաննեան Ջուղայեցւ-ւոյ, յամի Տեառն 1798-ին. Աստրախան։

1. էջ 5—10 «Համառօտ կեանք վա-րուց շարադրողի գրոյս»։ Հեղինակ սոյն և զայլ բազում մատենից (որոց անուանքն և ամէն ցուցանին) պարոն Էմինն

2. էջ 11—32 «Նախադեկութիւն յօ-րինողի գրոյս առ բարեմիտ ընթերցողս։ Այժմ այնքան բազում են յայժ յաշխարհի չարանիւթ կենցաղավարութիւն...»։

3. էջ 3. Ցանկ գլխոց պարունակելոց բանից այսմ մատենի։

4. էջ 33—62 Գլ. (խոկումն առաջ-ներորդ) Ա. Թէ որքան հարկաւորէ մարդոյ զղջալ և խոստովանիլ զմեղս իւր։

5. էջ 62—87 Գլ. (խոկումն) Բ. Մեղքն կուրացուցանէ զմարդ, մինչ զի ոչ տեսա-նիցէ զչարիսն իւր գործեցեալ, և ոչ իմա-նայ թէ որքան զօկանս հասուցանէ նզքօք Աստուծոյ։

6. էջ 88—114 Գլ. (խոկումն) Գ. Թէ որպէս սաստկապէս պատժէ Աստուած զմե-ղաւորս և որպէսի վնասք լինիցին մարդոյ մեղաւորի։

7. էջ 115—149 Գլ. (խոկումն) Դ. Հոգին ի ձեռն մեղաց կորուսանէ զառաջին պայծառութիւն իւր, և լինի գարշելի և զարհուրելի, և թէ որպէսի հնարս ներ-շընչէ ի նա Աստուած, զի սրբեսցէ զմեզ ի մեղաց։

8. էջ 150—190 Գլ. (և խոկումն) Ե. Ցաղագս մոլորութեան, յորում կան մար-դիկ, և անմտաբար ի զուր յուսան ողորմու-թեան Աստուծոյ, կարծելով թէ դիւրաբար փրկիլ կարեն։

9. էջ 191—217 Գլ. (խոկումն) Ձ. Ապաշաւումն և դառնալն ի մեղաց՝ կայանայ ի խորհուրդ խոստովանութեան և թէ որպէս վայել է, զի խոստովանք մեր լինիցին կատարեալ:

10 էջ 218—251 Գլ. (խոկումն) Է. Յաղագս մահուան. և թէ որպիսի փորձութիւնք, տառապանք և յուսահատութիւնք պատահին մարդոյ մեղաւորի ի վաղճանի աւուր նորին:

11. էջ 252—264 Գլ. (և խոկումն) Ը. Թէ որքան սարսափելի է մարդոյ մեղաւորի դատաստանք Տեառն:

## 28.

## ԲԱՌԱՐԱՆ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 33×21 սմ:—ԿԱԶՄ խաւաքարտ, մէջքը եւ ծայրերը կաշեպատ:—ՎԻՃԱԿ լաւ:—ՆԻՒԹ թուղթ, կապոյտ պինդ եւ անհարթ:—ԹԵՐԹ 151:

Մատեանս է Բառարան

Լատիներէն, ռուսերէն և հայերէն. ամեն երես մէկ-երկու բառ, շատ տեղ միայն լատիներէն:

## 29.

## ՆԱՐԵԿԱՑԻ ԵՒ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 35×22 սմ:—ԿԱԶՄ խաւաքարտ, թղթապատ, մէջքը կաշեպատ, վրան կան ոսկեզօծ տառերով «մեկնութիւն Յովհաննու աւետարանի»:—ՎԻՃԱԿ լաւ պահուած: Սկզբից երկու թերթ է կտրուած:—ՆԻՒԹ նոր թուղթ, գործարանի ռուսերէն կնքադրոշմով:—ԹԵՐԹ 103:—ԴԱՏԱՐԿ մի սկզբից եւ 3 վերջից:—ՏՈՂ 42:—ԳԻՐ շաղագիր միասին 27×16 սմ:—ԹՈՒԱԿԱՆ 1854:—ԳՐԻՉ Ներսէս դպիր Տէր-Բարսեղեան Աբովեանց օձնեցի:—ՏԵՂ Նոր-Նախիջեւան:—ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ թթ 103 ա:—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ թթ 1 ա. «Ներս. հոգեւ. դպրանոցի» կնքադրոշմը:

Մատեանս է Մեկնութիւն Աւետարանի

1. թերթ 1—4 «Երանելոյն Անանիայի վարդապետի ի խորհուրդ Յովհանու մարգարէի: Յաղագս Յովհաննու հակիրճ և համառօտ բանիւք...»

2. թթ 5ա—102 բ «Համառօտ Մեկնութիւն աւետարանին Յովհաննու նորին Գրիգորի Տաթեւացւոյ աշակերտի Յովհաննու Որոտնեցւոյ, հաւաքեալ ի հին և ի նոր թարգմանչաց ի խնդրոյ համաշունչ աշակերտացն:

Երկու հատորի բաժանուած ա թթ 5ա—44ա և բ թթ 44 բ—102 բ:

1. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ էջ 103.

Ի Կայսերութեան Մեծի ինքնակալին Ամենայն Ռուսաց Նիկողայոսի Պաւլովիչի Առաջնոյ, 'ի հայրապետութեան Տէր Ներսէսի Ե-դի Աշտարակեցւոյ աստուածընտիր Կաթողիկոսի ամենայն Հայոց, Ես Ներսէս ծառայ Քրիստոսի շրջեցայ ընդ հոգևոր հօր իմոյ Սարգիս ծայրագոյն վարդապետի Ջալալեանց գործով քարտուղարութեան սկսեալ 'ի ծովէն Պոնտոսի ցծովն Կասպից յայսկոյս և յայնկոյս մեծի լերինն Կովկասու և 'ի բոլոր Ռուսաստան ուրանօր գտանէին Հայք և եկեղեցիք Հայոց, հաշիւք քննութիւնք հոգևորական գործոց պատկանելոց հնդեցունց Վիճակաց: Ի սոյն միջոցի հանդիպեալ եմ 'ի Նոր-Նախիջևան միակ և երևելի քաղաք Հայոց որ 'ի Ռուսաստան առ Դօն գետով, և գտեալ անդանօր զայս պատուական Մեկնութիւն սրբոյ աւետարանին Յովհաննու առաքեալ սրբոյ Հօր մերոյ

Գրիգոր Տաթեւացւոյ. վասն որոյ մեծաւ ուրախութեամբ արտագրեցի զայս 'ի վայելս իմ, բայց միջոցն իմ գոլով սուղ արագեցայ 'ի գրելն: Ուստի խնդրեմ յետ ընթեռնելոյ և վայելելոյ զայս գանձ պատուական յիշելոյ արժանի արասջիք զդաստիարակն իմ զՍարգիս վարդապետ, Ասպետն Ջալալեանց. զհայրն իմ Բարսեղ քահանայն Արովեանց օձնեցի, և զմայրնիմ Հռիփսիմէ Սանասարեանց. յուսկ յետոյ և զիս ըզ Ներսէս դպիրս Տէր Բարսեղեանց Արովեանց օձնեցի: յԱմի Ազգական ՌՅԳ և Փրկչին 1854 'ի 27 յունուարի: 'Ի Նոր-Նախիջևան:

Ւչխս Ներքև, այլ գրչով:

Վերոնշանակեալ Մեկնութեան գիրքս զայս կազմեցաւ 'ի ձեռն նուաստ ծառայի, և պաշտօնեայ սուրբ Լուսաւորիչ աւագ եկեղեցւոյ Պօղոս քահանայի Խոճեանց, 'ի 1854 և փետրվարի 9. 'ի Նոր-Նախջևան:

## 30

## ԲԻՒԶԱՆԴ ԵՒ ՄԻՔԱՅԷԼ ԱՍՈՐԻ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 26,8×20,5 սմ.—ԿԱԶՄ նոր խաւաքարտ, մէջքը կաշեպատ. վըրան ոսկեզօծ տառերով դրոշմուած «Փաւստոս Բիւզանդ»:--ՎԻՃԱԿ լաւ պահուած. մէկ ամբողջ մին էլ ճղուած կէս թերթ Միքայէլ Ասորուց կազմուած չէ: —ՆԻՒԹ թուղթ պինդ եւ յղկուած:—ԹԵՐԹ 61+2. հինգ հինգ թերթ եւս սկզբից եւ վերջից նոր կազմելուս կցուած: —ՏՈՂ 33:—ԳԻՐ հին նոտրագիր. երկսիւն, իւրաքանչիւրը 20,5×6,7 սմ. վերնագրները տեղ տեղ բոլորագիր:—ԽՈՐԱԳԻՐ, ՎԵՐՆԱԳԻՐ և ՍԿԶԲՆԱԳԻՐ երբեմն թռչնագրով եւ դիմագրով, բոլորն էլ կարմիր:—Մանր մունր ԽՈՐԱՆԱԶԱՐԴ էջ 23,59:—ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ գոյնզգոյն մեծ եւ փոքր:—ԹՈՒԱԿԱՆ ՌՀԳ=1624:—ՏԵՂ Տարաշամքի Նախավկայի վանքը՞:—ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ էջ 16—17. 22 եւ 23:—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ էջ 1 կայ «№ 880». այստեղ եւ էջ 122 «Ներս. հոգեւոր դպրանոց»ի կնքադրոշմը:—

### Մատեանս է Միքայէլ Ասորի և Բիւզանդ:

### Ա.

1. էջ 1—22 Միքայէլ Ասորի: Յաղագս քահանայութեան և ցուցականաց:

Շատ նման է 1871-ին Երուսաղէմում Միքայէլ Ասորւ ժամանակագրութեան հետ տպագրուածին, բայց փոքր ինչ աւելի ընդարձակ: Թէ տարբերութիւնը տեսնելու և թէ ձեռագրիս վերջին հատուածը մասամբ տպագրուածի մէջ չգտնելուս համար կարեւոր ենք համարում նոյնն այստեղ յառաջ բերել:—

2. էջ 18—22 ՀԳ. Տէր Յովհաննէս մեծաքարու և յաղթասէր ամս ժը: ՀԳ. Տէր Կոստանդին յերորդ մանէ Հայոց ի գղեկէ Բարձր բերդոյ որ հայի հարաւով ի դաշտն Կիլիկեցւոյ և ի ծովն Անդրիանու կոչեցեալ, որդի առն արդարոյ և խաղաղականի Վահրամ կոչեցելոյ յորովայնէ ընտրեալ յաստիճան առաքելական 'ի հոգոյն և օրհնօք նորին սնեալ, և ըստ կարգի յամենայն գործս եկեղեցւոյ վարժեալ 'ի շնորհս քահանայութեան և յառաջնորդութիւն և յեպիսկոպոսութիւն տեսչութեան, և յամենայնի ընտիր գտեալ և հանդիսաւոր, վասն որոյ և ի կատարման հոգեւորական և մարմնաւորական հասակի, վկայութեամբն Աստուծոյ և մարդկան, մեծի գահու և աթոռոյ հայրապետութեանս Հայաստանեաց արժանաժառանգ լեալ ի շնորհէն և ի բնաւ լըմանէն եկեղեցւոյ բանադատեալ, ըստ որում և փորձն ցուցաւ, և արդիւնքն յայտնի արարին և միաբանեցաւ ընդ նմա շնորհն: Եւ է այժմ ԻԵ. ամ հայրապետութեան նորա ի դղեակն աստուածապահ Հռոմկլայ կոչեցեալ, խաղաղասէր բարուք և անարատ վարուք առ ամենեսեան խաղաղութիւն կալեալ վկայութիւն բարի. և զըրուատիս յարտաքնոցն կալեալ այցելու որբոց, և այրեաց խնամածու, և գերելոց անխընայ ծախիչ, դարձուցիչ և զարդարիչ հայ-

րնի գԹովք ղամենեքումբ փարելով և առաւել առ ամենայն կարօտեալս ողորմութեամբ և եկեղեցեաց բաղմաց լցուցիչ յարեւել և ի յայլ բարիսն, և ղայս մատեան ի գանձս եկեղեցւոյ, և ետ բաղձանօք Թարգմանել զսա յասորւոյ ի հայս՝ պիտանի և շահաւէտ բուրաստան, լայն և երկայն իմաստիւք լցեալ, և կարճառօտ բանիւք բովանդակեալ. որ ի սուղ ժամանակս կարող է ղպատահեալսն 'ի վերայ կացուցանել հին և նոր դիպուածոց։ Այլ և հիմն հաստ և անշարժ աշտարակ իսկ է հայաղաւան հաւատոյ և ուղղափառ խոստովանութեանս վկայս բաղումս ցուցանելով յաղգաց ճշմարիտ ուղղեփնացութեան հիմամբ աստուածական և առաքելագիր կայիւք ամրացեալ։ Այլ և յոլովք տարակոյսք և հանկոյցք լուծանուին 'ի սմա և չէ ինչ զարմանալ ընդ նորալուր և անծանօթ բանսն որ գտանին ի սմա։ Քանզի Ասորիք բնակութեամբ գաւառաց և բառիւ լեզուաց մօտաւորք են միշտ Հրէիցն լեալ քան ղամենայն ազգերդ և իդէպ է նոցա, մանաւանդ ծանօթ գոլ հնոյ կտակին քան այլոց։ Նաև որ զայս մատեանս շարայարեալ է Յունաց և Եգիպտացւոց և ի քաղդէացւոց, դիւանաց և ի դպրոցաց է հաւաքեալ։ Վասն որոյ առաւել սիրելի և պիտանի և հաւատալի է, և վարձ բաղումս կալցի առաջի Աստուծոյ, և երախտիս յեկեղեցիս ուղղափառաց վաստակասէր այրն բարեփառ տէր Միխայէլ, զի յոլով սէր և գութ եբեր նա ունել առ ազգս մեր ի գրոց աստի։ Արդ ի յամի Ը երորդի քառասուն երորդի երկերիւր երրորդի Ռ երորդի Թվականութեան անժամանակ որդւոյն Աստուծոյ գալստեանն ի ՈՂԷ Թվականութեանս հայոց Թարգմանեցաւ գիրքս այս յասորոց ի հայս ի հայրապետութեան հայոց տեառն Կոստընդեայ, և ի Թագաւորութեան հայոց Հեթմոյ քրիստոսապսակի և զգուշակենցաղ Թագուհւոյն իւրոյ Զապէլի, դստեր Լևոնի արքայի, ըստ Աստուծոյ բաղաքավարելոյն հնգից եկեղոց նոցա ղաւակաց ծիրանածնաց, երկուց ուստերաց և երից դստերաց, որոց անուանքն. Լևոն, Թորոս անուամբ հաւուն իւրեանց, որոց հովանի լիցի ամենակալ բաղուկն հայրենի, ածելով 'ի գահ հայրենի արքայութեան եղերօք Հայաստանեայց։ Յայսըմ ամի կենդանի էր կորովամիտ և աջողեալն ի բարիս արքահայր նոցա պարոն Կոստանդին և բեկրեալ այլովք դստերօք չորիւք։ Տէր բարսեղ տէրն Դրազարկոնի, և պարոն Սմբատ սպարապետն Հայոց, և պարոն Աւշինն տէրն Կիւռիկոսոյ, և պարոն Լևոն որոց զօրանալ լիցի ըստ հաճոյ Աստուծոյ, հաճել արիութեամբ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ Եւ էր պատրիարք Ասորւոց ուղղափառաց Մօրիկն ատէ Անտիոքու, որ զօրինակն շնորհեաց, և փոխեցաւ 'ի ձեռն Շաւխոյ սրբասնեալ քահանայի, վարժելոյ ի հանճար բժշկական արուեստի, որոյ վարձատու լիցի Տէր Յիսուս 'ի շնորհս իւր։

Այլ և մեք իսկ տառապեալ ոգի Վարդան վարդապետ, որ ըստ մերում կարի սատարեցաք 'ի գիրքս յայս։ Ունիմք հաւատ և յոյս 'ի գԹութիւն Աստուծոյ, և յետ նորա ի բարեխօսութիւն և յաղօթս ծառայից նորա առ մեզ դարձուցանել զեբեսս ողորմութեան Քրիստոսի 'ի վերայ անկրշնելի պարտուց մերոց անթուապատիկ բիւրոց տաղանդաց, քանզի այսու ակնկալութեամբ ընդոստուցաք ղմեզ մոռանալ զօրնընդակից և զընդանացեալս մեր տկարութիւն մարմնոյ, և զբազմազան տրտմութիւն և զցնորս հոգւոց խորհրդոց, վասն անշահաւոր դարաշրջութեանս։ Այլ յաղագս Թշուառացուցիչ ժամանակիս զոր ածեն չարիքն յաճեալ, քանզի սակաւ քան զչափ մեղացն մերոց, արբոյց մեզ Տէր արտասուս և նուաղ քան զյորդաբուղխ ախտից մերոց ջրհեղեղս խաղացին առ մեզ վտակք արեան, և ըստ գաղանական գնացիցն մերոց՝ յագեցան գաղանք 'ի մարմնոցն մերոց։ Քանզի շնչեաց բարկութիւն Տեառն ճաճուն արևելեան հիւսիսայնու օտար և անընդել ազգին Թորգոմայ ցանդազարմին Հագարու։ Եւ հողմով անօրէնութեան մերոյ Աստուած զնոսա մինչև առ մեզ՝ նախատես մարգարէութեամբ, և Նախնի սուրբ հօրն մերոյ Ներսիսի արտասուապատում ողբոցն, զոր լալով նախաձայնեաց զկորուստ հոգևոր երկանց իւրոց ծննդոց զորս ինչ կրեցաքն յազգէն նետողաց, զորոց զանուանս կոչէ սուր, և Թեթև։ Զի Թերևս Թաթարն սուր և Թեթև ասի ըստ լծորդացն փոփոխման, և կամ

